



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Յ. ԿԱՐԱՊԵՆՅ . . . . . Կիսամանապարհին...
- 12.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Marche Nuptiale
- 15.- Լ. ԱՅԱՏԱ . . . . . Մարդը՝ որ ինքն իր դեմ պատերազմեցաւ  
(հայացուց՝ Ս. Կիրակոսեան)
- 25.- ՎԱՐԱՆ ՈՒԺ . . . . . Պոռնիկը՝ վերջին այցելուին
- 28.- Յ. ՕՇԱԿԱՆ . . . . . Սահակ Պարզեւեան
- 39.- Է. ՍԱՐԱՅԵԱՆ . . . . . Դարձիդ...
- 40.- Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Խմբերգերի ժամանակը
- 47.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . . Ես մի ծառ եմ ծիրանի
- 56.- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ . . . . . Ա՛ցցնո՛ղ հարիւրամեակի  
հայ բատերական գրականութեան  
կշիռը ճշդելու փորձ մը
- 70.- Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ . . . . . Ժառանգութեան հոսքը...
- 76.- \* \* \* . . . . . Մշակութային լուրեր

# Բազմ

## ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՅՒ

ԲՆ. ՅԱՐՐ. ԲԻՐ 10 ՀՈԿԵՄԲԵՐ 1984 ՊԵՐՏԵՐ

Յ. ԿԱՐԱՊԵՆՑ



### ԿԻՍԱՃԱՆԱՊԱՐԿԻՆ...

Կարծես դարեր շարունակ այդ պահին էի սպասելիս եղել: Երկիրը դուրս է շարտել իր աղիքները եւ ժայռակոյտի վրայ հի- նուուրց օրերին կերտել այդ տունը, որը փաստօրէն տուն չէ, այլ՝ ամեւ պատերի ու տանիքների մի խոժոռ զանգուած, թա- տած՝ անտառապատ բարձունքի վրայ, իր դաժան մենութեան մէջ անհեթեթ, նոյնիսկ անհիւրընկալ, եթէ չլինէր Քրնեթիքըթի դուր- ներով շտալլ աշունը: Ես երբեք այդ տեղը չէի գտնի, եթէ ճամ- քառ կորցրած չլինէի: Ղեկը ինքնաշարժին յանձնած եւ ներքուստ դուրս պատահարից, ընկել էի նահանգի հիւսիս-արեւմտեան բլուր- ների ծոցը՝ հետզհետէ զգալով քաղաքակրթութեան փախուստը: Գիւղական ուրուպտոյտ ճանապարհի մի կէտում էր, որ աչքիս զարկառ փայտէ պղտոր մի ցուցանակ, սլաքածեւ, վրան գրուած «Հայոց մշակութային թանգարան»: Եւղեցի ինքնաշարժի ընթաց- քը եւ բռնեցի մացառապատ հողէ կածանը, որը գարձաւ ծառերի փապուղի՝ մինչեւ որ կանգնեցի ժայռի առջեւ: Գնալիք այլ տեղ չկար: Կարճրամորթների Ալլոնկուին ցեղախմբի անհետացումից

9934-850

1984

169-2000

20230-ԱԳ digitised by A.R.A.R.@

ՎՋ Գ Գ Գ Գ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Յ. ԿԱՐԱՊԵՆՑ . . . . . Կիսամանապարհին...
- 12.- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . . Marche Nuptiale
- 15.- Է. ԱՅԱՏԱ . . . . . Մարդը՝ որ ինքն իր դէմ պատերազմեցաւ  
(հայացուց՝ Ա. Կիրակոսեան)
- 25.- ՎԱՐԱՆ ՈՒՓ . . . . . Պռոնիկը՝ վերջին այցելուին
- 28.- Յ. ՕՇԱԿԱՆ . . . . . Սահակ Պարգեւեան
- 39.- Է. ՍԱՐԱՃԵԱՆ . . . . . Դարձիկ...
- 40.- Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ . . . . . Խմբերգերի ժամանակը
- 47.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . . Ես մի ծառ եմ ծիրանի
- 56.- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ . . . . . Ա՛ցնող հարիւրամեակի  
հայ թատերական գրականութեան  
կշիռը ճշդելու փորձ մը
- 70.- Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ . . . . . Ժառանգութեան հոսքը...
- 76.- \* \* \* . . . . . Մշակութային լուրեր

# Բազմ

ԱՐՄԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒՆԵԱՏԻ

ԲՆ. ՆԱԲԻ ԲԵՐԵՆԻ - ՆԱԲԵՐԵՆԻ 1984

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ



ԿՐՍԱՃԱՆԱԳԱՐՅԻՆ...

Կարծես դարեր շարունակ այդ պահին էի սպասելիս եղել: Երկիրը դուրս է շարժել իր աղիքները եւ ժայռակոյտի վրայ հիւսաւուրց օրերին կերտել այդ աւանը, որը փաստօրէն տուն չէ, այլ՝ տնիւ պատերի ու տանիքների մի խոժոռ զանգուած, Բաւասմ՝ անտառապատ բարձունքի վրայ, իր գագաթին ճենաթեան ճէջաներով շոայլ աշունք: Ես երբեք այդ տեղը չէի գտնի՝ եթէ Եւսթաս կորցրած չլինէի: Ղեկը ինքնաշարժին յանձնած եւ ներքառաքու գոհ պատահարից, բնկել էի նահանգի հիւսիսարեւմտեան գրողների ծոցը՝ հետզհետէ զգալով քաղաքակրթութեան փոփոխութիւնը: Գիւղական ուրապտոյտ ճանապարհի մի կէտում էր այդ աշտի գարկառ փայտէ պղտոր մի ցուցանակ, որտեղտեւ. վրան գրուած «Հայոց մշակութային թանգարան»: Եւրօպայի ինքնաշարժի քանակաքը եւ թանկի մացառապատ հողի կամուրջ այդ քաղաքու ճանապարհի փապուղի՝ մինչեւ որ կանգնեցի ճաշփ սառնու: Կեսօրը այ տուն չկար: Կարճամտրթներէ Արդարեւին փորձեմքի տեւտապարտից

5/1/84

2/2

ի վեր թերեւս եւ երկրորդ մարդն էի, որ ոտք է դնում երբեմնի սրբազան այդ վայրում: Ո՛ւր որ է անտառի մթին խորշերից նիզակների տարափ պիտի իջնի վրաս: Փոխարէն տան առջեւ մի ստուեր գոյացաւ, որը անհասկանալի բանականութիւններ արձակեց, ապա լեռնային այծի արագութեամբ ցատկոտելով վայր իջաւ քարէ աստիճաններից, ծառացաւ առջեւս:

— Ի՞նչ գործ ունես, — աղաղակեց անդրերէն:

— Դուք հա՞յ էք, — ասացի:

— Հա՛յ, հա՛յ, — ճշաց հայերէն եւ թուխ ամպերի տակից շող իջաւ աչքերին, կզակը զսպանակի պէս մի քանի անգամ վեր ու վար դնաց, ձայն դուրս չեկաւ, ապա խօսեց անպերէն յորդած գետի պէս, որից բան չհասկացայ, յետոյ վարժուեցի, երբ աստիճանարար գտայ իր հնչիւնների բանալին, որը զայիս էր Բոստոնի շրջանից: Զարմանալին նրա դէմքի արտայայտութիւնն էր՝ յարատեւ ծիծաղի ու սարսափի խառնուրդ, չսպիրուած, երկար, խանձուած երես, որի վրայ տիրակալնը սեւ ածուխի կրակներն էին, խենթութեան ու թանձրացած վշտի սահմաններում:

— Վեր գնանք, քեզ մեղրով թէ՛յ տամ: Իմ փեթակից է, — ասաց նա եւ այլեւս երբեք հայերէնին չվերադարձաւ: Երբ ձեռքս սեղմեց, զդացի իր ոսկրուտ մատների կենդանական ուժը: Պիկասոյի որոշ դիմանկարների պէս ո՛ր անկիւնից որ նայում էի նրբան ուղղադէմ ու կիսադէմ մերուած էին իրար: Տախտակի պէս նիհար էր, այնքան նիհար, որ աչքիս բարձրահասակ էր երեւում: — Անունս Մարտիրոս է, սակայն այստեղ ինձ Մարթի են կոչում:

Փոռնթաթախ մարդ էր Մարտիրոսը, հնոտիների մէջ կորած: Մազ ու մկան խառնուել էին իրար, ամբողջովին ջիզ ու շարժում: Սօսում էր ինձ հետ, ինքն իր հետ՝ միտամանակ ահռելի կենտրոնացումով քանդելով մի կիսաչոր կաղնիի արմատները: Փոթորիկը տապալել էր ծառը: Մառը ընկել էր տան առջեւի բոլորակի վրայ՝ տակաւին կառչած մնալով հողին՝ հազար ու մի տեսանելի ու անտեսանելի արմատներով: Ես բացակայ էի, Մարտիրոսի համար ես բացակայ պիտի մնայի այս ու հետագայ բոլոր պահերին: Նա բնաւ չհետաքրքրուեց իմ ինքնութեամբ, ո՞վ էի, ի՞նչ գործ ունէի, որտեղի՞ց էի եկել, ո՞ւր պիտի գնայի: Նա եղունգներով փորում էր հողը, քարով ջարդում օձանման արմատները, ապա ըմբշամարտի մտնում ծառի ահագին բունի հետ: Այդ բոլորի մէջ ինչ-որ կարմիր կիրք կար, օրհասական գուպարի հեշտանք, ու նաեւ, բացարձակ խելագարութիւն: Ուզեցի մեկնել, բայց չկարողացայ: Մարտիրոսը կաշկանդել էր ինձ: Ես իմ կեանքի հոսանքից դուրս էի եկել, ընկել մի այլ հոսանքի մէջ, որի կշռոյթը միանգամայն խորթ լինելով հանդերձ՝ զերծ չէր մութ հրապոյրից: Ու մտածել, որ մի-երկու ժամ առաջ ներկայ էի եղել մօտակայ Թանգլիուդի Բախին նուիրուած երաժշտական փառատօնին, ուր փորձ էր արուել մարդուն մօտեցնելու աստուածութեան: Նայում եմ Մարտիրոսի պրկուած մէջքին ու պողպատեայ բազուկներին եւ մտածում, որ դուցէ նա կանխահաս ճերմա-

կած պատանի է, դուցէ յիսուն տարեկան, թերեւս հարիւր, թերեւս հարիւր յիսուն տարեկան: Գուցէ նա միշտ եղել է: Օգը յադեցած է շրջակայ ճահճուտների նեխուած հոտով, լսում եմ տերեւների տարրալուծման հոնդիւնը, մահը ներկայ է ծառախիտ այս բլուրներում, քարերի տակ, կաւանման այս հողի մէջ, որի հետ պայքարի է մտել այս մարդը: Բայց ահա կաղնին ազատուել է իր հնամեայ արմատներից: Մարտիրոսը ուսեց կոճղը, տարաւ նետեց կացնահարուած այլ ծառերի դէզի վրայ այնպիսի փութկոտութեամբ, որ կարծես աշխարհի ամէնից հրատապ արարքը լինէր, ապա՝ քարայծի նոյն թեթեւութեամբ վեր մագլցեց աստիճանները, կանգնեց ժայռի պտուղին եւ կողկանձելու պէս ծիծաղեց:

- Ո՞ւր մնացիր:
- Ես այստեղ եմ, — պատասխանեցի, այլ իսօք չգտնելով:
- Դու ինչից ես վախենում:
- Ես ոչնչից չեմ վախենում:
- Եթէ չես վախենում, ինչո՞ւ վեր չես գալիս:

Նա կաւէ երկու գաւաթ ունէր, շերտփով կաթնայից եռացող ջուր լեցրեց գաւաթների մէջ, թէյի պարկիկներ նետեց ջրի մէջ, երեք գդալ մեղր ածեց թէյին, խառնեց, մէկը ինձ, միւսը իր համար:

- Ամբողջ օրը մեղր եմ ուտում, — ասաց Մարտիրոսը:
- Միայն մե՞ղր:
- Նաեւ հաց, սոխ, սխտոր ու բանջարեղէն: Բանջարանոց ունեմ: Մի ամբողջ բանակ կարող եմ կերակրել: Մեղուներն ինձ ճանաչում են:

- Ո՞ր մեղուները:
- Փեթակներին մեղուները:
- Սակայն թանգարանը, — ուղեցի իմանալ: Նստել էինք նախագաւիթի նմանող մի երկար նրբանցքի մուտքին, ամէն ինչ կիսաւեր, դանազան մեծութեան տախտակների կուտակումներ այս ու այն կողմ, աղիւս, քար, կիր ու հող ու դամերի ցուցահանդէս:
- Այս ամբողջը թանգարանն է: Թէյդ խմի՛ր, յետոյ կը տեսնես, — պատասխանեց Մարտիրոսը՝ հենց ծունկի վրայ սղօցելով տախտակի մի կտոր: Ես չկարողացայ բռնել նրա հայեացքը ո՛չ այս, ոչ էլ հետագայ վայրկեաններին: Դիցարանական թրուշունի նրա սուր դէմքը յարատեւ շարժման մէջ էր, անընդհատ կտցահարելով միջոցը: Ուշ յետմիջօրէի լոյսը խրուել էր նրա գրէտին, ամբողջովին մացառ: Նրա դէմքը դարձել էր ցցուն քարաէս, որի վրայ կարելի էր դարբերի աշխարհագրութիւնը շօշափել, մի պահ ետք սակայն չքացան սրճագոյն խորշոմները, նա վերագտաւ մարգագետինների թարմութիւնը:

- Մենա՞կ ես ապրում, — կրկին ուղեցի իմանալ:
- Մենակ:
- Հարազատներ, բնտանիք չունե՞ս:
- Ունեմ: Երուել են ամէն տեղ:

— Զաւակ ունե՞ս :

— Դու ինձ խանգարում ես, — բարկացաւ Մարտիրոսը, ոտքի ելաւ, բահը ուսեց, առաջ շարժուեց, — ահագին գործ ունեմ, երբ գիշերը դայ՝ ամէն բան կը պատմեմ :

— Բայց ես ուշանում եմ, պիտի մեկնեմ, — ասացի :

— Դու գիշերը ալստեղ պիտի մնաս, թանգարանը քոնն է, միայն թէ ինձ չխանդարես, ահագին գործ ունեմ :

Հայեացքով հետեւեցի նրան: Նա հիմա բարձրացել է ելաւորանը եւ մուրճով դամում է դիմացի պատի քառակուսի տախտակները: Մուրճի հարուածները արձագանդում են մօտակայ բարձունքներում եւ թափում Հուսաթոնիկ գետի ջրերում: Գետը այստեղից լճի է նմանում: Վերջալոյսի արեւը է՛լ աւելի է վառել անտառի ճրագները, վերջին ոսկէ հողեհը նախքան Նոյնմբեր: Տունը ծերացած աղաւնու էր նմանում, նստել էր, տեղից չշարժուելու վճռականութեամբ: Սովորական իմաստով սենեակներ չէին, այլ՝ ընդարձակ դամբարանների մի համալիր, կորսաքամակ մուտքերով, միմեանց աւրնչուած, նոյնիսկ տրամաբանական, երբ դրսից այլանդակութիւն էին ներկայացնում: Գմբէթաւոր առաստաղի լուսամուտներից լոյսի հաստ գերաններ էին իջել յատակին, բեկուել ու արտացոլուել սպիտակ ներկուած գրադարակների վրայ, որոնց քամակին դիտարական կարգապահութեամբ դասաւորուել էին գրքեր, հազարաւոր գրքեր, հայերէն գրքեր, հին ու նոր գրքեր, Կալիկաթա, Վենետիկ, Պոլիս ու Երուսաղէմ եւ դեռ Վիեննա, Նոր Զուլա, Բոստօն, Բէյրութ ու Երեւան: Ամբողջ աշխարհը կուչ էր եկել այդ սրահում, երբեմն քրքրուած, խոնարհած, երբեմն դեռ երեսը չբացած, խառնիխուռն ու պատահական, Քրանկախտի մնացորդներ կողքին Փաւստոս Բիւզանդ, Գրիգոր Մագիստրոս, Մարգիս Պիծակ, ձեռնարկ շերամապահութեան: Ինձ թւում էր, թէ ամէն անկիւնից ինձ են յառել Մարտիրոսի աչքերը: Յաջորդ սրահը նոյնքան ընդարձակ էր, ա՛յն տարբերութեամբ սակայն, որ այստեղ տիրում էր կատարեալ խառնիճազանճ: Արձաններ ու քանդակներ, սկիւզներ ու բուրվառներ, թասեր ու կահուածքներ, գէնջ ու դրահ, գունատուած դրօշակներ, եկեղեցիների մանրակերտուածքներ, մետաղեայ ու յախճապակեայ մասունքներ, թել ու քիթ կորցրած կիսանդրիներ, չինական շան գլուխ, քարէ դարի պիտոյքներ, զանազան կահոյքներ, իսկականի հետ կեղծը, բիւրեղեայ ջահեր ու մոմակալներ, որոնք ով գիտէ ո՛ր վաշխառուն է շինել Բրուքլինում կամ Հոնգ Կոնգում: Եարժուելու տեղ չկար: Պատմական բեկորների այս ողորմելիութեան մէջ դարերի խտացած ճիչը կար: Թէեւ սրահը օդասուն էր՝ շնորհիւ օդի բարեխառնման արդիական սարքերի, սակայն դժուարանում էի շնչել: Աջ անկիւնում Անահիտի նմանող արձանի մօտ կանգնած էին երկու վիթխարի խաչքարեր: Ինչպէ՞ս է կարողացել այդ ծանրութիւնը այստեղ բարձրացնել: Սրահի պատերը կմախքային վիճակում էին, սակայն առաստաղը պատրաստ էր, որից կախուած էին թեք լուսարձակներ: Համալիրը դուռ չուներ, Կամարակապ անցքերը միմեանց էին յաջորդում՝ ստեղծելով ընդհանուր



Հաղորդականութիւն: Այդ բոլորով հանդերձ ինչոր անկարելի մի բան կար, որը խեղդում էր ինձ: Յաջորդը ցուցադրարահն էր, որն այլևս անտանելի էր: Պատերի վրայ ազատ տեղ չէր մնացել: Հին ու նոր պատտանների, շրջանակների, իւղանկարների ու թերթերից փրցուած նկարների ու դեղնած լուսանկարների մի իրական քառս էր արշաւել այստեղ, ուր նոյնիսկ Այվազովսկու, Մախոխեանի, Էդգար Շահինի ու Աբշիլ Գորկու հաս ու կենս գործերը, թէկուզ եւ երկրորդական, չէին փրկում կացութիւնը: Յատակն անգամ ողողուած էր պէս-պէս պատտաններով, դեղուած պատահականօրէն ուր որ կարելի էր: Մարտիրոսի թանգարանը հայերէն Ս տառի յատակագծով էր կառուցուած: Պատկերասրահը պտնուտմ էր աջ ատամի ծայրում, որը հիւսիս էր նայում: Այստեղ գետահայեաց պատը ամբողջովին ապակի էր: Լոյսը խոժեւել էր ներս: Լոյսի աղբիւրը գիմացի հովիտն էր, որը վառ գոյների տօնահանգէս էր: Հմայուած դիտում էի վերջալոյսի վերջին շառագունած պարը, երբ յանկարծ մի ձեռք իջաւ ուսիս: Յետ դարձայ: Մարտիրոսն էր:

- Լսում ես, — ասաց նա, աչքերի դեղինի միջից:
- Ի՞նչը:
- Լուսթիւնը:
- Լուսթիւնը:
- Լուսթեան ձայնը:
- Լուսթեան ձայնը:
- Այ՛, լուսթեան ձայնը:
- Ոչ, ես որեւէ ձայն չեմ լսում:
- Ինչպե՞ս չես լսում:
- Քեզ չեմ հասկանում, Մարտիրոս:
- Աչքերդ փակի՛ր, շունչդ բռնի՛ր, պիտի լսես:
- Աչքերս փակեցի, շունչս բռնեցի: Միայն Մարտիրոսի շքնառութիւնը լսեցի:
- Լուսթիւնը լուսթիւն է, — ասացի, այլևս համոզուած, որ երկար մենութիւնը խաղեր է խաղացել Մարտիրոսի հետ:
- Ես ամբողջ օրը լսում եմ լուսթեան ձայնը, յատկապէս գիշերը, յատկապէս քնիս մէջ, — պնդեց նա:
- Էլ ի՞նչ ես լսում, — փորձեցի հասնել նրա ներքին յատակին:
- Լուսթեան ձայնը:
- Ես այդպիսի բան չեմ լսել կեանքումս:
- Որովհետեւ բթացել են զգայարաններդ, — ասաց նա եւ անյայտացաւ թանգարանի ընդերքում:

Ընթրիքի ժամանակ եւ ընթրիքից յետոյ շարունակ խօսեց Մարտիրոսը, ձայնը դիւր, գնդացիների արագութեամբ, խօսքերը պայթում էին նրա քիմքում, հարուածում դէմքս ու իր առանձնասենեակի առարկաները, շատ բան չէի հասկանում, փորձում էի կռահել իր իւրովի անպիւրէնի հնչիւնները, որոնք հրմշտում էին իրար, բանակում սովորած անպիւրէն էր՝ թրծուած երկու պատերազմների թռուտուններում: Բանջարեղէնի ապուրը համով էր

խոսյալիան հացով, ապա անխուսափելի թէյը երեք դալ մեղրով: Նա երեք բաժակ խմեց: Առանձնասենեակը ստոյիկիան մի խուց էր, մի սեղան, մի աթոռ, փայտէ մի մահճակալ: Միակ աթոռը ինձ վերապահեց, ինքը նստեց պտուղի դասարկ տուփերի վրայ: Էլեկտրական վառարանը միշտ վառ էր՝ վրան ջրի կաթսան եւ այլ ամաններ: Սեղանի գլխին կախուած էր Սերաստացի Մուրադի մեծագիր պատկերը՝ ոսկեգոյն շրջանակով: Գիմացի պատը անշարժացած պատմութիւն էր, անկազմակերպ դիմագծեր գիւտերական համազգեստներով՝ նկարուած եւրոպական ցամաքամասի անորոշ հրապարակներում, խոշոր երագուն աչքեր, որոնք տակաւին չգիտէին եղելութիւնը, նոյնիսկ հերոսական դիրքեր էին ընդունել որպէս ներկայութիւն պատմական օրերի: Լուսանկարների կողքին տեղ էին գտել նաեւ ոսկեգօծ վկայականներ՝ գոյնզգոյն ժապաւէտներով, շքանշան ու դրօշ, մասունքները այլ ժամանակների, այլ աշխարհի, երբ մարդկութիւնը տակաւին անմեղ էր:

Հիմա երբ նստած է Մարտիրոսը, փոքրացել է, թեւերը նիհարել, ձող են դարձել, կուրծքը փուլ է եկել: Ես նոյնիսկ զգում եմ նրա ոսկորների յոգնութիւնը: Նրա դէմքը է՛լ աւելի է երկարել, Կիսամութի մէջ տակաւին երեւում են նրա աչքերի մութ խոռոչները: Նրա ձայնաստիճանը մի ամբողջ ութեակ իջել է, դարձել թաւ, կարծես սառած թմբուկ լինի: Նիւթից նիւթ է ցատկում, իրազարձութիւնները խառնում, ներկան կապում անցեալին, անկարեւոր երեւութիւնները նոր կարեւորութիւն են ստանում, երէկուայ դէպքը չի յիշում, իսկ աւելի քան կէս դար առաջուայ միջանկեալ մի միջադէպ հոմերական տարածք է ստանում: Ես փորձում եմ միջամտել, չի լինում, նա ինձ չի լսում, ո՞վ է ասել, թէ հին գիւտերը չի մեռնում, այլ մոռացութեան մտանում:

— Գիտե՞ս ինչ, երիտասարդ, — յանկարծ զգաստանում է Մարտիրոսը, — ես սպասում եմ:

— Ո՞ւմն ես սպասում, — անակնկալի եմ գալիս, երբ կարծում էի, թէ նա այլեւս յոգնել է խօսելուց:

— Մի կնոջ:

— Մի կնոջ: Հապա ինչո՞ւ ինձ բան չես ասում: Ես էլ պինդ-պինդ նստել եմ, — փորձ եմ անում տեղից շարժուելու, երբ իջնում է իր հրահանգը:

- Նստի՛ր, երիտասարդ:
- Բայց դու ժամադրութիւն ունես:
- Նա չգիտէ նոյնիսկ:
- Ո՞վ չգիտէ:
- Այդ կինը: Նա ոչինչ գիտէ:
- Ինչպէ՞ս թէ չգիտէ, երբ դու սպասում ես նրան:
- Այո, սպասում եմ նրան, սակայն նա չգիտէ, որ սպասում եմ իրեն:
- Մարտիրոս, ես ոչինչ չեմ հասկանում:
- Այստեղի եպիսկոպոսական եկեղեցու քահանայի կիներն է Գլորիան: Ամէն ամիս գալիս դրամական նուէր է ստանում Հաչ-

մանդամ Երեխաների Հաստատութեան Համար: Միակ կինն է, որ սունն է գալիս:

— Այսօր պիտի գա՞յ Գլորիան: Ինչո՞ւ ինձ նախագէտ չասացիր:

— Չգիտեմ ե՞րբ պիտի գայ Գլորիան, սակայն ամէն օր սպասում եմ նրան: Երբ գալիս է, լուսաւորում է այս սունը: Առանց Գլորիայի թանգարանը չեմ կարող կառուցել:

— Գլորիայի Համա՞ր ես կառուցում թանգարանը:

— Յիմար-յիմար բաներ ես ասում, երիտասարդ: Ես միայն ասացի, որ նա ինձ նոր ուժ է ներշնչում: Երբ Գլորիայի գեղձագոյն երեսին եմ նայում, մտանում եմ տարիք ու յոգնութիւն: Մի օր ինձ Համար կաղամբի ճաշ պատրաստեց: Հիմա ամէն անգամ գալիս ինձ Համար իր ձեռքով թխած գաթայ է բերում: Ուզում եմ, որ նա երկար մնայ, բայց նա շատ բազմազբաղ է: Ամէն օր Գլորիային եմ սպասում:

— Ինչո՞ւ Գլորիային չես յայտնում զո սպասումների մասին:

— Եթէ ասեմ, այլևս իրեն չեմ սպասի: Եթէ ասեմ, այլևս չի գայ: Միակ կինն է, որ սունն է գալիս: Չգիտեմ երբ պիտի գայ, բայց մի օր պիտի գայ: Այո՛, պիտի ընդարձակեմ այս հասարակը, նոր սիւներ պիտի դնեմ: Վաղը քաղաք կ'իջնեմ շինանիւթ գնելու: Դու ինչո՞ւ մեզը չես սիրում: Եթէ մեզը ուտես, չես հիանդանայ:

Երբ Մարտիրոսի ձայնը բնականոն հունի մէջ էր մտել, ուզեցի իմանալ իր կեանքի պատմութիւնը: Նա չընդառաջեց ինձ, փոխարէն խօսեց ինքն իրեն, մեկուսի, մայր դետից առուակներ գոյացան, տարածուեցին դէպի ծարաւ հողերը:

Իմ մտքի սղագրութեանն ապահինելով՝ իրերի ու սպաւորութիւնների հետեւեալ պատկերը ստացուեց: Մարտիրոս Յովնաթանեանը ծնուել է Սեբաստիայի Պորսանա գիւղում, յայտնի չէ որ թուականին, ամէնից կրտսերը Կիւրեղի ու Վարդապետի տասներեկ գաւակների: 1890ական թուականների աղէտալի օրերին Հայրը նրան աննում Պոլիս է տանում եւ Ամերիկա մեկնող Փրանսիական առաջին նաւը նստեցնում՝ որդու ճակատագիրը յանձնելով Լորէնսում Հաստատուած իր Համագիւղացի Յովակիմին: Հենց տախտակամածի վրայ քամին թռցնում է Մարտիրոսի ուսական գլխարկը: Մէկ ամիս յետոյ, Յունիսին, Մարտիրոսը ոռք է դնում Նիւ Եորք, գլխաբաց: Լորէնսում Յովակիմը իր Համեստ սեղանի հացից բաժին է հանում Մարտիրոսին: Տարրական դըպրոցը գեռ չաւարտած՝ Մարտիրոսը կօշիկի դործարան է գնում, իր վաստակածը ուղարկելով Սեբաստիա: Մէկ տարի յետոյ նա փոխադրւում է Բոստոն՝ ցերեկները աշխատելով մի պողպատաձուլարանում, իսկ գիշերները կերակուր եփելով սերաստացի մի խումբ տարագիրների համար՝ ի դիմաց իրեն յատկացուած մի խցիկի: Այնուհետեւ Պորսանա ուղարկուած նամակները տեղ չեն հասնում: Այնուհետեւ ամէն ոք խօսում է կտորածների մասին: Յետոյ վրայ է հասնում Համաշխարհային Առաջին պատերազմը:

Շատերը կամաւոր են գնում: Տակաւին աղուամազ, Մարտիրոսը որոշում է օգնութեան հասնել իր գերդաստանին: Կամաւոր է գլըրում ամերիկեան բանակում: Նրան տանում են Վըրջինիա, ապա՝ Հիւսիսային Քարոլայնա եւ Ջորջիա նահանգները թրծուելու: 1918 թուի սկիզբներին հազարաւոր այլ երիտասարդների հետ նա հասնում է Փրանսիական մի նաւահանգիստ: Մի քանի ամիս արձակուրդի պէս տեղից տեղ փոխադրուելուց եւ ամերիկեան երգեր երգելուց յետոյ, Ֆոշի ընդհանուր հրամանատարութեան տակ դարձած Փըրչինզի զօրաբանակը դէմ առ դէմ է կանգնում Լոռնդենդորֆի ուժերին Շաթօ Թիէրիի ու Մարնի ճակատամարտերում: Մարնում սրունքից վիրաւորում է Մարտիրոսը: Հիւանդանոցում ականի բեկորը հանում են: Նա նորից շարունակում է քայլել: Զօրավար Փըրչինզը անձամբ Մարտիրոսին պարզեւտարում է հերոսութեան կրօնքանշանով: Տուն վերադառնալով եւ տակաւին ցեխի համը բերանում՝ նա ամուսնանում է Վերգինիէի հետ, վեց տարուայ ընթացքում ունենալով երեք զաւակ, մէկ աղջիկ, երկու տղայ: Եօթերորդ տարուայ մուտքին սակայն Վերգինէն գլուխն առնում զաւակների հետ հեռանում է ո՛չ միայն Մարտիրոսից, այլև՝ Բոստոնից: Կանայք բոլորն էլ յիմար են, ասում է նա ու կրկին ամուսնանում, այս անգամ Բինդհամթընում, խարբերոցի մի աղջկայ հետ՝ անունը Մէրի: Մէրին ժառանգել էր մի ազարակ՝ Ե՛՛՛՛ կովերով: Այստեղ եւս ընտանիքը բազմանում է — երեք տղայ, մի աղջիկ — իսկ կովերի թիւը հետզհետէ նուազում: Ասում էին մի նոր տեսակի համաճարակ է: Անշուշտ, յանցաւորը Մարտիրոսը չէր: Տարիներն անցնում են: Մարտիրոսը ձանձրանում է թէ՛ կաթնասնտեսութիւնից եւ թէ՛ Մէրիից: Ազարակն ու զաւակներին կոռլը թողնելով՝ հասնում է Նիւ Եորք եւ նորից կամաւոր դրւում: Այդ արդէն 1942 թուականն էր: Աշխարհը կրկին բռնկուել էր պատերազմի հրդեհով: Հազուատները փոխում նոր համազգեստ է հագնում որպէս ջոկատապետ: Այս անգամ ռազմանաւերը Հիւսիսային Աֆրիկա են հասնում: Ամառուայ կէսին Փաթընի հետ Մարտիրոսը կառւում է Բազարլանկայում, ազատագրում, ապա շունչն առնում Սալերնոյում: Բտալիայի արհաւանման ժամանակ երկկենցաղ հրասայլը ռմբահարւում է, երկուսի բոժանւում: Վզից վիրաւորւում է Մարտիրոսը: Նրան տանում են Լիկաթա: Երկու ամսից ոտքի է կանգնում: Նէպոլում զինուորական հանդիսաւոր մի արարողութեան ժամանակ Զօրավար Փաթընը ոգեշունչ մի ճառ է արտասանում եւ անձամբ Մարտիրոսին պարգևատրում Հերոսութեան Միրանի Սիրտ շքանշանով: Յաղթանակից տուն վերադառնալով՝ կառավարութիւնը նրան յատկացնում է կրկնակի թոշակ: Իրերի այս զարգացման ընթացքում Մարտիրոսը սիրահարւում է յոյն մի դերասանուհու վրայ, ամուսնանում եւ փոխադրւում է Քրնէթիքըթի լեռները: Այս մէկն էլ փորձենք, ասում է նա եւ հասած հենց առաջին օրը կացինն առնում եւ սկսում է քանդել շէնքով-շնորհքով կառուցւած սպիտակ տունը ժայռի բարձունքին, Հուսաթոնիկ գետի ափին: Իերասանուհին զայրագին յուշարէն անհասկանալի բաներ

է ասում, ձեռքն ընկած ամանեղէնը ջարդում եւ Մարտիրոսի նոր դեած կարմիր Փորդը նստած հեռանում՝ երբեք չվերադառնալու սպառնալիքով: Մարտիրոսի զաւակները մեծացել ամուսնացել են, ամէն մէկը մի տարբեր քաղաքում: Նա հիմա թոռների տէր է: Տարին մի քանի անգամ դալիս, այցելում ու դնում են: Դրամական օգնութիւն-բան չի ընդունում զաւակներից: Իր եկամուտը բաւարար է: Ունեցածը բաժանում է գրաւմաճառներին ու հնամաճառներին: Ետքից մի անգամ, իր խարխուլ ինքնաշարժը հեծած՝ հասնում է Նիւ Եորք, Բոստոն կամ Նիւ Հէյվըն եւ մէկ առ մէկ այցելում տեղի գրաւմաճառանոցները: Ամէն մարդ ճանաչում է Ուենթ Հային: Մի հատ դրքի կամ մի կտոր արձանի համար նա մինչեւ իսկ թէքսաս ու Ալյասկա է գնում: Բաւական է, որ գիրքը հայերէն է, իսկ առարկան՝ հայկական: Մարտիրոսը գոհ է իր կեանքից ու զաւակներից: Իր միակ ցաւը աւագ որդին է՝ Տիգրանը, վաճառանաւոր ու ճարտարագետ, որը սակայն մի օր Աթլանթիս այցի ժամանակ ինչ-ինչ պատճառներով տեսիլք է ունենում ու զվերածնւում: Հիմա գառան պէս ամբողջ օրը երկինք է նստում եւ ոչխարի պէս ժպտում: Եթէ ձեռքի հացն առնես, չապիկն էլ թեզ կը տայ, իմ անդրանիկը, իմ ցեղիս յոյսն ու ապակէնը:

Ուշագրութեամբ լսում եմ ու ջանում Մարտիրոսի կեանքի թելերը ի մի բերել, ընդհանուր համադրութիւն ստեղծել, օտակայն այդ ինձ չի յաջողում: Նրա կեանքի արտաքին դժերի տակ կայ ներքին քարտէսագրութիւնը, որն անձանօթ է ինձ, հաւանարար անձանօթ նաեւ իրեն, կամ մի զուցէ չի ուզում դիպչել այդ լարերին, ո՞վ գիտէ:

— Իսկ թանգարանը, — վերջապէս համարձակութիւնս կուտակած ընդմիջում եմ, — ինչո՞ւ այս թանգարանը:

— Թանգարանը դեռ չի աւարտուել: Մինչեւ Դեկտեմբեր կը շարեմ ներսի պատերը, յետոյ կը սկսեմ յատակը: Ահադին գործ կայ:

— Բայց ինչո՞ւ: Ի՞նչ է նպատակը:  
 — Դու մահուան մասին ես խօսում, երիտասարդ, — զայրացաւ Մարտիրոսը, ձայնը կրկին մէկ ութեակ բարձրացաւ, — մահը շատ դիւրին է: Ես բազմաթիւ մահեր եմ տեսել: Ես մահւան հետ վաղուց եմ հաշտուել: Բաջութիւնը ապրելն է:

— Ես այդպիսի բան չասացի:  
 — Կեանքով պէտք է յաղթանակել մահուան:  
 — Ի՞նչ պիտի անես թանգարանը:  
 — Թանգարանը կը լինի: Ես կը լինեմ: Դու կը լինես: Աշխարհը կը լինի: Հայութիւնը կը լինի:

— Բայց ինչո՞ւ աշխարհից կտրուած այս բլուրի վրայ:  
 — Ի՞նչ տարբերութիւն: Այտեղ ես եմ տէրը: Վաղը թանգարանը կը պատկանի Հայութեան: Պէտք է փրկել գրքերը:  
 — Բայց դու հայերէն չգիտես:

— Ի՞նչ տարբերութիւն: Պէտք է փրկել գրքերը: Նկուղը չտեսար: Նկուղում հազարաւոր հատորներ կան: Դեռ արկղները չեմ բացել: Մի օր բոլոր թերթերում պիտի ծանուցեմ թանգարանի բացումը:

— Ե՞րբ պիտի կատարեա թացումը :

— Չգիտեմ : Գուցէ մի տասը տարուց : Ամէն տարի է՛լ աւելի ընդարձակում եմ շէնքը : Պատկերասրահը փոքր է : Մի օր պիտի քանդեմ, նորը կառուցեմ : Կարեւորը մահուան հետ հաշտուելն է : Երբ հաշտում ես, կեանքը է՛լ աւելի ես սիրում :

— Դու շարունակ մահուան մասին ես խօսում :

— Որովհետեւ կեանքը շատ եմ սիրում : Մի օր էլեկտրական լոյսեր պիտի քաշեմ թանգարանի շուրջ, ջահեր պիտի վառեմ, շարժուն լուսարձակներ պիտի դետեղեմ ծառերի վրայ, որպէսզի ամէն կողմից երեւայ թանգարանը : Մեղը ուզո՞ւմ ես :

— Ոչ, շնորհակալ եմ :

Նա բարձրացաւ, շերեփով եռացող ջուր լցրեց իր դաւաթի մէջ, երեք գդալ մեղր աւելացրեց, խառնեց ու խմեց : Նա հիմա գարձել էր պարթեւահասակ, իր կերպարը տիրական սենեակի քացարձակ համրութեան մէջ : Պատուհաններից դուրս անթափանցելի ծանր խաւարը ճղմում էր հողը, ջնում ջարդել լուսամուտների ապակիները : Եւ իրօք, այնքան թանձր էր լուսիւնը, որ ինձ թւում էր, թէ լսում էի լուսիւնը : Ինձ թւում էր նաեւ, թէ Մարտիրոսը այնքան փորձառութիւն է դիզել իր կեանքի վերայ, որ այլեւս մանկացել է, չի զգում քեռը : Նա ակնատից յատակազծերի մի խումբ հանեց, փոեց սեղանի վրայ, ողբերգութեամբ քացատրելով ներկայ ու ապագայ համալիրի մանրամասնութիւնները, որոնցից բան չհասկացայ, որովհետեւ երկրաչափական բոլոր տուեալներից զուրկ էին մատիտով ծուռումուռ գրուած չափերը, սակայն այդ հոգ չէր, ինքը համոզուած էր, ես էլ ակամայ համոզուեցի, այլ ելք չունէի, եթէ պիտի պահպանէի հաւասարակշռութիւնս :

— Քեզ մի գաղտնիք ասեմ, երիտասարդ, — շշնջաց նա :

— Ասա՛, Մարտիրոս :

— Այս բոլորը ինձ համար եմ կառուցում :

— Հապա ա՛ղղը :

— Ե՛ս եմ աղղը :

Մարտիրոսը հաւաքեց յատակազծերը, ծախեց, տեղաւորեց ակնատում, կօշիկները հանեց, երկարեց մահճակալի վրայ, աչքերը փակեց ու քնեց : Իր խօսքերի երկժամեայ կարկուտից մըտապատկերիս վրայ տակաւին ցատկոտում էին բեկորներ նրա կեանքի գրուագծերից, մանուկը, որի ուսուսական գլխարկը քամին խլեց թրքական նաւահանգստում, նրա լարուած գէժքը Բոստոնի պողպատածուլարանի շէկ մետաղաձողերի առջեւ, նրա սեռային արտոժակները նահանգից նահանգ, նրա հայի թուխ դէմքը ամերիկացի շիկահեր բանակայինների ծովում, Ի՞նչ մտածեց, երբ Լուսնոնգործի ականը ճեղքեց իր սրունքը, Իտալիայի ազատագրումը Մուսոլինիի յիմարութիւնից, կար-չկար մի Մարտիրոս կար, որը չգիտէր ինչո՞ւ է եղել, սակայն մասնակցել էր եղելութեանը, երբ սկզբից ի վեր դարը ծուռ էր ծնունել, երբ մորթել էին իր ընտանիքին Պորսանայում, երբ մարդիկ բան ու գործ թողած սահմաններ էին դժեւ ու իրար կոտորել սերունդից սերունդ :

Հապա մայրենի լեզուի խորթութիւնը, խորթութիւնը մարդկային ցեղի, էլ գործարան չմնաց որ չաշխատեց, Ամերիկան ինքն է կառուցել, թող ով ի՛նչ ուզում է ասի, անարմատ մարդը բնական է, որ մի օր պիտի խելագարուի, այո՛, Սըր, Տէր, Պարոն Նիքըրթրաքըր, մարդիկ խոս չեն ուտում, կայ նաեւ միւսը, անշօշափելին, անբմբունելին, որը չգիտես ինչպէս յանկարծ գլուխ է բարձրացընում խոր թմբիրից եւ խաչքար բարձրացնում ժայռն ի վեր, որ լինի շարունակութիւն, որ մնայ հետք, որ չասեն, թէ մարդը երկունք չի ունեցել, դու նրա թրիքոտ ձեռքերին մի նայիր, ոչ էլ գործարաններում մաշուած անեղունգ մատներին, նրա կէս-ծիծաղ-կէս-սարսափ դէմքի վրայ աստղերի պատմութիւնը կայ, որ միայն Աստուած կարող է գրել, այն էլ խնթութեան մի պահին:

Մարտիրոսը խոր ննջում էր, ըստ երեւոյթին ականջալուր լուսեան ձայնին: Ուրի ելայ, դուռը դոցեցի եւ խարխափելով, քայլ առ քայլ իջայ բարձունքից, շօշափելով գտայ ինքնաշարժը: Եթէ օրը-ցերեկով մոլորուել էի հիւսիս-արեւմտեան Գընեթիքը-թի անտառուտ լեռներում, ապա վստահարար ճամբաս չպիտի գտնէի անթափանցելի խաւարում: Այսուհանդերձ ճամբայ ընկայ:

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑ

Հոկտեմբեր, 1984

**Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն**

**Marche Nuptiale**



Ես կը շրջիմ արեւուն տակ սուկեշող,  
միջօրէին իմ խնդուքեան  
    ըմպելով հուրն իբր աւիշ.  
Ետիս անցեալն է քէնու,  
որ կը կառչի երգերուս  
    շիրմաքարի սը լեզուով,  
այլ տեկտեմք մը տարաշխարհիկ  
կը բազեզուի խոհերուս՝  
    ձգտումներով բնապաշտ...

Բաւիղ մը յուշ գիս կ'առնիմէ վերստին՝  
բոյրով օծուն ծաքրիմագեղ յանցերու,  
ուր սէրն յաւէտ գրգամք մըն է սրտառուշ՝  
համդիսութեամբ յանկուցիշ:

Ի՞նչ ցնորհներ հագեցրաւ  
կը վերածեն հեւքն օրերուս  
գեղումներու այնքան ցնծուն,  
պտտփումներու այնքան խելաւ,  
որ կարծես,  
չեմ այցուած խոկումներէ սրտախտուեր  
եւ սրտիս մէջ չէ անքեզուած  
ո՛չ մէկ մահերգ,  
ո՛չ մէկ յուշերգ տանջալուր...  
Ա՛հ բերուս դէմ զամուկներու պէս կը պայքին  
ողջ մայիսներն իմ անցեալ.  
ա՛հ բերուս դէմ հրահանգէն կայ հիմա,  
հրահայշնե՛ր քեւաբախ:

Ի՞նչ շրջադարձ եւ այլակերպ յայտնութիւն.  
իմ մէջ կրկին կը յառնեն  
խորհրդապաշտ երազանքները սիրոյ  
եւ ոգեպաշտ յղացումները մտքի  
եւ կը մնան դեռ սրտիս մէջ անվթար՝  
շուշումաթոյր ամէն քնիւնք,  
ամէն սյրանք ծաղկատի:



Ի՞նչ փոյթ սակայն, քէ ժամասխայտ մտմտեմներ  
 կը հեղեղեն ստաւերնորով դեղնալոյս  
 մարգարտածաղկ իմ ուղիքն  
 եւ կ'անգոսնեն մոլեգմութեան երախիճը՝  
 բերկրանմանրուս եզրեւանին լուսազգեստ,  
 բայց ես կը գգամ,  
 քէ կը ծնին արգամդներէն որոնումիս՝  
 պսակը, որ զիս կ'ողակեն  
 միգանոյշի՝ մը մեղրայեայ բովանակին-  
 ձեւեր, որ զիս կ'առնչեն  
 ծխանի մը բարեհամբոյր քերտութեան-  
 բայրե՛ր, որ զիս կը գողեն  
 հարսնետրի հոգեպանայն ցնձութեան...

Բա՛ց են իմ գէտ  
 մոր սեպիլի հեռաստեմներն աստղամոյն-  
 քաց են արդէն  
 մոր սիրտնի մաւազարհներն իմ առջեւ,  
 ուր կ'ընթանամ հանգիստութեամբ հետախոյզ՝  
 դէպի ամուսնի անգրական դաշնութեան,  
 կենսաբարբիս մուտքի մը համընթաց:

Եւ կ'ընթանայ համակ երկիրն ինձի հետ,  
 իր նախաստեղծ կենցաղին  
 ետայնովը երամազեղ՝  
 եւ կը յառի կեանքի՛ն, յոյսի՛ն,  
 սեւեռումով այնքան գուարբ,  
 վայելչութեամբ այնքան վսեմ,  
 որ կարծես  
 չէ ըմբռնեմ մտեագայտը ո՛չ մէկ վիշտ  
 եւ իր սրտին չէ ակօսուած  
 գեհեհեծիմն ո՛չ մէկ անգոհ,  
 ո՛չ մէկ սարսափ եղեռնականչ...

Եւ կ'ընթանան  
 տօնեանդերն պերեանմանքով պարուրուած՝  
 անյիշատակ մտառումներ ինձի հետ-  
 իրգայտումներ՝  
 կիսաստուածեան վրիժախոհ կերպարով,  
 քեւածումներ՝  
 ամձաւային կապանմանքէ ջլատուած՝  
 եւ կ'ընթանան ռոտորաններ դեռ ամզայտ,  
 քափառումներ քեւաքեկ՝  
 եզրայրացած համայնապարտի այդ մուտքին  
 դաշներգութեամբն ազուարտը...

Այդ նուագը,  
ի՞նչ կախարդանք ռևի հզոր,  
սրբագնաշունչ ի՞նչ խորհուրդ,  
որուն շունչով էր շրջանցեն դարերն հաւայն  
տառապակոծ ամէն վիճակ  
եւ այնկոծ ամէն կակիծ  
եւ կը ճուրիմ անկերպարան Անհունին՝  
ճիցչեակամ հաւատով...

Այդ նուագով,  
ամէն աշուն տերեւաթափն իր կուլայ՝  
իբրեւ արցունք հարսնութեան...

Այդ նուագով  
կ'արտաշնչէ աշխարհն իմ շուրջ  
ցայգածաղիտ մրմունջներով դաշնուած՝  
հարսներգութի՛ւն մը թռկիչ:  
կը կտրկաչեն ճայներ տարփուտ,  
որ չհասան կարօտներու գգուամէին  
եւ բարբառներ՝  
որ չբացին խոհերու լերկ երկունքին՝  
անէջն իրենց կենսախայտ...

Այդ նուագով  
եւ կ'ողջունեմ վերափոխումն աշխարհի.  
կը շրջանցե՛մ փշալարե՛րը պատրամէի,  
գիտակցութեա՛ն ցաւատանջ.  
կը շրջանցեմ բախտի հայտն՝ցքն իսկ յայրատ  
եւ կ'ընթանամ ի սէր այն բոլոր աննշանքին,  
որ նարօտն է,  
յաւերժութեանը գոյաւոր՝  
յաղբութեան մը անկայծունին ցամկացուած...

ՅԱԿՈՒԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Լ Ո Ւ Է Յ Ա Յ Ա Տ Ա

**Մ Ա Ր Դ Ը՝**

**ՈՐ ԻՆՔՆ ԻՐ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԵՅԱԻ**

ԵՌԱՐԱՐ ԹԱՏԵՐԱԽԱՂ

Հայացուց՝ ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

**ԶՈՐՐՈՐԿ ՏԵՍԱՐԱՆ**

Տէր-Զօր : Վաճառական Մալէյմանի տունը : Ներս կը մտնէ Մալէյման՝  
երգ մը մրթմրթալով, ապա սեճեակէ մը դուրս կու գայ Զաւրամ, գիշե-  
րազգեստ հագած :

*ԶԱՂՐԱ.— Սո՛ւսս, լո՛ւ՛, մարդ :*  
*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ո՞վ (կը յառաջանայ փաղաքշական շարժումներով), թան-  
կազին կի՞նս, Զահրա՞ն...*

*ԶԱՂՐԱ (շփացած ծեփծեփումներով հրելով իր տմուսինը).— Մա՛րդ, մեղքի  
հեղուկը խմելէ դեռ չձանձրացա՞ր :*

*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Խմի՛չքը համով է, ինչո՞ւ կ'ուզես որ վերջ տամ խմի՛չ-  
քին եւ...*

*ԶԱՂՐԱ.— Ատու՛ծմէ չե՞ս վախնար :*  
*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Նո՛յնն ես, նոյն աղքատը, եւ պիտի մնաս աղքատ. աւելի  
քան քան տարիէ ի վեր քեզի Հետ ամուսնացած եմ եւ դուն երբեք  
չզարգացար... : Զահրա, սիրելիս, երբ քեզի հանդէպ իմ պարտա-  
կանութիւններու մէջ չեմ թերանար, ուրեմն ինչո՞ւ դիմ կը մե-  
ղադրես...*

*ԶԱՂՐԱ.— Կարկտանը գիտե՞ս...*

*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ի՞նչ...*

*ԶԱՂՐԱ.— Կարկտանը, որ Հազուտաներդ կը զարդարէր, որովհետեւ զանոնք  
փոխելու է վիճակի չէիր :*

*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ի՞նչ ունի...*

*ԶԱՂՐԱ.— Ատու՛ած անիծէ...*

*ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ինչո՞ւ անցեալին կը վերադառնաս, ճշէ որ Հազուտաներդ  
հանեմ, որպէսզի հանգչիմ. արդէն խմի՛չքէն յողնած եմ :*

- ՁԱՀՐԱ.**— Աղօթքի համար քեզ արթնցնե՛մ :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— անուշա՛ւ, անշա՛ւշտ, առաւօտուն խումբով պիտի աղօթենք :
- ՁԱՀՐԱ** (կը խնդայ հեզմամբով եւ մատով կը զգացնէ դիմացիմիմ բերնէն դուրս եկող գարշահտը) .— *Ուսմբո՛վ, այնպէս չէ՞ :*
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Ինչո՛ւ այսպէս կը խնդաս... Նիշդ է, որ ես կը խմեմ... բայց նաեւ կ'աղօթեմ... խմելը տարբեր բան է, իսկ աղօթելը՝ ուրիշ բան... :
- ՁԱՀՐԱ.**— Հա հա հա՛... :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Ես խմիչքը կը խմեմ խումբ մը վաճառականներու եւ սպաներու հետ, սարգապէս աշխատանքի բերումով... յետոյ հրապարակաւ կ'աղօթենք... «Իսկ էթէ մեղքերու ջուրէն թրջուիք՝ ծածկեցէ՛ք դուք մեզ» (հազիւ շուրջանի այս նախադասութիւնը արտասանած՝ Զահրա ստիկ կ'իյլի) ... Զահրա, ո՛ր կ'երթաս... :
- ՁԱՀՐԱ.**— Գնահալու :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Կ'ուզեմ քիչ մը հեռու խօսիլ... :
- ՁԱՀՐԱ.**— Երբ պիտո՞վաթենէք արթնաս... :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Մեր աղջկան՝ Տաթևի մայրն է եւ ուրիշ Անճէտի նիւթին լուրջ :
- ՁԱՀՐԱ.**— Առաւօտը ուշ չէ :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Բայց վաղը առտու Անճէտը մեզի պիտի դայ եւ դուն ոչինչ պիտես նիւթին մասին :
- ՁԱՀՐԱ.**— Եւ ի՞նչ կ'ուզէ :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Կ'ուզէ, որ հարսանիքին թուականը նշենք... բայց ես երեւան հանեցի... :
- ՁԱՀՐԱ.**— Ի՞նչ բան երեւան հանեցիր... :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Երեւան հանեցի, որ Անճէտը հասարակ դիւղացիի մը զաւակն է : (կը նայի Զահրայիմ, անոր հակադիցուքիւնը նայկնայու ետմար) ... Ինչո՛ւ որեւէ հետաքրքրութիւն ցոյց չես տար :
- ՁԱՀՐԱ.**— Որովհետեւ ատկեա շատնց պիտեմ :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Գիտէիր եւ ինչի բան մը չէիր ըսեր :
- ՁԱՀՐԱ.**— Այդ մէկը իմացայ Տաթևիէն. հակառակ անոր, մենք մեր աղջիկը պիտի ամուսնացնենք Անճէտի հետ, որովհետեւ անոր դիւղացիի զաւակն ըլլալուն մէջ ոչ մէկ գէշ բան կայ :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Դուն իսկապէս յիմար ես :
- ՁԱՀՐԱ.**— Գիտն'ով, լեզուդ վրաս մի երկարեր :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Զահրա, ամուսնութեան պատճառը դուն ես. աղջկադ հետ էթէ քրոջ տունը չեթայիր՝ այս փորձանքը մեր վիզը պիտի չփաթթուէր... Տէր-գործիներէն ոմանք տակէ առաջ արդէն զիս մեղադրեցին, ըսելով՝ թէ աղջիկս կ'ուզեմ թուրքի մը հետ ամուսնացնել. իսկ հիմա անոնց պոռչուողը կրկնապատիկ ուժգնութեամբ պիտի հնչէ, եթէ պիտան, որ ան դիւղացի մըն է :
- ՁԱՀՐԱ.**— Ատկա դուն կ'ըսես :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Այո :
- ՁԱՀՐԱ.**— Ուրեմն մէկ լուծում կայ, ես կ'ընենք այս նշանաւորը :
- ՍՈՒԼԷԹՄԱՆ.**— Ինչ ըսիր, այս նշանաւորը ե՛տ կ'ընենք. ատկա անկարելի է... անիկա արդէն կատարուած իրողութիւն եղաւ, յետոյ՝ նման քայլ մը պիտի անդրադառնայ առեւտուրիս վրայ, ու դեմ՝ Տէր-Զօրի մէջ ծիծաղի տարկայ պիտի դարձնէ զիս :
- ՁԱՀՐԱ.**— Ի՞նչ կ'ուզես, շէմքուցիր զիս :

**ՍՈՒԼԹՄԱՆ** (էիչ մը մտածելէ ետք)։— *Ձեմ գիտեր...*  
**ՋԱՀՐԱ**։— *Ուրեմն գիտ մի՛ մեղադրեր եւ փառք տուր Աստուծոյ, որ այսպիսի քաջ փեսայ մը ունիս. յետոյ՝ ո՛չ մէկ վնաս կայ անոր գիւղացիի զաւակ ըլլալուն մէջ...*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Իսկ դրամօժիտը...*  
**ՋԱՀՐԱ**։— *Եթէ մեղի քէչ դրամօժիտ տայ՝ այն ատեն զումարը կը բարձրացնենք, մարդոց աչքերուն առջեւ... Եթէ այդքան կը վախնաս անոնց խօսքերէն։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Տրամարանական մտածում մը։*  
**ՋԱՀՐԱ** (կը յատգանայ Սուրէյմանի ուղղութեամբ եւ կ'օգնէ անոր՝ քակելով հագուստին կոճակները)։— *Ըսէ՛ ինձի, Սուլէյման... ես գիտեմ, որ թուրքերը իրենց սպաները կ'ընտրեն օգնուականներու եւ վերնախաւի զաւակներէն... ուրեմն ինչպէ՞ս Ա՛ճմէտը սպայ եղաւ, ինք՞ որ հասարակ գիւղացիի մը տղան է։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ** (լրօրէմ կը սկսի բացատրել)։— *Երկու տեսակ մարդիկ կան, որոնք իրաւունքը ունին սպայ ըլլալու. առաջին տեսակը օգնուականներու զաւակներն են, որոնք իրենց զինուորական կրթութիւնը կը ստանան մայրաքաղաքին կամ Գերմանիոյ մէջ, իսկ երկրորդ տեսակը անոնք են, որոնք մեծ ճարտարութիւն կը ցուցարեմեն պետութեան մղած բազմաթիւ պատերազմներուն մէջ. եւ մեր փեսան՝ Ա՛ճմէտը, երկրորդ տեսակի... (դուռը կը բակուի)։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Ո՛վ է, այս ուշ ժամուն...*

169-2200

Գրպանէն կը հանէ ժամացոյցը։

**ՋԱՀՐԱ**։— *Սպասէ, երթամ-նայիմ։ (Կ'երթայ եւ կը բանայ դուռը - կը տեսնուի Յակարը՝ յենած Սիլվայի ուսիմ...)։ Ձախրա անգիտակից շարժումով մը կ'օգնէ այցելուներուն)։ Իրապէ՞ս դուք թուրքերու մեռէն փախած էք։*  
**ՍԻԼՎԱ**։— *Այո...*  
**ՋԱՀՐԱ**։— *Հրամեցէք...*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Ո՞րք ես, ինչ ես, ինչպէ՞ս զերենք ներս կ'առնես։*  
**ՍԻԼՎԱ**։— *Հօրեղբայր, ձեզմէ օգնութիւն կը խնդրենք։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ** (խօսքը ուղղելով կնոջը)։— *Անմիջապէս վաճառէ գերենք։*  
**ՋԱՀՐԱ**։— *Մեզմէ օգնութիւն խնդրեցին։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Վաճառէ՛ ըսի։*  
**ՍԻԼՎԱ** (աղերսելով)։— *Եղբայրս վերաւոր է եւ թուրքերը մեզ կը հալածեն... շատ մտահոգան... ինչոքեմ, մեր Հոգածութեան տակ առէք մեզ...*  
**ՋԱՀՐԱ** (առանց նկատի առնելու ամուսինը)։— *Հեռա եկուր...*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Ձահրա՛...*  
**ՋԱՀՐԱ**։— *Լու՛ն դուն եւ ձե՛զ որ հարցը կարողութեմ։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ** (կնոջը արգելի հանդիսանալով)։— *Ձահրա՛, կ'արգելեմ քեզի այդ բանը. ասիկա սղամարդոց գործն է...*  
**ՋԱՀՐԱ** (հեռացնելով ամուսինը)։— *Հեռացի՛ր ճամբէս... Ճաթի՛մէ... Ճաթի՛մէ...*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Գիտե՞ս թէ ինչ կ'ընես։*  
**ՋԱՀՐԱ**։— *Անշուշտ։*  
**ՍՈՒԼԹՄԱՆ**։— *Վճռապէս կ'արգելեմ։*

**ՁԱՀՐԱ** (պտալով) — Մարդ, փառք առւր Աստուծոյ, որ ասոնք զէպի թեզ  
առաջնորդեց, որպէսզի պաշտպանենք զիրենք եւ Բը ներողամտութեան  
արժանանանք:

Ֆաթիմէ ներս կը մտնէ եւ կը տեսնէ հայերը:

**ՖԱԹԹԻՄԷ** — Հայեր են, այնպէս չէ՞...

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Այո, քոյրս...

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** (կապկելով աղջիկը) — Հայեր են, այնպէս չէ՞... : (Կը յար-  
ձակի Սիլվայիմ վրայ եւ գայն գետին կը շարտէ) : Դո՛ւրս ելէ՞ք տունէս :

Այն ատեն, Ջանրա դէմ կը դնէ իր ամուսինին, իսկ Ֆաթիմէ կ'օգնէ  
Սիլվայիմ՝ գետնէն քարձրանալու :

**ՁԱՀՐԱ** — Տաթիմէ, սենեակդ տար զիրենք, ես անժիջապէս կու գամ :

Ֆաթիմէն կը կատարէ մօրը խնդրանքը :

**ՁԱՀՐԱ** — Լսէ, Սուէէյման, շափը անցուցիր...

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Այո՞ք...

**ՁԱՀՐԱ** — Անոնք հո՛ս պիտի մնան... այսինքն՝ հո՛ս պիտի մնան... հառ-  
կըցա՞ր :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Դո՛ւն շափը անցուցիր. հետեւաբար, ես միայն մէկ բան կըր-  
նամ ըսել :

**ՁԱՀՐԱ** — Եւ ի՞նչ է այդ ըսելիքդ :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Կամ ես... կամ անոնք :

**ՁԱՀՐԱ** — Անո՛նք :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Ի՞նչ...

**ՁԱՀՐԱ** (հեզմանքով արտասանելով տառերը) — Ինի... նու... չէ...

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Չահրա, աղուորս, դուն շատ զգածուած ես եւ սկսած ես  
զգացումներէդ տարուիլ :

**ՁԱՀՐԱ** — Ո՛չ :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Խելքդ գլուխդ հաւաքէ եւ ձգէ որ ես վարուիմ :

**ՁԱՀՐԱ** — Ինչո՞ւ մենք ալ, աէր-զօրցի միւս ընտանիքներուն պէս չընդունինք  
զիրենք :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Չահրա, միթէ ես անոնց պէս ազէ՞տ եմ, որպէսզի հայ մը  
պատասպարեմ...

**ՁԱՀՐԱ** — Տգէ՞տ...

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Այո՛, ազէտ... : Այս արարքովդ դուն ուղղակիօրէն կը սպառ-  
նաս առեւտուրիտ որովհետեւ թուրքերը եթէ զիսնան՝ կաշիս  
կը քերթեն : Իսկ այն աէր-զօրցիները, որոնք հայեր պատասպարած են,  
ո՛չ առեւտուրով կը զբաղին, որպէսզի անոք մրայ վախանն, եւ ոչ ալ  
մասհողութիւն մը ունին, որպէսզի տիրին : Յետոյ, յետոյ... յետոյ  
դուն ինչպէ՞ս պիտի յաղթես փեսայիդ, նոյնինքն թուրք սպային... :  
Տակաւին պէտք չէ մոռնաս, որ այդ անհաւատ նազովրեցի հայերը  
կոռուեցան մեր պետութեան դէմ եւ անոնց նպատակը մեր պետութիւնը  
քայքայելն է :

**ՁԱՀՐԱ** — Խօսքերդ այսքան հեռուները մի՛ տանիր, կրօնքը իբրեւ պատրուակ  
մի՛ շահագործեր... այլ ըսէ անկեղծօրէն, թէ առեւտուրիդ վրայ կը  
վախնաս :

**ՍՈՒԼԵՅՄԱՆ** — Այդպէս կարծէ :

**ՁԱՀՐԱՒ.**— Ձե՛մ կարծե՛ք, այլ ճշմարտութիւնը կը խօսի՛մ :  
**ՍՈՒԼԻՅՄԱՆ.**— Ձա՛հրա, ես հետեւանքները նկատի ունի՛մ... : (Դուռը կը գարնուի) : Հրամէ՛, բայց գու՛ւրը եւ աչքովդ պիտի տեսնես, որ հարցերը յայտնուիլ սկսան :

Ջահրա կ'երթայ դուռը բանալու : Անկէտ մերս կը ՚նտնէ :

**ԱՀՄԷՏ.**— Ո՞ր էր եհ...  
**ՁԱՀՐԱՒ.**— Որո՞նք...  
**ԱՀՄԷՏ.**— Փախստական հայն ու էր քոյրը :  
**ՍՈՒԼԻՅՄԱՆ.**— Վերը... գոքանչու պահեց զիրենք :  
**ԱՀՄԷՏ.**— Կաշիսին պիտի քերթե՛մ (դրան կողմ դառնալով՝ կը պոռայ) Հէ՛ք-մէ՛թ, Աշրա՛ֆ...  
**ՁԱՀՐԱՒ.**— Ի՞նչ կ'ընես :  
**ԱՀՄԷՏ.**— Պիտի ձերբակալե՛մ :  
**ՁԱՀՐԱՒ.**— Մեզմէ պատուարան խնդրեցին...  
**ԱՀՄԷՏ.**— Մայրիկ, հիմա զիրենք պիտի տանի՛մ եւ վաղը քեզի կը բացատրե՛մ...  
**ՁԱՀՐԱՒ.**— Իսկ ես ընդառաջեցի իրենց խնդրանքին :  
**ԱՀՄԷՏ.**— Ի՞նչ...  
**ՁԱՀՐԱՒ.**— Այո՛... պիտի շտանիս... այսինքն՝ պիտի շտանիս...  
**ԱՀՄԷՏ.**— Ձէնքի ուժով պիտի տանի՛մ :

Աչքով Յշամ կ'ընէ չիքիւնը, որ դէպի դուռը կ'ուզուի . Ջահրա կը վերցնէ տան առարկաներուն մաս կազմող հաստ գաւազան մը, կը կանգնի դրան առջեւ եւ կը սպասեայ չիքիւնը . Աշրաֆ կը քարասիի :

**ՁԱՀՐԱՒ.**— Միայն դիտելիս վրայէն անցնելէ ետք կրնաս տանիլ զիրենք :  
**ԱՀՄԷՏ.**— Մայրիկ...  
**ՁԱՀՐԱՒ.**— Մեզմէ օղնութիւն աղերսեցին եւ այդ իսկ պատճառով պիտի շտանիս...  
**ԱՀՄԷՏ.**— Հօրեղբորս, զոնէ բառ մը արտասանէ :  
**ՍՈՒԼԻՅՄԱՆ.**— Հօրեղբորդ կինը լաւ կը ճանչնաս. այնքան յամառ է, որ կրնայ լերան սպառնալ :  
**ԱՀՄԷՏ.** (խնդալով) .— Լաւ, եթէ տէր-զօրցիներու խօսքերէն կը զգուշանաս՝ հանգստացիր. առանց աղմուկի պիտի տանի՛մ զիրենք, առանց որ մէկը բան մը զգայ... : կը խոստանամ... որովհետեւ, խորքին մէջ՝ վարկդ ի՛մ վարկս է...  
**ՁԱՀՐԱՒ.**— Մարդոց խօսքերը զիս չեն հետաքրքրիր. ես զիրենք ընդունեցի, խնդրելով արժանանալ Աստուծոյ ներողամտութեան :  
**ԱՀՄԷՏ.**— Եթէ խնդիրը այդպէս է, այս ոճրագործին փոխարէն ես քեզի ուրիշ երեք հայեր կը բերե՛մ... որովհետեւ նոյնինքն Բարձրագոյն Գուռն է, որ այս վերաւորը կը պահանջէ... հը՛, ի՞նչ ըսիր, երեք հայեր... դուռն ըսէ հինգ :  
**ՁԱՀՐԱՒ.**— Կենդանիներ չեն, որպէսզի զիրենք փոխանակենք այնպէս՝ ինչպէս կ'ուզենք. մնաց որ, Աստուած առաջնորդեց, այսինքն՝ Աստուած զիրենք մեզի առաջնորդեց, եւ ես զիրենք զիւրին-զիւրին պիտի չձգե՛մ :  
**ՍՈՒԼԻՅՄԱՆ.**— Ձա՛հրա, եթէ վտանգուտը չըլլային՝ Ահմէտը այսքան պիտի չպնդէր :

- ՀԻՔՄԷԹ.— Տիկին, այս վիրաւոր հայը սպաննեց երկու սպաներ եւ... եւ...
- ԱՇՐԱՆ.— Մեր եւ իր միջեւ եղածը արիւնի հարց է եւ...
- ՁԱՀՐԱ.— Եւ երկար ճիգէ ետք դարձեալ ջուր կը ծածես:
- ԱՀՄԷՏ.— Հաւատա՛ ինծի, ան կրակեց մեր խումբ մը սպաներուն վրայ եւ այդպէսով բազմաթիւ հայերու փախուստի առիթ ընծայեց... սպաննեց օսմանցի երկու սպաներ. խօսքերուս իմաստը կը հասկնա՞ս:
- ՁԱՀՐԱ.— Սպաննեց երկու մարդ եւ աշխարհը իր դիտուն փլեցիք, եւ ի՞նչ կ'ըսէ այս խեղճը, որուն արիւնակիցներէն հազարներ, աւելի ճէշը՝ հազար հազարներ մորթեցիք, այրի դարձուցիք կիները, մորթեցիք մանուկները եւ մնացեալը տեղահան ըրիք. ըսէք, խնդրե՛մ, ձեր արիւնը ինչո՞վ կը սարքերի այս վիրաւորին արիւնէն... դոյնո՞վ, հոտո՞վ...:
- ԱՀՄԷՏ.— Կեաւորներ են...:
- ՁԱՀՐԱ.— Այնպէս մը մի ձեւացներ, որ կրօնամոլին մէկն ես, քեզ լուս կը ճանչնամ. կրօնքը Աստուծոյ դործն է եւ, ամէն պարագայի, իրենց կրօնքը երկնային կրօնք մըն է. մնաց որ, ճշմարիտ կեաւորը ան է, որ կը սպաննէ... իսկ դուք ահաւաստիկ կը սպաննէք:
- ԱՀՄԷՏ.— Մայրիկ... կա՛մ սպաննողը պէտք է ըլլաս եւ կամ ալ՝ սպաննուողը. ա՛յս է ներկայացուած տարազը:
- ՁԱՀՐԱ.— Ես քաղաքականութենէ չեմ հասկնար:
- ԱՀՄԷՏ.— Ուրեմն, հրոսպարակը մեղի ձգէ եւ թոյլ տուր, որ տանինք զինք... ազլիկը քեզի պիտի ձգե՛մ:
- ՁԱՀՐԱ.— Ճիշդ է, որ ես քաղաքականութենէ բան չեմ հասկնար, բայց կը հասկնամ, որ մարդը նո՛յն մարդն է... եւ այս մարդը, որ տունս ապաստանեցաւ, մարդ մըն է, որ ունի երկու ձեռք, երկու ոտք, զլուխ, միտք, ազանջ... եւ... ուրեմն, ի՞մ պարտականութիւնս է պաշտպանել զինք, որովհետեւ եղբայրս է... ա՛յս է իւրաճութիւնը եւ ոչ թէ...:
- ԱՀՄԷՏ.— Քեզմէ մեծ խօսքեր կը խօսիս:
- ՁԱՀՐԱ.— Եղբայրս է, կա՛րճ ու կարուկ, ձեզի պիտի չյանձնեմ, միայն դիտկիս վրայէն անցնելով կրնաք ասնիլ:

Ձեռքա իր սեմեակը կը մտնէ եւ դուռը կը գոցէ ետեւէն: Աստուտ կ'առաջանայ դրամ ուղղութեամբ, կը հրէ եւ կը նկատէ, որ դուռը թիզով կ'ապրուած է: Ար վերադառնայ Սուլէյմանի մօտ:

- ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ձեր ներս մտնելէն առաջ, խօսելէն կողորդու չորցաւ:
- ԱՀՄԷՏ.— Հօրեղբայր, դուն գիտես, որ այս պարագան պիտի անգրադատանայ վրադ, մանաւանդ որ վտանգաւոր ոճրագործ մըն է...:
- ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Իրաւունք ունիս, բայց յամառ է...:
- ԱՀՄԷՏ.— Թերեւս չէր մտածեր, որ ես ձեր փեսացուն եմ, իսկ անոնց ապաստան տալով՝ առիթ տուած կ'ըլլաք իմ մրցակից սպաներուս, որ իրենց լեզուները երկաբեն:
- ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Գիտե՛մ, բայց ի՞նչ կրնամ ընել...:
- ԱՀՄԷՏ.— Դուն հայը յանձնելու գաղափարին համաձայն ես:
- ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Անշուշտ...:
- ԱՀՄԷՏ.— Ուրեմն ձգէ, որ ես շարժիմ:
- ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ի՞նչ պիտի ընես:



ԱՀՄԷՏ.— Մինչև ատու պիտի չսպասեմ, որովհետև եթէ սպասենք՝ լուրը կրնայ հասնիլ ազգականներուդ եւ յանձնու՞մը դժուարութիւններու պիտի հանդիպի. հետեւարար, իմ կարծիքովս, պէտք է արտօնես, որ ես հարուածեմ եւ ուժի միջոցով դինք հետս տանիմ:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Հիմա՞...

ԱՀՄԷՏ.— Այո՛:

ՍՈՒԼԷՅՄԱՆ (մտածելով).— Ո՛չ, Ահմէտ... կրնայ մնաս հասցնել ե՛ւ ձեզի, ե՛ւ ինքզինքին. պէտք է մտածենք ուրիշ լուծումի մը մասին...

ԱՀՄԷՏ.— Կը կարծեմ, որ ատուարկս յարմարազոյն լուծումն է...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Ո՛չ... մինչև ատու սպասէ եւ ես պիտի համոզեմ...

ԱՀՄԷՏ.— Զի համոզուիր...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Եթէ վաղը չհամոզուի՝ հիմա ալ Զահրան չես կրնար հասնել... որովհետև ո՛չ դուն եւ ո՛չ ալ քու գինուարներդ կրնաք ներս մտնել եւ գէնքի ուժով տանիլ այդ փախստական հայր: Ճեղիբէի եւ Եփրատի չըջանին մէջ, կնոջս ցեղատու՞մը հարուածող եւ զորաւոր ցեղատու՞մը մըն է...

ԱՀՄԷՏ.— Արդէն վախտ ալ ա՛յդ է... բայց եթէ մինչև ատու սպասեմ՝ դուն թ՛նչ պիտի ընես:

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Բոլոր կարողութիւններս զործի պիտի լծեմ, զինք համոզելու համար... պիտի փորձեմ համոզել փորձառութեամբ... կրօնքով... սպառնալիքով...

ԱՀՄԷՏ.— Լաւ, հօրեղբայր, պիտի սպասեմ, բայց կը խնդրեմ, որ չմեղադրես զիս, եթէ...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Եթէ թ՛նչ...

ԱՀՄԷՏ.— Եթէ գինուարները պահակ դնեմ տան մուտքերուն, որպէսզի հօրեղբորս կինը զանոնք փախցնելու մասին չմտածէ... Այս վերաւորը չափ վտանգաւոր անձ մըն է եւ կը վախճանք, որ բուժուելի է ետք...

ՍՈՒԼԷՅՄԱՆ.— Երթաս բարով...

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

ԿՈՍՏԱՆԿՆՈՒԳՈՒԼԻՍ — ՌԱՀԱՏ ԷՃԷՆՏԻՆ ՏՈՒՆԸ

Աթռաի մը վրայ նստած՝ Ռաշատ էֆենտին գրագած է սեղանը յարգարհով: Խալիլ մերս կը մտնէ:

ՌԱՀԱՏ.— Բարեւ, բարե՛ւ, բարի եկար...

ԽԱԼԻԼ.— Ռաշատ՞, ահր իմ:

ՌԱՀԱՏ.— Ո՛չ... ո՛չ... շուշայար, ճիշդ ժամանակին եկար: (Ցոյց տալով քեմլին խորքին զիտեզուած մահնակալը): Պէտք եղածը արդէն պատրաստեցի...

ԽԱԼԻԼ (զարմացած).— Այո՞...

ՌԱՀԱՏ.— Ոչինչ: Կը խնդրեմ, որ կրկնես ա՛յն՝ ինչ որ երէկ ըսիր ինձի արտաքին եւ անոր յատկութիւններուն մասին: Երէկ քեզ կը դիտէի շղթած աչքերով...

ԽԱԼԻԼ.— Ելմա՞ծ...

ՌԱՀԱՏ.— Այո, շղթած՝ քու ազնուութենէդ, դեղեցկութենէդ եւ...

**ԽԱՆԻԼ.**— Ներդուրիւն, տէր իմ...  
**ԹԱՇԱՏ.**— Լաւ, լաւ: Դուն ինծի բացատրէ արտին յատկութիւններն ու առու-  
 ւելութիւնները...  
**ԽԱՆԻԼ.**— Խնդրեմ, մի՛ շնորհ, տէր իմ: Դուն լաւ գիտես, որ երկու շաբաթ  
 առաջ ժողով մը գումարելով՝ մեր շրջանի աղաներն ու պէկերը իրա-  
 րու միջև բաժնեցին հայերուն մը ած հողերը եւ...  
**ԹԱՇԱՏ.**— Դիտեմ, գիտեմ, դուն ծրագրին մասին խօսէ:

Էփեմտին ձեռքը կ'երկարէ հայիլի մագիւն. վերջինը քիչ մը ետ-ետ  
 կ'երթայ, բայց չի յանդգնիր վնասկան կեցումսի մը դիմել, ամբողջ սե-  
 սարանի ընթացքին:

**ԽԱՆԻԼ** (շարունակելով).— Դուն գիտես, էֆէնտին, որ Օսման աղան ինչ  
 դիրք կը ներկայացնէ մեր շրջանի մեծ հողատէրերուն մէջ:  
**ԹԱՇԱՏ.**— Անշուշտ, անշուշտ, շարունակէ՛...  
**ԽԱՆԻԼ.**— Օսման աղային գիրքը նկատի առած՝ իր բաժինը քիչ եղաւ, ու-  
 բովհետեւ ան առաւ ոչ շատ փայլուն, ըսել կ'ուզեմ՝ անջրդի հողեր,  
 որոնք երկինքի կարգադրութեան կը սպասեն եւ կախեալ կը մնան  
 Անոր դուրձէն:  
**ԹԱՇԱՏ.**— Այդ մէկն ալ գիտեմ... բայց հողին տարածութիւնը մեծ է...  
**ԽԱՆԻԼ.**— Ճիշդ է, որ իմ տիրոջս առած անջրդի հողը բաւական մեծ տարա-  
 ծութիւն ունի, բայց երկրագործութեան մէջ ո՛չ մէկ արժէք կը ներ-  
 կայացնէ: Մինչդեռ, իրենք բարեբեր հողերը առին:  
**ԹԱՇԱՏ.**— ...Ը՛մմմ...

**ԽԱՆԻԼ.**— Դուն լաւ գիտես, տէր իմ, որ Օսման աղան խելացի անձ մըն է  
 եւ որեւէ ծրագիր կրնայ դրախտի վերածել...  
**ԹԱՇԱՏ** (ձանձրացած հայիլի դատարկախօսութեան՝ Ռաշատ զղայնացած  
 մարդու շնոր մը կը դնէ իր ձայնին մէջ).— Կ'ուզեմ, որ ինծի խօսիւ  
 բուն նիւթին մասին, ուղղակիօրէն...: (Յետոյ, բացայայտ մեղմա-  
 ցումով) Զիս մի՛ աչպաներ, սիրելիս, մի՛ աչպաներ... բայց ես կ'ա-  
 տեմ նիւթին շուրջ դարձող խօսակիցները, իսկ դուն կը դառնաս ու կը  
 դառնաս...:

Կը նստի հայիլի կողքին, կը խաղայ անոր ուսերում, ձեռքերում հետ,  
 բացայայտ ցանկութեամբ եւ ան տագնապի ճշմաներ կը մատնէ:

**ԹԱՇԱՏ.**— Ը՛մմմ... շարունակէ...  
**ԽԱՆԻԼ** (կացութիւնը պատկերելու պատրուակով՝ հայիլ փախուստ կու  
 տայ).— Անջրդի արտերը հո՛ս են, առուակը՝ հո՛ս, ջրարբի հողերը՝  
 հո՛ս, առուակին եւ անջրդիին միջև:  
**ԹԱՇԱՏ** (դժգոհ հայիլի փախուստէն).— Ը՛մմմ.  
**ԽԱՆԻԼ.**— Եւ բախտը ուզեց օգնել տիրոջս՝ Օսման աղային. գիւղացիներէն  
 մէկը, որ Մուրատ կը կոչուի, առուակին եզերքը ունէր փոքրիկ հո-  
 ղաշերտ մը, եւ բախտը շարունակեց իր օգնութիւնը, երբ այս գիւղա-  
 ցին տիրոջս վճարելիք իր պարտքը չկրցաւ ժամկէտին փակել...: Հե-  
 տեւարար, ազաս կը ծրագրէ բռնագրաւել այս գիւղացիին հողը՝ դէ-  
 պի անջրդի հողերը երկարող առու մը բանալու համար: Այսպէսով,  
 տիրոջս հայերէն բռնագրաւած հողերը դրախտի պիտի վերածուին...:

**ՌԱՇԱՍ** — Աղաղ մե՛ծ սատանայ մըն է: Բայց ինձմէ թ'նչ կ'ուզէ...

**ԽԱԼԻԼ** — Կ'ուզէ որ իր գործընկերը ըլլաք:

**ՌԱՇԱՍ** — Այո է հարցը...: Ի՞նչ քանի փոխարէն:

**ԽԱԼԻԼ** — Գուք գիտէք, որ միւս աղաներն ու պէկերը պիտի չլռեն, այլ, ընդհակառակն, պիտի բողբեն, թէ առտին ջուրը անբաւարար է, եւ այլն, եւ այլն...: Հետեւաբար, եթէ ձեր թանկագին մասնակցութիւնը բերէք այս ծրագրին, անոնք պիտի վախնան ձեզմէ եւ պիտի լռեն...

**ՌԱՇԱՍ** — Հասկցայ... սակայն տէրդ կրնա՞յ հողակտորը Մուրատին ձեռքէն առնել:

**ԽԱԼԻԼ** — Անշուշտ, տէր իմ:

**ՌԱՇԱՍ** — Ո՞վ է այս գիւղացին:

**ԽԱԼԻԼ** — Խեղճ ու կրակ պիւղտցի մը, որ կը սպասէ իր սպայ տղուն զրկած գումարներուն:

**ՌԱՇԱՍ** — Սպա՞յ... ահաւասիկ ուրիշ հարց մը...

**ԽԱԼԻԼ** — Ո՞չ... ասիկա հարց մը չէ, որովհետեւ պարզ սպայ մըն է, աննշան աստիճանով եւ անդահանութեան ընթացքին ունեցած իր հաւատարմութեան եւ ծառայութիւններուն առ ի վարձատրութիւն՝ այդ աստիճանը ձեռք ձգած է:

**ՌԱՇԱՍ** — Ի՞նչ է անունը եւ ո՞ւր կը ծառայէ այդ սպան:

**ԽԱԼԻԼ** — Անունը Ահմէտ է եւ կը ծառայէ պզտիկ քաղաքի մը մէջ, որ Տէր-Ջօր կը կոչուի...

**ՌԱՇԱՍ** — Ուրիշ...

**ԽԱԼԻԼ** — Ի՞նչ ըսիք, տէր իմ:

**ՌԱՇԱՍ** — Քանի՞ տարեկան ես, տղաս:

**ԽԱԼԻԼ** (անսկզկապի մատնուած) — Քսան տարեկան, տէր իմ:

**ՌԱՇԱՍ** — Երբուրէն՞ ի վեր Օսման աղան Քով կ'աշխատես:

**ԽԱԼԻԼ** — Գրեթէ ճեռուղէս ի վեր: Օսման աղան զիս մեծցուց ճնողքիս մասնէն հտք:

**ՌԱՇԱՍ** — Օսման աղան բախտաւոր է... բախտաւոր...: Որքա՞ն կը ցանկայի Քեղի պէս ծառայ մը ունենալ:

**ԽԱԼԻԼ** — Ծնորհակալ եմ, տէր իմ:

**ՌԱՇԱՍ** — Բուն գործդ ի՞նչ է...

**ԽԱԼԻԼ** — Ամէն ինչ, բայց անհասարակ տուրքերը կը դանձեմ:

**ՌԱՇԱՍ** — Հոյակապ...: Կը թուի, թէ շա՛տ գործեր կը կատարես, աղաս... մինչդեռ գուն ունիս այնպիսի՞ գեղեցկութիւն մը, որ անձնապէս հմայից պիտի (խորքին մէջ՝ հալիլի արտաքինը ոչ մէկ ձեռով կապ աւնի գեղեցկութեամբ հետ):

Ռաշաւ կը լստեսայ, գուրգուրանքով կը սկսի շօշափել Խալիլը, որ սակմուլրայ կ'ըլլայ:

**ԽԱԼԻԼ** — Համաձա՞յն էք, տէր իմ:

**ՌԱՇԱՍ** — Անշուշտ, անշուշտ...

**ԽԱԼԻԼ** — Ուրեմն, ես այսօր իսկ պէտք է վերադառնամ, որպէսզի տիրոջս փոխանձեմ ձեր համամտութիւնը. ան մեծ անհամբերութեամբ կը սպասէ ձեր պատասխանին...

**ԹԱՇԱՏ** — Յայտնէ արտօնը, որ մեր մեծագոտաւութիւնը համաձայն դանձր-  
ւեցաւ իր ծրագրերն, հակառակ անոր, որ իր կորզին, ան գրազած  
է հայերէն գրաւած իր հոգերու շահագործումով:

**ԽԱՆԻ** — Համաձայնութիւն կնքելու համար մեր դիւզը պիտի գտնուի:

**ԹԱՇԱՏ** — Այո... Թէ՛ համաձայնութեան եւ թէ՛ քու սիրոյդ...

**ԽԱՆԻ** (կտկտազով) — Ծնորհակալ եմ... անք իմ...

**ԹԱՇԱՏ** — Վերագործուի երեք օրով յետաձգել եւ գիշերները միտին կ'անցը-  
նենք... Իսթանպուլի գիշերները աշխարհի գեղեցկագոյն գիշերներն  
են:

**ԽԱՆԻ** — Ձեռ կրնար, անք իմ:

**ԹԱՇԱՏ** — Երկու օր...

**ԽԱՆԻ** — Կը ներկէ, շեմ կրնար: Արդէն ուշացայ եւ անքս իննի կը սպասէ:

**ԹԱՇԱՏ** — Լաւ, լաւ... օրերը մեր առջեւն են... Ինչո՞ւ անագործ... Վա-  
ղք, ձեր գիւղին մէջ գիշերները միտին կ'անցընենք, ի՞նչ ըսիր...

**ԽԱՆԻ** — Անշուշտ, անք իմ, անշուշտ...

**ԹԱՇԱՏ** — Ընէ արտօնը, որ այդ գիւղացիին հարցը շուտ թող վերջացնէ:

**ԽԱՆԻ** (վայրկեան առաջ դուրս գալու փութկոտութեամբ) — Պիտի ըսեմ,  
պիտի ըսեմ...

**ԹԱՇԱՏ** — Խալիլ, փայլուն սպառայ մը կը խոստանայ քեզի: Այո ծրագրին  
մէջ քեզ իմ փոխանորդս պիտի նշանակեմ:

**ԽԱՆԻ** — Ծնորհակալ եմ, անք իմ, մտաք բարով...

**ԹԱՇԱՏ** — Ո՞ւր...

**ԽԱՆԻ** — Բիշ ետք համբայ պիտի ելլեմ:

**ԹԱՇԱՏ** — Արեւմտ պէտք է համբայ գնեմ քեզ... համբարելով... հայրական  
համբայբով մը... Առաւուտ վկայ՝ հայրական... Եկուք, եկուք...

Խալիլ մեզ կացութեան կը մտանալի. Էփենդին կը մտանայ, կը փաթ-  
բքի Խալիլին եւ կը սրտմէ երկար համբայք մը: Խալիլ կը անանայ հեշտա-  
խառն շարժումով մը եւ համբայքին ետք...

**ԹԱՇԱՏ** — Իսկողէս որ գեղեցիկ ու խելացի ես... Առաւուտ վկայ՝ հայրակա  
սպառայ մը պիտի սնենա...

ԼՈՒՆՑ ԱՅՍԱՍ

(Շար. 2)

Վ Ա Ր Ա Ն Ո Ի Ժ

Վարան Ուժ ծածկանունն է եղիպական մեր  
 հրեաստարգելերէն մէկունն, որ ամենեք առաջ մե-  
 զի զրկան էր Հեաազայ լափանուն: Գտորը յայ-  
 ճապէս կը կրէ գրելու ժամանակը շարժի մը կնիքը  
 եւ ճիշտ այդ պատճառով կապ պահեցինք հեղի-  
 նակին հետ եւ յիշեցուցինք նոր անուններուն ա-  
 ռիթով որդեգրած մեր սկզբունքը, — իմ ազգու-  
 թեան ներկայանալ ստանձին տեսարկով մը կամ  
 անտեսողն որոշ արժանիքներ ժամանակ հինգ կոս-  
 րով: Վարան Ուժ յարգեց մեր պայծառն եւ ու-  
 չախն ենք յայանելու, որ իր ներկայացուցած բո-  
 յոք գլխաւորներն ալ ուշադրութեան արժանի են  
 եւ պարբերաբար պիտի ներկայացունին ընթերցո-  
 զին:

**ՊՈՌՆԻԿԸ՝ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԻՆ**

(ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԵՆԱԽՕՍՈՒՓԻՆ)

Հրանցելք, խնդրեմ: ձիշդ ժամանակին:  
 Մեր սննդուկները ա՛լ չեն նաւաղեր:  
 Գիշ յետոյ նպուսները կը սկսին:  
 Ուրիշ ճայն չկայ: Անապարուած էք:  
 Թեւերնիդ տուէք: Կարսիմք տան մէջ:  
 Ամէն առարկայ իր կեանքը ունի:  
 Գեղեցիկ է, չէ՞: Ձեմ փոխուած բքեաւ:  
 Մարմնըս շուքին շարքը հազած,  
 Երեսքս՝ թծում, փեղկերու մեղէն  
 Ներս հասող լայսով: Ա՛ցեչունքերս  
 Մի՛ն էր՝ սկստիչ: Ձիւն այսպէս տեսաւ:  
 Մօտ տաքը տարի: Մի՛ն մտածագուիք.  
 Ձեր կօշիկները լաւ սը մաքրեցիք  
 Դուրսը- լանցի: Ես միշտ բազիկ եմ.  
 Կարծրը գետինի եւ կապուզ գորգի  
 Վայելէք գիտեմ: Թերեւս դա՛ւք ալ  
 Կը փափաքէիք: Ագաս զգացէք:  
 Արձաններ, գարգիւր, իզանքիպաներ.

Կան՝ որ նուէր են: Այս մերկ աղբրկան  
 Մարմարեայ մարմինն վըրայ ծփացող  
 Զգեստը բեհեզ ինծի չէր սագած:  
 Մարմար ու բեհեզ: Կ'ազէ՛ք՝ ֆակեցէ՛ք  
 Գօտին: Աւելի կը վայլէ այդպէս:  
 Բայց միշտ կը կապեմ: Որ ֆակեն կրկին:  
 Իսկ այս սնտուկը ամրակուտ, շէնգ՝  
 Արդեօք ի՞նչ գանձեր կը պարունակէ:  
 Բացէ՛ք: Ոչի՞նչ կայ: Բայց քանի գոց է,  
 Ամէն ինչ կայ հոն... ինչ որ կ'երազէ:  
 Ինչե՛ր չեն տուած...: Աճուններ չեմ տար.  
 Նշանակութիւն չունի. չէք ճանչնար.  
 Մէկու մը, օր մը, ըսած եղայ, քէ  
 (Շատ փոքր էի դեռ), քէ որքա՞ն, որքա՞ն  
 Կը փափաքէի գանակով շոյել  
 Իր կարծէք, յետոյ նեղէի... նքօրէն,  
 Ու դիտել կարմիր ստուակը արեան:  
 Բերաւ հնդկական դաշոյնն այս հսկայ:  
 Շատ պազատեցաւ: Զկրցայ մերժել:  
 Զեռքը կը դողար: Շատ մեզմ փորձեցի:  
 Երբ չխրեցաւ՝ աւելի ուժգին:  
 Արիւնը ցայտեց: Ա՛հ, որքան վախցայ:  
 Բայց գեղեցիկ էր: Ամիսներ՝ ապիւն  
 Մեզ իրար գօղեց: Ինչե՛ր չեն տուած:  
 Ամէն ստարկայ իր կեանքը ունի,  
 Ինչպէս ամէն սէր՝ իր պատմութիւնը:  
 Եւ մասնակից եմ ես իրենց կեանքին.  
 Իրաքանչիւր սէր հետք մըն է թողած,  
 Ինչպէս վրձինի հարուած մը ֆեռոյ:  
 Իսկ իմ նկարը դեռ չէ աւարտած,  
 Զ'աւարտիք բընա...: Պատտաւը սակայն...  
 Վազը կը մեկնիմ: Դուք գիտէք արդէն:  
 Քանի մը ամիս: Թեղուր՝ շաքաթ:  
 Որքան շուտ, այդչափ... ցաւերը սուր են:  
 Ո՛չ, հիմա լաւ եմ: Պիտի ուզէի՛ք  
 Այս գորգին վըրայ փռուած տեսնել զիս,  
 Անճասպան եղած... Ընդի հաճելի  
 Որեւէ գիրքով: Շատ եմ մտածած:  
 Քաղաքի՛նս արդեօք կը պակսի: Այո:  
 Բայց ինչպէս կրնամ արատաւորել  
 Գորգին մաքրութիւնն անբիծ: Խըռովել  
 Խաղաղութիւնը այս տան... գոյութեան,

Փշրել հմայքը յարևոնուքեան  
 Եւ այլափոխման հըրաշքն աւերել :  
 Բառե՞ր են ձեզի : Բայց բունտստեղծ էք :  
 Գունէ ինձ այդպէս բաս, խնդրելով՝  
 Որ բացառաբար ընդունիմ զձեզ :  
 Վերջինը ըլլաք : Թէեւ անծանօթ :  
 Թէեւ առաջին : Միայն բառեր չեն :  
 Ես կը նախընտրեմ փտիլ ու նեխիլ  
 Սնարին վըրայ հիւանդանոցին,  
 Մտքիս մէջ պահած յարկաբաժինն այս՝  
 Կտտարեալ անեղծ : Քան թէ... բայց ըսի  
 Արդէն, այնպէս չէ՞... մէկ ակընթարթի  
 Մէջ կեանքս խլել, առկայն բարբոսած  
 Մտքով, էութեամբ : Զէ՞ որ ես այս եմ,  
 Յարկաբաժինն այս՝ կեանքով, պատմութեամբ,  
 Եւ եղծումը իր, թէկուզ՝ ապագայ,  
 Եղծումն է անձիս : Ես երկարեցի :  
 Բայց մտիկ կ'ընէք : Կուգեմ բացատրել,  
 Քարգել, մերկացնել, բանալ ամէն ինչ :  
 Վաղը Շարաք է : Կը մեկնիմ՝ անդարձ :  
 Իսկ Զորեքշաքթի տարեդարձն էր :  
 Քանի մտ կ'ըսէք : Երեսունը... մէկ :  
 Կրնաք սպասել քիչ մը, այնպէս չէ՞ :  
 Լոգանք մը առնեմ : Հինգ վայրկեան միայն :  
 Եւ յետոյ ձերն եմ : Ինչպէս եղած եմ  
 Շտտերուն : Հիմա՝ բոլորին : Այո :  
 Կ'իրականացնեմ փափաքներն ամէն,  
 Յայտնեն թէ պահեն սրտին մէջ զաղտնի :  
 Ես պիտի լռեմ : Կ'ուզէք՝ մեկնեցէք :  
 Կ'ուզէք մընացէք : Խոյնն է ինձ համար :  
 Բընաւ մի քաշուիք : Ազատ զգացէք :  
 Մի՞ ըսէք՝ ոչինչ : Այդպէս, չեն գիտնար  
 Հոս պիտի ըլլաք թէ ոչ՝ երբ ելլաւ :  
 Ակնկալելով կ'ապրիմք մենք միայն,  
 Իսկ ակնկալուածն երբ չի կտտարուիք,  
 Ես գիտեմ ժպտիլ : Սակայն մընացէք :  
 Զիս ալ փարձեցէք : Ես ես ալ յաջորդ  
 Հինգ վայրկեաններուն ընթացքին պիտի  
 Զեզ ակնկալեմ... : Եւ աւելի ի՞նչ...

Վ.Ա.Բ.Ն ՌԻԺ

## Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

### Ս Ա Յ Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

#### Ը.

— Եկէջ ետեւէս :

Կամազուրիկ, տւելի խելօք, քան տասնամեայ տղան, Արտակ  
Փասպարեան հետեւեցաւ մայրապետին :

Քիչ մը, օ՛, շատ քիչիկ մը կը դողար ծունկերէն վար, տե-  
սակ մը ուժասպառում զգալով բումբերուն ու թնթեւ ցաւ մը ոտքին  
կոճերուն : Բայց հակառակ սա ժխտական զգայութիւններուն, անխ-  
կա թնթեւ էր զսիրահէն, մեծ բան մը, արտակարգ զեղեցկութեամբ  
արարք մը կատարող մէկուն ներքին ազանովութեամբ : Նոյնիսկ  
ուրախութեան հետ շփոթուող բան մը տեսնել կարծեց զէմքին, երբ  
ինկաւ անոր գլուխը վնասօններն մէջ, ուրկէ կ'աննէր գլխարկը : Ան-  
ցողակի, արագ, այս ամէնը : Յստակ էր սակայն ժամերով տառա-  
պանքին կնիքը անոր երեսներուն վրայ, դալուկ ու քաշքշուած նոյն  
ատեն :

Նոր էր դուրս ելած սրահէն, որուն դժուար չէ հոս անունը  
արձանադրել, բայց... : Վերաբուժական իր հանդերձանքովը, ան-  
թերի ծփանքով ծփծփուն մահիճներովը, մտալլ պատգարակներու  
դադարակերպ սարսափովը, մա'նաւանդ անգոյն, մեծփոր, սրուակնե-  
րու գլուխներովը այդ սրահը անոր միտքին մէջ ունէր տակաւին կեն-  
դանի, խորհրդաւոր իր ապրումը : Նիքելէ գործիքներուն ցուցլուն  
մաքրութիւնը, քաւուշուի կասկածելի, ժանգաւար կծիկներու ծո-  
ցէն : Հոտը : Հիւանդանոցը :

Կատարուէր էր իր երակէն Սոնային երակին մէջ արեան փո-  
խանցումը, էրբ գերագոյն միջոցը աղէտը զիժաւորելու, բժիշկին  
թերահաւատ, գրեթէ յուսահատ գլխի ճօճումներուն ընդմէջէն, թէեւ  
արեան գնդիկներու խնամալսեան փորձը տուած ըլլար նպաստաւոր  
վկայութիւն, սա գործողութիւնը արտօնող. ինչ խօլ, խոր, անբա-



ցատրելի հաճոյքով մը, հեշտունքով մը սա տղան տրամադրեր էր իր արիւնը՝ ազատելու համար սա աղջիկը, որուն անապատի դիշերը եղեր էր այնքան ողորդական, պատճառելով քանի մը մահեր, իրարու ետեւէ։ Այդ մահերէն ամէնէն սրտառուչը, սա մայրանոցի սրահին մէջ իր սկիզբը այնքան վայրադ կերպով յայտարարող կարմիր հիւանդութիւնը կ'ընէր, որուն կը ծանօթանանք քիչ վերջը։

Մրջազան հեղուկի մը սրբապան հրա՛ւրջը։ Դեռ չընդհանրացած, բայց գործածութեան մտած էր, այդ օրերուն արեան փոխանցումը, վտանգաւոր արիւնհառութիւնները դիմաւորող իրական հերոսութիւն։ Հրա՛ւրջ՝ որուն կը հաւատար սա ազան ներքին տնտեսականի վստահութեամբ մը, ընդդէմ բժիշկին նոյնքան հզօր, անխորտակելի վերապահութեան։ Ան կը հաւատար անդամաւոր սիրովը ետ իր երեւոտարդութեան։ Իր հաւատքին մէջ ան ունեցեր էր պաշտպանութիւնն ալ mēre superieureին, որ քիչ մը շատ դիտէր, քան զլիսազրեալ Գիտութիւնը, նման վստահաւոր հիւանդներու օրնաքին պակաս չընելով բժիշկին քով քահանան ալ։

Լախ շունչ առաւ։ Բայց օդը բարիք մըն է, պաշտպանութիւն մը, երբ մեր ներսի աշխարհը նեղ կու դայ մեզ ամբողջութեամբ բովանդակելու։ Որքան շատ կ'ապրինք երբեմն, քիչ պահերու վրայ սակայն։ Անոր այնպէս կու գար, որ իր արեան սա հեղումը, անցումը, անդաւորումը իր սիրածին ամէնէն հեռանկեայ խորշերուն, թերեւս քաւութիւնն էր ծանր մեղքերու, գրեթէ կը ինտըր ա'լ անքակտելի օրագան կայտերով, վերջ մը դնելով տարիներու տառապանքին, հիմա՝ որ Աղէտը անցեր էր այդ աղջկան վրայէն, իր ամբողջ ծանրութեամբը, անոր միտքին վրայ գործադրելով անոր ամէնէն ահաւոր փորձառութիւնը, զոր իրեն պէս աղջիկ մը ըլլար արտօնուած առնելու կեանքէն։ Արիւնը կը մաքրէր, մաքրած էր։ Որքան արտազին փոփոքեր էր անիկա սա նախադասութիւնը փոփոխել զոնէ, աչքերը փակ — որովհետեւ նայելու անկարող — աղջկան ականջներուն։ Յարգեց սակայն արգելքը մեծաւոր մայրիկին, Փորձ, շատ տեսած, մեծաւոր մայրապետը լուրջ ու կտրուկ հրահանգած էր չիտնիլ սա աղջկան։ Փոքրագոյն խողջք, յուզումը, տենդը կրնային անոր ակարացած սիրտը ընդմիշտ կեցնել։ Կը խօսէր անսածէն աւ քաղցր էր մահուան անարգին արտասանուած սա վճիռը։ Գործողութեան աւարտումին, թույլ մը խել չվտանելով, այդ կինը զինքը առաջնորդեր էր դուրս, թեթեւ մը դարկած ուսին։

— Աղօթեցէք։

Մօր մը գորովը, մանաւանդ մեծ, խորունկ, փորձ կնոջ շեշտը կար սա հրամանին մէջ, Ով դիտէ քանինն՝ քանցեր էին սա դուռնէն, Արտակին նման, ձգելով ներսը իրենց ամէնէն սիրական զանձը ու տուեր հրամանը։

— Աղօթեցէք Սուրբ Գոյսին։

Ձայն, նայուածք, վստահութիւն էր այդ կինը, այդ ճակատագրական սեմին։

Արտակ Գասպարեան քայլեց մայրապետին ետեւէն։

Այս մէկը երիտասարդ, խոհուն, գեղանի ըսուելու չափ կտնունաւոր դիմագիծով կին մըն էր, յափազանց մանկունակ, մանկամարդ ըսուելու համար։ Արտակ Գասպարեան անոր նայուած-

քին մէջն ալ զգաց, գտնել կարծեց նոյն մարդածօտ, կարեկցուն բանը, որով կը գիմաւորուին մարդոց խենթութիւնները, սեռային զինովութիւններուն փրկանաւորումը, ցաւին հետ մեծ մտերմութեան հայթայթած հոգեբաններէն, — մայրապետ, քահանայ, բժիշկ, մեծաւոր: Կար աւելին ալ այդ նայուածքին մէջ, ցաւէն անդին, որ մարդկայինն է մեր գէժքին կտաւին, մեր տկարութեան հաւանական հիւսուածքը, առնուազն անոր կծիկը, երբ կը դիտենք մեր դէմինը, միշտ մեր կորանքներուն լոյսին ընդմէջէն ու կը համակրինք: Գլխանոցէն մինչեւ մուճակները ամէն ինչ ճերմակ էր վրան: Գէժքին ու շալին բացութիւնը դեռ ժամանակ չէր ունեցած դալիանալու, — որ նուէրն է մեր արեան զնդիկներուն արեւադարձներու հզօր արեւէն: Հիւսիս ու Արեւմուտք էր այդ գէժքը տակաւին, Սոնային տարիքին շատ մօտիկ ու, ո՛վ գիտէ՝ թերեւս նոյն նամբով հոս ինկած ու... մնացած: Քաղցրութիւն, շնորհ դաշն էին այդ զգեստներուն ճերմակ սուգին: Գլխանոցին մէկ խորչէն հազիւ տեսանելի խարտեալ, սպումապային անոր ծամերը կը պատմէին կարծես հըրաւըր ոսկի մագերուն, Հիւսիսի ճիւղներուն մէջ այնքան անըմբռնելի: Արտակ Քառադարեանը ինչու կը տեսնէր սա նորին, խուսափուկ բաները, երբ իր ներսի աշխարհը լման դրաւուած էր ճերմակ մահիճով, մէջը՝ Սոնա Գունարեանը, երկարած՝ զընդմէջ կեանքի եւ մահուանը, Քարգիււանի սիրտկան տարապին համեմատ, այնքան դժբախտ ստուգութեամբ մը սպրտած, սա քանի մը ամիսներու ընթացքին, երբ իրարու ետեւէ, անիկա կարդաց թշուառական բանաձեւը, իրեն շատ մօտիկ մարդոց մահիճէն:

Օրը տարբեր էր ետինքի: Գահիրէի ամրան անբացատրելի ծանրութեամբ ցրեկը, որուն տաքը ըլլար կտորած որոշ աստիճանով: Տակաւին մաս մը թանձր հեւք՝ կողմաւոր, արտուս, մանրալար հասակները դեղին շողիւններ ունէին, շուքերէն անդրադարձ: Հոտերը տառապապին մղձուկով: Հիւանդանոցին մեծողի կառոյցը գէժէն, առաջի դոյնով, ան ալ հրաշքով ինքզինքը ժայթքեցուցած անտպատէն:

Անիկա գիտէր ու չէր գիտեր, թէ այս կինը ուր կ'առաջնորդէր զինքը: Արեան կորուստին զուգորդ ազօտացումը անոր մտքէն աւելի մարմինը կը շահագործէր, երեւան գալով ծուկի կապերուն, սքրունքներու ներսի ցանցին վրայ, իրր թեթեւակի դանդաղում: Այս զգայութիւնները չրերին անուշտ իր մաքի տաշտին Սոնա Գունարեանը, որուն միճուած էր մահը, մանկարարձ բժիշկին ճանվրէյ բերանովը՝ կորսուած արեան քանակէն իր դատաստանը արժեւորող: Ու քիչ անգամ սխալած մարդու իր սպահնովութիւնը անշուշտ հեղնութիւն մը իրրեւ լանդրադարձաւ, նման այն զգայութիւններուն, որոնք մեզ կ'այցելին մեզմէ դուրս վատնուներու հաշուոյն, ծանր հիւանդութիւններու, որտայոյց մահերու առջեւ, մեր գիրծութիւնը անգամ մըն ալ ոսկեղծելով: Ուշ էր մնացած այդ աղջիկը, հիւանդանոց գալու: Նուաղումը կը տեսնէր շատ աւելի, որքան կ'ընդունէր բժիշկներու գիտութիւնը: Սրտի զարկին իյնայր բնականէն շատ վար գումարի մը, ուրիշ ազգակ: Բժժիծաղով, նոյնիսկ չկամութեամբ կատարուած գործողութիւնը (արեան փոխանցման) իր միճական ճախողանքով պիտի չուշանար այդ բժիշկին փորձառու գաւառատանը մուկերացնելու: Գան այս մարդերը, ամէն սպարէզի մէջ, որոնք ի-

րենց տիրադատները կը նանչնան ամէնէն առաջ ու անոնց փառաւորութեան վրէպէն հանձնարեն, պարտքէն վեր բան մը իրենց մտահոգութեանց մէջ, Հիւանդ մը կրնայ մեռնել. ատիկա բժիշկին յանցանքը չէ անշուշտ, քանի որ դիտութիւնը չէ վտանգուած: Աւ կրնայ ապրիլ, ընդդէմ անոր վճիռին, Հոս, յանցաւորը: Մանկաբարձ բժիշկը յիմար մը չէր անշուշտ: Մեռելի գոյնով կին մը: Գասական կորուստը դիտակցութեան: Արեան դարկին իր կէտին իջնալը: Ենչառութեան երբեմն վայրկեանը անցնող դաղարը ու վերադարձը մեծ աղմուկով, — բոլորն ալ փաստեր organismեան հասած ծանրածանր հարուածին, անմիջական մահուան շատ պայծառ թելադրանքով մը: Վերատեսուչ մայրը միշտ կը հաւատար հրաշքի, ընդդէմ սա վճիռներուն անդառնալիութեան: Անոր պահանջումովն էր, որ փորձուած էր գիտութեան վերջին ճիշդը: Մոտցեալը կը պատկանէր Ատուծոյ: Ի՞նչ հարկ պատմելու այն ուժգին, խոսովայոյց ընկերները, որոնք նրման տրամները կ'երկարածուէին վերջալուստին ստուերներու հասակովը, մեր հոգիին խորը: Արի, քաղցր, կտրուկ՝ վերատեսուչ մայրը, իր հիւանդանոցին հեղինակութեանը աւելի վեր ուժէ մը պաշտպանուած — սիրտին ուժն է ատիկա — հրաման էր ըրած այդ երիտասարդին հետեւն երթալ: Աւ այդ հրամանով, երիտասարդ մայրապետը (կա՞ր հոգեբանական պատճառ մը այս մանկամարդ կնոջ ընտրութիւնը արդարացնող: Անցե՞ր էր սա կինը այն ստազնայէն, որուն սյաքներուն ներքեւ դիտապատս կը պատկէր Մոնա Գոհարեան: Ո՞վ դիտէ՞ աւ երիտասարդ սիրահարը (վերատեսուչ մայրը առաջին իսկ ակնարկով հասկցած էր ողբերգութիւնը: Աւ սա տղայիլը հիւանդանոց փոխադրող տղան, դեռ պաշտօնական տեղեկութիւններով չանձնաւորուած, շարժանագրուած, իր դասական կադապարով զրուած էր իր տեղը անոր մտքին մէջ) պիտի ազօրէլիմ, մինչեւ որ յայտնուէր Ատուծոյ կամքն ու փառքը:

Տօսարներով կզերուն ածուն հասաւ մատուռի մը անդամաստիկին: Ատիկա առաջամաս մըն էր, կիսակամար ու կիսազեղ: Արեւին ծանր փառքին մէջ մաքուր մարմարները ունէին խողտիչ իշխում, բիրտաւոր զանակներու ցրցնումէն ծնունդ առած: Լոյսին սա առատութիւնը ո՛չ հաշիւ էր, ոչ ալ յարգարանք: Տաքը հաս կը պահէր իր ուժը, անդաստակի նոր մարմարներուն նոր ըրուած ըլլալուն հակառակ: Մռաքի դրան երկու ջրփերուն, կիսաղեղներուն փոքին մէջ երկու կիսախորաններ, քրոնց ներքը առանձին, երկու անդրի: Անոնցմէ ակնկոյտները կին մըն էր, մարմար վերաբերուն կրկնով որոշ պիտանքով, շրթները ժպիտի նմանող արտութեան մը մէջ խոնարհած դէպի ծոցի մանուկը, ոսկի լուսապտակէն դուրս ամէն բանով իրաւ ու մարդկային: Արտակ Գասպարեանը դորովեցաւ մինչեւ աղիքները սա պատկերին առջեւ, այնքան իրաւ է, որ արուեստի դործերը մենք ենք, մեր ներսովը, բոլորէ առաջ մեզմէ դուրս բաներ: Երջեցան, չլայու համար, անոր աչքերը, ուրուացաւ զիտաստոյտը — արմէ կը վախնար այնքան Պարզեւեանի հոգեվարքէն սազին — թայց չամբողջացաւ: Միւս կողմին, հաստ, պարզուկ դիւղացի մը, ձեռքին հովուական դասագան՝ Ինչո՞ւ չէին տուած անոր առջեւօք տեղ մը խոնարհ անասունին, որպէսզի ըլլար ամբողջ թելադրանքը Եգիպտոս փախուստին: Արտակ Գասպարեան արեւէ՞ն էր նեղուած,

Թէ ուրիշ բանէ: Անիկա շկարագց — Հակոբակ իր սովորութեան — անդրիներու պատուանդանին սսկեզօծ արձանագրութիւնը: Կ'աճապարէր:

Ներս մտնելէ առաջ մատուռէն, անիկա ստիպուեցաւ դռանալ սակայն, նայուածքով, իր ետին: Հսկայ շէնքերը, իրրեւ գումար, Հիւանդանոցին, այլուրային ըսուելու շափ բազմազան, բայց տարօրէն իրաւ: Անոր ցածուկ մասերը կը Հեռանային ծառաստաններուն ծոցը ու կը կորսուէին: Ամէնէն մօտիկը մատուռին՝ մայրատունը, Հագիւ քանի մը տարուան կեանքով, զոր կատուցած էր իշխանագն անգլիկ մը, եւրոպական արքունիքի մը մէջ մայր, բայց որ կու գար, միտը քանի մը ամիս, Գաշիքէ, կ'ընէր Հիւանդանոցաւորութեան իր SERVICE, վերատեսուչ մայրը զնկելով զժուար կացութեան: Մայրատունին տանիքը, թելապատ լուսամուտները, առջեւ բրգացող հսկայ եղեւինը իրենց գոյններով հաշտ էին կեանքին ամէնէն խարտեայ խորհուրդին: Յղութեան վերջին ամիսներուն, Հոն, բժշկական նախագոյշ քննութիւն անցընող կիները — բոլորն ալ մայրեր — Հաճ ու ազգահովիզ զղացումներով կը լեցուէին, տիրող մաքրութեան, գործող ձեռքերուն, Հակող զէմքերուն, մանաւանդ խօսող աչքերուն կանխազգաց պաշտպանութիւնը ունենալով իրենց զօրավիզ, Հաւանական վտանգին ընդդէմ: Կիմերուն մէկ չէ մտիը, ըսեր է շատ բան գիտցող ժողովուրդը:

Մտան ներս:

Յուշիկ, կարծես վախնալով խոսովել սրբազան լուսութիւնը, մայրապետը անցաւ առաջ: Կիսասուրբին մէջ միայն անոր զէմքին պայծառ կարմրութիւնը կարծես կը գտնէր իր իմաստը: Լոյսին խաղերը մատնիչ են երբեմն: Ո՛վ ըսաւ, որ սա կինը իր ճերմակ Համազգեստը կը կրէր որով արտմութեամբ: Իր գեղեցկութիւնը, երկտասարգութիւնը, մանաւանդ քաղցրութիւնը զեր մը, տեղ մը ունէին սա տաղնապագին բուսկներուն ճակատապրին վրայ, քանի որ վերատեսուչ մայրը այդ կնոջ կը վստահէր աղօթքը: Այնքան քիչ բան է մեր գիտցածը սա աշխարհի երեսին ամէն ժամ մեր աչքերուն առջեւ թաւալող խորհուրդներէն: Դասին առջեւէն կէս մը կտարեց իր ճիւղման փունջը — մարմինը — ու անցաւ անդին, պատկերի մը զիմաց, որ կը ներկայացնէր Մտուրին տեսարանը, մարմարին վրայ ծնրադրելու: Միացուց իր ձեռքերը իրարու մէջ: Գլխահակ: Ամփոփ: Իրաւ: Խորունկ: Ամբողջ: Անիկա Հրաման ունէր Հոյ, ալգպէս աղօթելու, մինչեւ որ ժամացոյցին վրայ սլաքը գտնէր նշանակուած թիւը վերատեսուչ մայրիկէն: Անիկա վստահ էր, որ մայրատան մէջ պատկող աղջկան բախտը պիտի ըլլար վճռուած, երբ սլաքը գտնէր ճակատագրին թուանշանը: Սրտի շատ ծանր տաղնապ մը — բժիշկին բառով՝ Իրիզը — գիտակցութեան ամբողջական կորուստով եւ դաստական արտանիշներով, կը թուէր արդարացի ընել բժիշկին շարագուշակ կասկածանքը: Բայց քանի՞ն՞ր, մանաւանդ Սոնային նըման մատողապիններէն, Հերքեր էին այդ շատ գիտցող Գիտութեան պատգամները, յաղթելով մահուան, ժամերով զոյն ապրելէ վերջ:

Արտակ Գասպարեան մատուռէն ներս չհետեւեցաւ մայրապետին: Ինքն ալ չէր գիտեր, որ մարդիկ իրենց հնաւանդ վարժութիւններուն կը մնան Հաւատարիմ, առանց գիտնալու ստիկա, նոյն-

իսկ ամէնէն անպատեհի ու եղբարկան պահերու, դեղերու մէջ ան-  
 դամ: Անոր սովորութիւնն էր եղած, ամէն ժամ մտնելու, դասիքին  
 անմիջապէս մօտիկ նստարանը շահցնել: Թաշակն ընդ, քիչիկ մը դո-  
 զով, որոշ ալ յուղումով: Նստաւ: Ստիպուեցաւ ընել ատիկա, հա-  
 կատակ անոր, որ սղալակն յիշատակներ իր մէջ կը մնային զորա-  
 ւոր, Աստուծոյ մատուցանել աղօթքը, պարտ ու պատշաճ պատկա-  
 րանքով: Մտնկերը կը դողային: Նայեցաւ, բայց չտեսաւ պատե-  
 րուն՝ նկարներ, բոլորովին թարմ, խաշոր ներկերով, հասա ու պարզ  
 միտերու, զղեստեղէնի վերածող Աստուածամօր կեանքին զանազան  
 դրուագները: Մայրանոցէն առաջ յիշուած սա մատուռը, քանի մը  
 տարի կայ, տակաւ կը բարձրանար հրաշագործ համբաւի մը: Այն  
 պատկերը, որուն դիմաց մայրապետը, ասորին քանի մը անգամ ոսկի  
 պատկերներ կ'ընդունէր ճաշատոցը կիներէն: Թող բժիշկը յաւակնէր իր  
 դիտութեան բարիքներուն վերաբերել սա իրողապատում ճաշատու-  
 ները: Կանխիկ անտեսիքսիքս կատարելագործ կերարկումը փառա-  
 բանելով: Իրողութիւն էր, որ մեծահարուստ՝ ինչպէս աղքատ մայ-  
 րեր զմանր կացութիւններուց կը դիմադրուէին, այդ պատկերին առ-  
 ջեւ աղօթող մայրապետի մը անպայման ներկայութեամբ: Արեւը,  
 մուտքի դրան վերեւ, դոյնգոյն ապակիներէ տարբարադրուած, դա-  
 րի, բնի մարմարիկներուն վրայ կ'իյնար աննկարագրելի զնջու-  
 թեամբ, կարմիր, կանաչ, նարնջագոյն կտորիկներու ձեւով:

Արտակ Գասպարեանին միտքը մէկէն չգտաւ թելադրուած ուղ-  
 ղութիւնը: Թափառումէ թափառում, անոր ուշադրութիւնը բոլոր մը  
 կանգ առաւ լատիններէն, Փրանսերէն փյաքներու. անտարանէն փրցը-  
 ւած, պարզ ու խոր ճշմարտութիւններ, զորս կը լսենք, բայց չենք  
 հասկնար մեր անզգամութեան, անհոգութեան օրերուն, մեր վրայ  
 մեծահասակ, մեզմէ դուրս աշխարհը բռնի վերածելով մեր փշինին,  
 բայց որոնք կը ներկայանան մեզի իբր գերագոյն իրողութիւններ,  
 հազարաւոր փորձառութեանց դնովը այդ ձեւով սեւեռուած: Մատուռ  
 մը ապաստան մըն է երբեմն մեր յիմարութեան, գոյն կրելու իմաս-  
 տութիւն մը մեզի թելադրող: Արտակ Գասպարեանը կարճամտքով ըս-  
 զաց, որ տարիներէ ի վեր մոռցուած աղօթքը, տերունականք, կը  
 քակուէր իր բերնէն, բնական, միակտուր, ու իրաւ, նոյնիսկ քիչիկ  
 մը ջերմ, մանկութեան ու առաջին պատանութեան կտիարող հրապո-  
 րովը, ուժովը, վստահութեամբ: Ինչո՞ւ կը բաղձանք երբեմն մեր  
 միամտութիւնը: Ան եղաւ իրենց հետու ժամուն աղան, հաղորդու-  
 թեան մը առտուն, Փրկչին մարմինը բերնին, վարժուհիին պղտիկ ըմ-  
 պանակին բացած իր երանեալ շրթները: Փոքրիկ արութիւն: Հայր  
 մերէն վերջ փնտեց ուրիշ ալ կաղապարներ, Հաւատամէն, Աստուտ  
 լաւտոյէն, Հաւատով խոստովանիմէն, — նուազ հնազանդ, նուազ  
 ամբողջ, մանաւանդ իմաստի որոշ այլութեամբ: Գեղարար, դրե-  
 թէ անկողնու բառի փշրանքներ էին: Զհարցուց ինքնիրեն պատճառ  
 այս կերպ սպասարուելուն, ինք՝ որ վարժուած էր ամէն զգայութիւն  
 տարբարադրելու, հաճելի ըլլալու համար այդ դործողութիւնը իրձէ  
 պահանջող Սահակ Պարզեանին, որ առանց կանչուելու, կեցաւ,  
 բռնաւոր ու բիրտ, անոր մաքի դաշտին, Գէյնխուլէյնի հկեղեցիին  
 մէջ, իր դազազը շեցուցած, փարթած ու ամբողջ, դեղին կտու մը  
 երեսներուն իբր գերագոյն դիմակ, մահուանէ ներս մանկուս: Վախ-

ցաւ մեռելին սա խուժումէն, հակառակ անոր, որ անիկա ամէնօրեայ տանջանք մըն էր, երեք ամիսէ ի վեր: Աչքերը, ներսէն փախուսաով, ինկան մարապետին, որուն ճեփ-ճեփմակ կտնակին արեւը ոսկի երիզ մը կը բանէր, կապոյտ եւ կարմիր ուրիշ ձեւերու մէջէն, անտես, բայց կարծես զգալի սօսնդներու քերծովը: Տեսաւ, որ լոյսը բազմութիւն էր, կը քալէր ու կը խաղար: Ծառազայթներու սա խորձին ու պարոյրին մէջ. դարձեալ յօրինուեցաւ մեռելին դէմքը, հազիւ ալլալու յիշատակ, որ կը դառնար տարօրինակ արագութեամբ: Նեւտոնի սիւսառուկը, — դպրոցէն միտքին ամուր փակած յիշատակ: Սահակ Պարզեւեան կը բռնանար:

Ու հազիւ հարիւր քաջ իրմէ հեռու, հիւանդանոցին մէջ, թեթեւ իր ալ այնքան մատաղ, բայց նոյնքան քամբաստ վերջին էւստորը զճարելու կանչուած անոր յակերտուած զաղջիկը, — ինչպէս ծաղրուեր էին տարիներով մեծատաղանդ արձակագիրին ու դեղափթիթ երիտասարդուհիին նոյն աստիճով կամարակապ թշուառութիւնները — Հիմա՛ ալլապէս ուրուային, իրաւ, մեռելատիպ դաշկութեամբ ուրիշ պատկեր երկարած էր մահիճին:

Այս երկու հզօր տեսիլքներուն մէջ զիրկ գրկի — ժամանակը անկարող էր անոնց խտութիւնը մեղմել — Արտակ Գասպարեան անքառ մըն ալ բռնադրուած եղաւ ապրելու արեւմտահայ մեծ արձակագիրին վերջին էւստորը, այնպէս՝ ինչպէս էր օտնիկ տեսարանւած, երեք ամիս առաջ, դարնանամուս գիշերով:

.. Արտակ Գասպարեան մուցած է մայրապետին ներկայութիւնը բոլորովին: Գողտրիկ, խաղաղ, ամբողջ հոգի սա մատուռին մէջ մարը մանկու պատրաստուող արեւէն գոյնզգոյն բռնկում մըն է, որ կը հիւսուի, թափանցող, զուարթ ու տխուր նոյն ամանակի մէջ: Հին գիրքերու էջերուն յանախաղէպ պատմում է ժամերու կամարներուն ներքեւ լոյսերու սա գոյնզգոյն խաղը, տեսիլքի վերածւած: Այդ ժաղերը — հեղինակները այդ սրբազան ալլարանութեանց — իրենց գերազոյն ըղձաւորութիւնները երբ կը հիւսէին փոքր անցքերէ ներս ինկած լոյսի առէջներուն, սիւսակներուն, կը հպասակէին անշուշտ իրենցմէ վեր ճարտարապետութեան մը: Անոնց համար այդ ճառագայթումը ճամբայ մըն էր դէպի կայաններ, ուր իր դադարին արժանանար պիտի ուս մշտապէս տառապակոծ խեղճ մեր սիրտը: Արտակ Գասպարեան տեսիլք մը ունեցողի հոգեկան եւ իմացական յարգարանքէն դուրս էր անշուշտ սա բոպէին, երբ իր սիրտին սիրելիին, իրմէ հարիւր քաջ վերօք, իր վերջին ճառարդին վրայ կը խաղար, առանց գերասանութեան: Բայց մեր միտքը ինքնազլուի յիմարութիւն մըն է, ամէնքդ գիտէք ատիկա: Մեր միտքը մեր շնորհած մեղքն է յանախ: Ու թիրեւս հոս կայ թիթեւ լուծում մը մեր բազմաստակ տառապանքներուն: Ազօթելու զրկուած, ատոր խորապէս արձագրի, զայն մասամբ ալ սկսած երիտասարդը ո՛ր օրէնքին մուրճովը բռնադրուեցաւ, բացարձակ ու միակտուր սուղութի մը մէջ, վերադառնալ դարնանամուս գիշերին, մեր ընթերցողներուն վաղածածօթ: Աս ալ չէր ունեցած քառորդէն աւելի տեսում:

.....  
Ստիպողական, տաղնապաղին խօսակցութիւն մը, որ փրթաւ

ալ քանի մը անգամ, անհասկնալի ըլլալուն (հետաձայնը դող էր ամբողջ, խօսողին անձուկը բառերէն անջատաբար փոխանցող), կատարուած գիշերակէտէն բաւական վերջ, դրեթէ լուսդէմ, Հելուան կը կանչէր Արտակ Գասպարեանը, որ չէր հանուած, իրարմէ զօրուար հոգեբու անձնատուր, ու կը մնար սպասումին մէջը տարօրինակ, հրաշխառն բաներու: Անիկա մեծ ցաւով հետեւէր էր Պարզեւեանին տղուն, որ, ով դիտէ ի՞նչ «ճակատագրական ծայնքէ բռնավար», Գահիրէ իննիւուն, մօրը իսկ չսպասելով, չընկերանալով մինչեւ պանդոկ, վազեր էր կայարան, վերին եղիպտոս ԽՍՐՅԵՐԻՆ ոլտարաստ կառախուսքը մտնելու (կայարանէն մօրը հասցէին ձգուած բացիկ մը կը յայտնէր որոշումը հարաւային կիսադուստ անցնելու, ճանչնալ կարենալու համար «մթին ու հեքիաթոնակ» Արեւելքը, ի պատրաստութիւն իր մեծ դործին: Սա դիրք կարողացող մայրը տեսմէ, առնուաղն հեռագրաց այդ տողերուն տակը ծածկուած մասը սա տղուն հոգիին: Կրցա՞ւ այցուիլ խորհուրդէն, ուր իրար կը կրկնէին հայրն ու տղան, թառուղ դարու անջրգետով մը, ահաւոր հարազատութեամբ): Անոր արտակարգ անսպասանքը, դիմադիժերուն խորք թրթուուն մուկ ուրախութիւնը, խօսքէ սակաւութիւնը, մանաւանդ այգերուն շարաշուք փայլը դժնդակ կերպով խոսնուեր էին Արտակ Գասպարեանի ներքին անձուկին մէջ, դայն անդազար ետ, անսպասին «թաքնաթաղուր» ժամը նետող:

..Մայրատան մատուռին մէջ, զլուսը ամբողջովին ծածկած իր փեքրուն ներքը — ո՞վ կը դնէ մեր ձեռքերը այդպէս իրարու վրայ կամ մեր դիտուն, մանաւանդ սիրտին վրայ — Արտակ Գասպարեան մտքին առջեւը ունի այդ անմոռանալի լուսադէմը, խելացնոր արտադուստրուսը, դէպքերու խելացնոր իրականութեամբը, որոնք, երբ կը թաւալին ժամանակի ատամներուն ընդմէջէն, այնքան անձուկ են ու հրաշք, ու ամիսներու ընթացքին դեռ չեն պարզուիր, յիշատակ դառնալու անկարող, այնքան իրենց խուժումի բոսկիներուն խոտութիւնը դանդաղ կը տարբարակուի: Հոն է, կէս խարխուլ մահիճին մէջ երկարել ուզող, բայց չկրող արեւմտահայ մեր արձակագիրը: Փոքր, դժբախտ, քայքայուն այդ խուցէն ոչ մէկ աղօտանք, այլայլում: Ու ինչպէս ամէն անգամ, մատուռին ներսն իսկ անիկա կ'այցուի դուրսէն ներս թեւ բացող հովէն, որուն կը պակսի եղբեւաններին քիչիկ մը մարմին հոտող ալիքը: Ու պահին յատուկ այն բացատրիկ ալ զգայութիւնը, որով իրար կ'ամբողջացնեն մեր միտքի անհունին նետուած փշրանքները ջղային սարսուռներու, կարծես իրարու ճիտ պլլուած, դուրս փախելու համար քառնէն, — ըլլալու համար օր մը ապրուած պահը կրկին, բայց վճռական հաւատարմութեամբ մը: Միշտ միտսին: Մահճակալը պարտէղէն հոն քաշելու վրայ ուրուականները, Հոգիները ծաղիկներուն, ելեկտրական լոյսին փարթած պատասառը, պատերուն, աթոռներուն, մանաւանդ մեղրամոմ դէմքին վրայ հիւսնդին, վճռական նոյնութեամբ մը դրաւած անոր միտքը, իրաւ, չբացնելու աստիճան դողալը կամարը մատուռին, դայն լեցնող այն բազմազան իրերէն, որ նոր տեղերու վրայ այնքան արագ կը զարնէ մեր գիտութիւնը: Կա՞յ, չկա՞յ քիչ անդին իր առօթքին մէջ փակ խորհուրդը մայրապետին, սա ալ ողբերգութիւն, ով դիտէ քանի՞ տարիներու վրայ երկարածիկ հոգեվարք, ինչպէս կը

Թելադրէ պատկերը սա զոհարերումներուն, երբ կու գայ մատաղ այդ մարմիններէն: Ու Թերեւս նոյն ատեն ալ անյրջապիծ, ծփուն մաքրութիւն, անշամանդաղ կուտութիւն: Առանց նայելու, առանց ուզելու, ազօթոյ սա ձեւը է՝ այդ ամէնը սա տղուն մտքին մէջ, ու է, տակաւին, նոյն ամանակով ու նոյն պայմաններու վրայ Մոնա Գոհարեանը, ան ալ ճերմակներու մէջ, բայց կարմիր, արեան արատներով տեղտեղ վողոյուն, մութ գաւերու գելունքին մէջ, սրսիւն, Հեռու, նուաղուն, զընդէջ՝ երկրի եւ երկնի», բուզէներով անշուշտ սառու, սպառու, ըյայտու համար մէկէն երիտասարդ միսերու դառնագին ծրխում, ցնորւմ, վերձակը հայածելու չափ ուժգին: Ու անոր ալ ետրեւին մարմաչը, դալուկ ճերմակ, դեղինի պարնոց, որուն վրայ արտեաններն ու Թարթիչներն իսկ տառապէին, զըջային...

Պատկերներու սա պարը, իրարու մագոյ ու իրարմէ սարսուփով փախչող, բռնանալու, կործանելու, տիրակալելու նիւթական դգալութիւններ արթնցնող, Արտակ Գառապաբեանին մէջ շուար, անբացատրելի Հանդէս մըն է, իր սկիզբը ըրած ամիսներ առաջ, արձակագիրին մահէն ազգին, անոր տունը իրարու հանէ Հարուածող աղէտներու վրայ բեմադրուած: Անիկա չի կրնար ժամանակի մը մէջ տեղափոխել այս ամէնը, այնքան զէպրեր եղան աննախատեսելի եղբերակներու թիւ: Իր անհուն բարութիւնը կսկծագին փորձերու ենթարկող շարքին սա յաղթական արշաւը, իր սիրածը ճշմունքէն՝ կոծանող սա ինքնաբերական (այնքան տարօրինակ է տակաւին անոր բանականութեան առջեւ անապատին ժամը), ու մանաւանդ զի՛նք մեր մագանցուկ յիմարութեան, դասն կ'ընեն կամազուրկ խլեակ մը, հասկրնալու, անհնելու բոլորովին անասակ, ինքնամիտի, լռաստղ, զբլուխը միայն թաղած ասիերուն փոքին, նոր մահուան մը շատ հասնական արաման ալ կրելու պատրաստելով արդէն ուժասպառ իր ջիղերը — մի մոռնաք մանկարած բժիշկին Հանդիսաւոր վճիռը ու հրաշքի համար այնքան քիչ ու դէշ յարգարուած արդի երիտասարդին հողիցառակը — այդ տղան ինքզինքը կը զգար ահաւոր ճարտարական մը մէջ, բացարձակ անկարողութեամբ մը բան մը ուզելու, ընելու: Կը սարսուփէր մտապաստիքէն, ազօթքի աւարտէն հոք, այդ անդամալոյն կծիկը մատուռէն դուրս փոխադրելու: Արեան իր կորուստին անդրադարձը՝ սա լռումի, անօրպայտի մի զգալութիւնները այդպէս պտրտցնող, թէ այն միւս թուլացումը, որ մեծ տագնապները կ'եղբաւորէ, երբ ժամեր, թերեւս օրեր երկարող մեր խռովքները լայկելու համար մեր հողեղէն ուժին ամբողջ պահեստը կը դործածենք մահուան մէջ ու մահուան դէմ: Կեղանք սուտին ու իրաւին գիմաց ու... զմեզ գտանք առանձին, մեռելի մը կուշտին կամ հոգեւորին գիմաց: Այն ատեն է, որ կը գիտակցինք մեր վառնածին ահաւոր ծանրութեան, դինին: Այն քանի մը ժամերը, որոնք կէս օրէն հոք ըսիք էին այդ տղուն վրայ եւ հիմա կը կենային անոր ետին, դժնդակ լիցունութեամբ, երկարութեամբ, խանդարած էին անոր մէջ տեւողութեան ընթացիկ դգալութիւնները, անոր ուղեղին տակ իրարու շարքներ, ամիսներ փչրուելով, տեղաւորուելով, Հելուանի ամառի, յարազտ փրլլայէն մինչեւ Գթութեան քոյրերու սա հիւանդանոցը... Ի՛նչ անպատմելի յուզումով անիկա գրկեր էր այդ աղլիկը, արեամբ ողորուած իր մահիճէն, փայցնելու համար դաս



զրեթէ Թեւատարած մասէն: Տունէն մինչև հիւանդանոց, միշտ բազուկներուն մէջ, հսկելով անոր սիրտին տուող զարկը, անհնարին անձկութեամբ, արեան մէջ ինքն ալ ողորուած, ա'յնքան՝ որ չէր կրցած իջնալ ինքնաշարժէն ու հիւանդը պատգարակին յանձնելէ ետք, քանի մը բուպէ ինկած ուշաթափ...: Ու նոյն ամանակով, կարծես յապաղումէն տատապող միւս մահիճը արձակադիրին, առ ալ մահւան համար հանդերձուած: Սա ետինքին, այս զոյգ մահիճները տեսնող ներքը հսկաստեան տղաւորութիւններու թուռն իրենց հակադրեցութիւններով, վախ ալ էին, քանի որ կը յիշեցնէին իմացական խաւարումը իր մէկ ընկերոջ, որ մտած էր մաքի գիշերին մէջ աս սկիզբով, զորաւոր յուզումներէ քայքայուած իր շիդերը հանդիպեցնելու միջոց չգտնելով ու երեք օր, երեք գիշեր կրկարող զգայախաբահան տեսիլներէ ետքն էր ինկեր քունի, խնթ մը արթննալու համար: Սոնա Գոհարեանին մահիճը, նոր, թարմ, այլապէս սրտազրաւ, տեղի տուաւ սակայն միտին, որ, միակտուր տեսարան մը իբրեւ, զբուսեցաւ անոր ուղեղին, — բեժը զբաղէտին հոգեվարքին, ընտանի, բոնուոր, վրան խուժող՝ օրուան ընթացքին, զիչ մը ամէն տեղ, քաւած, կերած, խօսած, կարդացած ատենները, զործտան իր տեսբակները վերածելով Հելուանի սենեակին, բիրտ, անակնկալ, աննահանջ, խանդարելու շափ կեանքին սոյնորական զնացքը, հաջիւհաջ դաննալով իրականութեան, բարեկամներու, խօսակիցներու զօրաւոր ընդմիջումներով: Բայց այս խուժումը, պայմանադրական, անվերջ կանոնաւորութեամբ մը, ամէն գիշեր, ժամը երկուքին, մէջտեղէն կտրելու համար իր վերդիկալ քունը: Երեք ամիսներ անցեր են այդ գիշերէն: Բայց հոգեվարքը ոչ իսկ փչրանք մը կորսնցուցած է իր արհաւիրքէն, պահելով իր սկզբնական տեսարանին սարսաղէն մանրամասնութիւնները, յատկութեամբ մը, որ գինն է հանապազօրեայ կրկնումներու, փոխարինելու շափ յաղթականօրէն ցերեկուայ իրականութիւնը, զործին շարժումները, նոյնիսկ սիրահար երկտատարդի իր բանկումները...: Պիտի արթննար ընդոստ, ամէն գիշեր, «հեւքի» մը խոնաւ սղոցումէն, որ յստակ էր, սարսափելի ըլլալու աստիճան, պղտորելով գիտակցութեան իր դարձը (քունէն անմիջապէս ետք)՝ հեռացող մեռելի մը ներկայութիւնը, լսելու աստիճան սրտիումը անոր դանդաղ մարմինին, քաջութիւն անոր մուսկուներուն: Ու բո՛ւնցք: Այսինքն՝ իր սփերէն ամուր քակուող բուռնցքը մեծատաղանդ զբաղէտին, այնպէս՝ ինչպէս զգացեր էր զայն Արտակ Գասպարեան զարնանամուտ լուսդէմին: Արտակ Գասպարեան միշտ պիտի զգար այդ բուռնցքը իր սփերուն մէջ — ինչպէս տուեր էր զայն զբաղէտը, իր վերջին քառօրէին մտնելէ առաջ — դեռ, ամիսներ ետքն ալ, շաւրուած պահելով եղի, թրթռաղին, զբքրուող, զբոսիքի մէջ լուծուող անոր մտանքուն, հիւսուած ամուր իր սփերուն, պաղատագին ու եղկելի, որոնց արդիւնաւոր ըլլալը պարտկել իրենց պրկումները, զալարումները, անձուկովը՝ կատչելու տեղ մը հալածող մարդուն, որուն ներքեւէն փոխած էին հաստատուն իրերը, հողն ու քարը, ինչպէս մահաակալը, իր երկաթները փրթուլ լարերու նման երկարուն, զինքը ձգելով այսպէս տակախ, ընդմէջ երկրի եւ երկնքի, եղերապէս հաստատելու համար կարծես անոր ամէնէն խորունկ տարագներէն մէկը, — ընդմէջ կնամփի եւ մահուան, որ կը

տպաւորէր, հակառակ ըսուածքին խոր թառերականութեան, կեանքը այնքան լեղի հեշտութեամբ արժեւորած ու մարդը, որ ծաղրեր էր մեր մէկ քննադատը բանաստեղծի մը մահը քերթուածի վերածելուն, իր կարգին, պիտի զգուշանար այդ ծիծաղելիէն: Եթէ մէկ մասը այդ վերջին արարին քալեց համաձայն իր նախատեսութեամբ, ուրիշ շատեր նոր էին անոր ջիղերուն վրայ: Դուք գիտէք որ մահւան, այսինքն՝ անկէ ետք ու վեր կեանքի մը վրայ հիմնովին ապահասաւ այդ մարդուն բերանէն բառը — մա՛հը — տարիներ ու տարիներ, թաւալելով, թաւալելով կորսնցուցած էր իր դրական թելադրանքը, դայն մէկէն, այնքան անակնկալ վերահասութեամբ մը, աննահանջութեամբ մը գտնելու համար զարնանամուտ կէս գիշերէն ետք: Ըսի, թէ իր ուզածին մօտիկ էին պայմանները այդ հանգէսին: Բայց չըսի՛, թէ որքան իրաւ պիտի դատէր անոր անպատրաստութիւնը:

Դուք գիտէք նախերգանքը: Գիտէք առաջին ալ արարը: Հաւքունի պէս դադար մը: Ճիշդ վարագոյր մը բանալու տեսողութիւն մը կերպարանոց կարծես: Որուն ընթացքին, իր մատնէրուն ծայրին կոխելով Սոնա Գուհարեան պիտի փորձէր զանաւ իր մօրը ծոցը, հոն լալու համար իր թշուառութեան դերագոյն արցունքը, անոր ալ պարզելով անապատը, իր ճշգրիտ իմաստին մէջ: Դէպքերը քալեցին ուրիշ քալուածք:

ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆ

(Շար. 25)

### Դ Ա Ր Ձ Ի Դ ...

Աստուծոնքը հորիզոններէն սնդիկ կը ննջեն,  
Իսկ ցիրիկները  
Մեզի, անհորիզոն պահեր կը գծեն՝  
Փարելու համար  
Մբուքիւններու  
Նախահորիզոն լիկի ժամերուն:

Ո՛ր մէկ խնկարկու բող ուղումն  
Ձիւ,  
Մտիի նման ծլարձակուող  
Տիեզերաբազմն եմ լոկ:

Ձոյց սլաքներու սպասում մը պիրկ  
Կանգամալուծէ գրեթէ շրջանն էլեկտրոնիք անգոյ թիւերուն,  
Ռոմն կը գուժեն  
Միացումներու,  
Ապա վերստին բաժանումներու պահերն ահարկու:

Ես իմ եսիս մէջ կզպումս այնպէս՝  
Եւ շուշաններու սպիտակութեամբ  
Բազմապատկուող արիւտենջն եմ:  
Յազազումդ արդէն՝  
Ձեամուող մբուք:

Դարձիդ՝  
Մարգարիտներս շաշլօրէն սերմանեմ պիտի  
Ձգացումներուդ աննամբրին թալուքիւններուն...

Է՛ՐՕ ՍԱՐԱՃԵԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ



ԽՄԲԵՐԳԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԸ



Փլւում ես, Վառվառա: Չգիտեմ էլ՝ որտեղից, ինչո՞ւ յայտնարեկեցիր դեռևս թաքուն, անտեսանելի աղէտը:

Այդ աղէտն անորչ է, ինչպէս շուրջդ գտնուող քաղաքիւ հիւանդածին մանրէներէ գոյութիւնը, որոնք ոչ գոյն ունեն, ոչ հոտ, բայց օւտում են քեզ, քայքայում մարմինդ՝ մահուան հասցնելով կատարեալ ներդաշնակ մի բան, որ մինչև վերջերս ինքդ համարում էիր քեզ: Այդ աղէտը շնչում ու արտաշնչում ետ, նա քո շուրջն է, քեզ պարուրած, արեանդ մէջ է, ու զու ուշացումով, աւա՛ղ, շատ ուշացած ես զգում, թէ ոնց ես ամէն վայրկեան աւերում՝ լքուած սան նման:

Լքուած տունը ի՞նչն է աւերում, այդ ի՞նչ ուժ է քայքայում նրան: Այդ նոյն փոթորիկն ու աղէտը, այդ նոյն անփութութիւնն ու կոպտութիւնը ինչո՞ւ չեն ազդում սան վրայ, երբ ներսում մարդու շունչ կաք: Մոռացո՞ւմն է աւերում:

Աւերակն էլ, ախր, պատմական աւերակի նման չէ՝ փառաւոր, վսեմ, իր տոհմով, հարստութեամբ հպարտ: Իսկ աւելի շատ աւերակ-աւերակ խաղալու է նման՝ կեղծ դասական ողբերգութեան, բայց խորքում, ամբարտաւան ինքնավստահութեամբ այդ պատմականը քմծիծաղում ու ասում է, թէ տեսէք, հա, այս վիճակում էլ, խղճուկներ, կը խոնարհեցնեմ ձեզ, ուղենամ այսպիսին չեմ լինի, դոնէ մեր մտապատկերում երբեմնի շուրջով կը յառնեմ,

... 1 1 1

կը խաղամ ձեր անսփառութեան վրայ, ինչպէս դար ու դարեր եմ խաղացել: Լքումից աւերակուած տունը այս պատմականի հետ կապ չունի, մի ուրիշ բան է: Մի թաքուն, անսոթ հիւանդութիւն է, որ ուզում է ինքն իրեն մղել դէպի վէրքը, վախից կուշուրուած, հայեացքը դէպի ներս՝ խոկարով անցածի վրայ: Նա այլեւս արժանապատուութիւն չունի եւ նախընտրում է մուրափիկի կեանքը վսեմ մահուանից: Նա Ղրաճօրէն արողում է, սո՛հն կորստի հետ համակերպուելով ու համոզելով ինքնիրեն, թէ կորցրածը ընդամէնը մի աւելորդ բան էր, ճշմարիտն ու պիտանին հենց այն է, ինչ հիմա կայ, մասցել է: Այդ լքուած տունն այդպէս էլ հալում է՝ համակերպուած ու աննշան, առանց յուշի ու առանց արտասանքի ցաւի:

Գուցէ մի քիչ շատ էր շարութիւնը, հը՞, Վառվառա, թերեւս ինչոր լաւ բան կարելի էր այդ տանը վերադրել:

Ատենը՝ երազը, որ տեսար նրա շորս կիսաքանդ պատերէ մէջ:

Երազիդ՝ անձրեւից վարարած, սղատր դեռ էր, որ յաղեցած հեւացով խախտում էր լուսթիւնը: Լուսթիւնը անսպասելի վրայ էր առել թուր կողմերից, ոչ մի տեղը չէր ցաւում, ոչ մի աղմուկ չկար, կէսը էլ չկար. կէսը՝ հողուղ ու մորմնիդ հալալ կէսը՝ չէ, աւելի ճիշդ, միջուկը՝ անբաժանելի ընկերուհիդ, նոյն ինքը Վառվառա ինկանոսեանը, միայն քիչ աւելի փոքր չափերով, այնքան, որ մատրյոշկայի նման, որպէս երկրորդ շերտ, տեղաւորուել էր մէջը, բայց անընդհատ դուրս է պրծնում պատհհ ու անպատհհ, մէջ է ընկնում, խտնում կեանքիդ սովորական հանդիստ ընթացքը, յաւանոտ ցանկութիւններով ուզում է ամբողջովին տիրել քեզ, բայց քանի որ դեռ ուժք լրիւ չի պատում, շարութիւնից խելագարուած քամում է սիրտը ու հողիդ, բաժանելով կեանքը երկու մասի, քեզ՝ երկու մասի, դու եւ դու, դու՝ ջո դէմ, դու՝ ջո մասին, դու՝ նրա դէմ, դու՝ ջո դէմ:

Երազումդ մի քիչ փոքր Վառվառա ինկանոսեանն էլ չկար: Միայնակ էիր, նոյնիակ սառնարանի միալար դուրսոցն էր կտրուել:

Եւ դու, Վառվառա ինկանոսեանդ, միայնակ դուրս եկար պատշգամբ:

Մայրամուտի թանձր, նաբնջագոյն ամպերը՝ վաղուայ արեւալի նախանշան, հեռացել էին դէպի հորիզոնը, ու գունաթափ երկինքն էր՝ լոյսի վերջին թռկումը: Իսկ անձրեւից դեռեւս խոնաւ պարաններին լարախաղաց՝ ներք պէս վեր ու վար էին անում եօթ դեղձ՝ խոնաւութիւնից աւելի վառվառուն ու բուրաւէտ:

— Այս օրտեղի՞ց, — զարմացար ու վեր նայեցիր՝ մթնոդ երկինքն էր: — Երկնքից՝ անձրեւից յետոյ, դե՞ղձ:

Ներքեւում, անձրեւափոսի մէջ մի դեղձ էր լողում: Ամենահասունն ու ամենագեղեցիկն էր: Ափոսս, ոնց էիր ուզում հասնել նրան, բայց ինչքան էլ ձգուէցիր, թպրտացիր, չհասար:

Յուսահատուած շրջուեցիր, տեսար Յիլսմէ սայլայում լիքը դեղձ՝ ցեխոս, ճխուած, տխրոյ: Աչքերդ փակեցիր ու փախար:

Արթնացար, ուչ դիշեր էր: Կէսօրից քնած էիր: Ոչ Գոռն էր տանը, ոչ Այծեմնիկը: Սեւանում էին: Ու դու, հոգսերից ազատ, վայելիք էիր Կիրակիդ, քնել էիր:

Հանդատութիւնից գերյաղեցած, անխառն հայեացքը պտըտեցրիր շուրջը: Երազդ այդ պահին վերջացած էր, նոյնիակ չէիր էլ յիշում: Յետոյ, երբ ժամանակը գայ, կը յիշես երկնքից առաքուած դեղձերը անհաստատ պատմութիւն:

բաններին, ամենացանկալին՝ ջրափոսում, ունեցածներդ՝ ցեխոտ, լինեա՞ծ, տխեղծ :

Հիմա Հանգստից յափրացած Հայեացքդ պտրտեցրիր շուրջդ, փորձելով կողմնորոշուել, թէ մ'էր ես, օրուայ մ'ը ժամն է : Տեղը տեղին բերելով արթնացումդ, ելար անկողնուց : Հեռախօսի տաղնապոտ ձայնը տարտամ քայլերիդ նպատակ տուեց :

Լսափողում լուսթիւն էր :

Թաքուն ցանկութիւն խլրտաց մէջդ :

Կուզե՞նայիր, որ մ'ի լինէր դժի միւս ծայրում, Վառվառա :

Ձէ, ընկերուհիդ չէր հարցնողը, դու էիր : Որ մ'ի լինէր :

Չգիտէիր : Լսափողը դրեցիր լծակին : Մի երկու վայրկեան սպասեցիր : Չանդը չկրկնուեց :

Պատշգամբ դուրս եկար : Չորացած բարդին, հազարաձեռ խրտուխլակի պէս, տարուբերում էր քամուց :

Բակի կատուների պայթուցիկ ճղճղոցը մի պահ կենդանացրեց գիշերն ու մտրեց :

Ինչի համար կուտւմ էին, բաժանուեց, կամ ամենատուճեղը տիրացաւ : Ինչ որ է :

Բայց անհնար է, որ այսպէս էլ մինչև լոյս շարունակուի : Մի բան պէտք է լինի՞, թէ ոչ : Թէկուզ հեռախօսազանդ՝ առանց ձայնի . թէկուզ կատունները, թէկուզ միւս Վառվառան՝ ներքինդ : Ձէ, նրան չես ուզում : Վախենում ես նրանից : Յոգնել ու զղուել ես նրա յարատեւ ներկայութիւնից : Այսպէս լաւ է, լաւ... :

Հենց այդ պահին էլ յիշեցիր դեղձերը :

Ի՞նչ կապ ունէր երազդ անցած օրուայ սպրումներիդ հետ : Ենթադրաւորապէս ի՞նչ նախանշաններ էին այդ դեղձերը՝ կարօտեալ ու անհաստատ, կարօտեալ ու կորուսած, կարօտեալ ու ցեխոտուած : Փորձեցիր յիշել անցած օրը : Սովորականի պէս աշխատանքի դնացիր : Ամբողջ օրը գրեթէ մենակ էիր բաժնում, չհաշուած ընդմիջման առաջին սուրճը, որ աղջիկներով սովորաբար ձեր սենեակում էք խմում, մինչև դրսի՝ բացօթեայ սրճարանի երկրորդ սուրճը :

Աղջիկները երէկ անսովոր տխրամած էին : Մէկի առամն էր ցաւում ու նա, ի դէպ, շատ սիրունիկն է, ծերութեան ուրուականից վախեցած, կըծկըւել էր լուսամուտադռոյն : Լուսամուտի կամարը երկու մետր բարձրութիւն ունի ու խորանի նման է անարեւ, անհրապոյր սենեակում : Եէնքում, ժամանակին քաղաքի նշանաւոր թատրոնն է տեղաւորուած եղել, իրազարձութիւնների կիզակենտրոն էր այն, բայց հիմա, չնայած արտաքին վեհաշուքութեանը, սառն ու անյարմարակէտ հիմնարկութիւն է՝ նեղլիկ սենեակներով, անհաստալի բարձր առաստաղներով, խորանի պէս լուսամուտներով : Անկապ ու աններդաշնակ չափումների մէջ դու քեզ կորսուած ու միայնակ ես զղում եւ ասելութեամբ նայելով իւզաներիով խեղդուած պատերին, մտածում ես փախուստի մասին :

Դա էլ է անբաժանելի մի դրացում, ինչպէս վրադ սեւեռուած գործնականը՝ Մաթեոսի Հայեացքը, կամ ընկերուհուդ՝ միւս Վառվառայի զոյու-թիւնը՝ ներսումդ, կամ էլ՝ արդէն կեանքումդ իր հաստատուն տեղը գրաւած փլուզման այս վերջին, ամենանոր աղէաը, որ յայտնաբերեցիր ու պահեցիր :

Այս վերջինը որ յայնուհեց, քեզ թուաց ընկերուհիդ է երերում, վերջը եկել է: Ըրճուանքով երեւակայում էիր նրա եզմուած, յաղթահարուած փոքրիկ կերպարանքը՝ յաղթահարուած անհող եւ անխոցելի արտաքին պատեանիդ տակ:

— Ա՛հ, վերջապէս ազատուած եմ զեզնից, անիծուած, — քմծիծաղում էիր, քնքնազոհ հոյեացքդ մեխած հայելուն: Գիշերազգեստիդ օձիքը բացեցիր ու սկսեցիր դիտել նախկին կերպարանքդ՝ զայթակղիւ կեցուածքներ ընդունելով: Հիացար աշխարհարէ ուներովդ ու նրբին կրծքերովդ, սեւաթոյր վարսերիդ ծանր ալիքը շողարձակեց հայելու մէջ: Անպատելի քաղց զղացիր ու խոհանոց վազելով՝ անտվոր ազանութեամբ, գիշերային անպատեհ ժամին, սկսեցիր ուտել:

Ուրախութիւնից ու շարութիւնից ախորժակդ աւելի ու աւելի էր բացուում:

— Ազատուած եմ զեզնից, անիծուած, — մտքուդ միայն այս բառերն էին: Ու ծամուած էիր, ծամուած:

— Հօ զազան շեռ, վաւառա: Բաւական է ուտես: — Ընկերուհիդ շքամբ էր անակնկալից: — Ես մինչեւ հիմա կարծում էի նրբակրթ արարած ես, թանկագինս, բայց այսօր ոնց որ անասուն լինես: — Նա, իրօք, շքամբ էր: Կարծում էր մինչեւ ուղնուծուծը քեզ գիտի, պարզուեց՝ դեռ անակնկալ յայննազորութիւններ անելու հնարաւորութիւնդ չի սպասուած:

Նրա խուլ ձայնը լսելով՝ թուլացար: Սարսափահար մի կողմ հրեցիր ափսէն ու տեղիցդ վեր թռար: Ոնց որ գիմազերծ յանցազործ լինէիր հենց մեղքի մէջ բռնուած:

— Երանում եմ, — մտածեցիր, — ծերանում եմ առանց ապրելու:

— Ինչո՞ւ, — ընկերուհուդ ձայնը աւելի հաստատուն էր ու շարաթիւնդ, ինչպէս միշտ: — Վա՛ւս ես ապրում: Ի՞նչ չունես: Տուն ու տեղդ ուրիշներինից աւել չի, պակաս էլ չի: Մարդդ, երեխայդ ումի՞ց են պակաս: Գործդ էլ կայ, փառք Աստծոյ: Տեսքդ էլ ուրիշ, տանելի է: Մի խօսքով, գլուխդ կախիր, խելօք ապրիր: Ընտրեալ չես: — Գլխիդ տուեց: Քմծիծաղով, կամաց կտտացրեց գլխիդ:

Այդպիսի զարմանալի յատկութիւն ունի ընկերուհիդ: Բոլոր մտքերդ կուհուած ու կտտացնում է գլխիդ: Նա այնպիսի խոր հաւատով է որեւէ կուհուած միւս վերադրում քեզ, այնպիսի անսխալական հաստատութեամբ, որ մնում է միայն հաշտուել եղածի հետ:

Երբ դեռ քեզ թուած էր, թէ սէր ու սնորհն էիր անձիդ, հողուդ, նրա նուազագոյն ծրուոցներն անգամ ոչնչացնում էիր առանց որեւէ ճիգի ու խղճահարութեան: Երբ քեզ թուած էր, թէ յաջողակ ես ու խելօք եւ գեղեցիկ ու սիրուած, նոյնիսկ նա էր հանդուրժում քեզ:

Հիմա բան չարած, նա շարութեամբ քաղաքով մէկ տարածում է շեղած արկածներդ, շների բերանն է տալիս գաղտնիքներդ, իր ուզած ձեւով է դասաւորում կեանքիդ ընթացքը: Նա բամբասանքի կոնցրետ է՝ յարմարաւէտ տեղադրուած էութեանդ մէջ, միայն ջո առուծախով է զբաղուած: Նա աստուծ է քեզ անվերադարձ կրքով: Ի՞նչ նրա կեանքի նպատակն ես, զոյրութեան հիմքը, եւ յնակահարար նա մահուան չի հասցնի քեզ, բայց ապրել էլ չի թողնի, կը լինես ոչ կենդանի, ոչ մեռած, որ նա պահպանի իր գոյութիւնը: Միջին վիճակն է նրա բարեբեր օգը, կենսահալթը, ու դու նրա օգնութեամբ միշտ կը մնաս այդ միջին գծի վրայ:

Նա կուսում է զո իւրաքանչիւր միտքը, ցանկութիւնը, դժգոհութիւնը: Գրեւէ ինչ եւ ուտելու, հագնելու, սիրելու, ատելու: Նա զո ծրագրերն է ու չի թողնի քեզ ծրագրից շեղուել:

Վառվառա, այդ պիշիւր դու առաջին անգամ զգացիր ոնց ես փլուում: Վրէժխնդրութիւնից քաղցր հարբած, նոյնիսկ մեռնել էիր ուրում, որ ներսիդ այդ դեմքն էլ սպաննէիր հետզ, բայց հետախօսը երկար զանգահարեց. Սեւանից էր, ու դու ձեռքդ հանեցիր տաք լրով լի տաշտից: Ինքնասպանութեան մասին մտածելիս միշտ յիշել ես Պետրոսիտեանին՝ նրա երակ կտրելը բառ Սենկիւիչի: Այիտի հետ շատ էիր սգեւորուած մահուան այդ ձեւով: Զեռաքըդ տաշտից հանեցիր ու կորուած մաշկիցդ ծորացող արիւնը կաթեցնելով յատակին (երակիդ դեռ չէիր հասել)՝ վաղեցիկ ննջարան:

Գոռը հարբած էր ու չէր էլ զգում ոնց է դոտում լսափողում:

— Վարինկա, — դոտում էր հարբած մարդը, — շան աղջիկ, հիմա պառկած ինչի՞ մասին ես մտածում, ալիստ Գանիլովի՞: Նրա ճՅ ժամանակն ես հեռացնում, Վարինկա: Թէ Մազդայիւնէիդ ու Երանոսիդ հետ մոռնալովինս ես նուազում, հը՞, — Գոռը ինչ-որ բառ էլ ասաց, բայց երեւի խօսափողը դիպել էր շրթունքներին՝ լաւ լսուեց ինչ բառ էր:

— Երեխա ս՞նց է, — հարցրիր:

— Ի՞նչ երեխայ, դու երեխայ ունե՞ս որ: Ի՞նչ երեխու հէրը ես եմ, մօրն եմ փնտրում, Վարինկա: — Գոռը հո՛հոսց ու խօսակցութիւնն ընդհատուեց: Նստել էիր մահճակալին, ու երկար ժամանակ երեւոյ վառում էր ամօթից: Ականջներումդ Գոռի լքուած ու շար ձայնն էր: Յիշեցիր ամիսներ տեւող անքնութեանդ նուպաները, երբ նրան էլ՝ տանջաւար ու յուսահատ, չէիր թողնում քնել ու անվերջանալի, մոլեգին մենախօսութիւններովդ քրքրում էիր հողին: Օրուայ տպաւորութիւնների, կարգացածդ գրքերի, հանդիպումների ողջ նստուածքը, որպէս անպէտք մի բեռ, ուզում էիր տեղաւորել նրա ուսերին:

Վերաւորանքից դժուած, Գոռը փորձում էր այդ բեռից ազատուել՝ երբեմն բռնութեամբ տիրելով քեզ:

— Վերջ է վերջոյ, գիշերները ուրիշ բաների համար են, անքում էր նա, — կարո՞ղ է ես զո զոյգը չեմ, Վառվառա: — Թերարժէքութեան կասկածից խեղճացած, նա փորձում էր ազնութեամբ ազատուել քեզնից: Բայց նաեւ զգում էր, որ ինչ-որ ուրիշ մի բան է կատարում: Մեղքը իրենը չէ: Վկան սիրոյ հրաժարութիւններն էին, երբ երկուսդ էլ իրարից դու՛հ, դոտում էիք կարճատեւ, բայց խաղաղ մի հանդրուան՝ կասկածներից ու վախից զերծ, մտքուր, հաստատուն:

Այդ պահերին կամ օրերին հաւասարակշռութիւնը խաղաղ ծովի պէս փայտատակում էր հորիզոնում, ու կեանքը հունի մէջ ընկած՝ լող էր տալիս գէպի սպառսն: Այժմն մանկական բնազդով աշխատում էր չխանդարել, հակառակը, անհաստատալի խորամանկութեամբ աւելի էր կապում ձեզ մէկմէկու, իր պահանջներն ու քնքշանքը երկուսիցդ էլ հաւասարաչափ պոկելով:

Մահճակալին նստած դրա մասին էիր մտածում ու ամօթից վառում էր երեսդ: Գոռից շնորհացար, հակառակը, խղճահարութիւնից լացող զալիս էր: Յիշեցիր նրա սքանչելի ուժեղ մարմինը, ու լացդ զալիս էր, յիշեցիր յոգնած, բայց յամառօրէն գծագրին խոնարհուած դէմքը՝ լացող զալիս էր:

Գնալուց ասոպ յուշահամալիրի նախագծի վրայ էր կոպացած նրա յոգնած դէմքը:



Գու սուրճը վերջացրել ու բազկաթոռի մէջ կծկուած՝ շարունակում էիր ծխել:

Այժմեմիկը քնած էր ու անսովոր լուսթիւն էր տանը:

Քիչ առաջ անձրեւ էր եկել, ու գետը քարայցած նախնական անմեղու-  
թեամբ խլչում էր, կարծես տրամալայի դժերը նրա վրայով չէին գնում-զա-  
լիս պողպատէ օձերի պէս, կամ էլ երկու օր առաջ այն կիներ կամբոյից կար-  
ծես չէր նետուել ջրի մէջ ցցուած բետոնէ սալի վրայ: Անխալ նշանառու-  
թեամբ ծեփուել էր հենց բետոնին ու կամբոյի բազրէքներին խմբուած ժողո-  
վուքը ահնայելէ ինչ-որ հրաշքի էր սպասում: Հրաշք, ի հարկէ, չեղաւ,  
չտապ օգնութեան մեքենան, Միլիցիայի ուղեկցութեամբ տարաւ մեռած կնոջը,  
իսկ կանգնածներէ մէկը, մի յիսուն տարեկան տղամարդ, սկսեց նրա կեն-  
սագրութիւնը պատմել ու մահուան պատճառները բացատրել:

— Գու, — հարցրէր, — յուշարձանները յիշողութիւն են, թէ գեղեց-  
կութիւն քաղաքի համար:

— Երկուան էլ:

— Համ էլ վկայութիւն են, չէ՞:

— Վկայութիւն էլ են:

— Իսկ վէրք չե՞ն:

— Վէրք էլ են:

— Իսկ էդ բոլորը ինչի՞ համար է, Գու, — հարցրէր:

— Սկսուե՞ց, — առանց ընդհատելու զծելը, — քմծիծաղեց Գուք:

— Ի՞նչը սկսուեց, Գու, — դու ձգուեցիր տեղումդ, — աշտինքն ի՞նչ  
կար, ի՞նչը սկսուեց:

— Մի խանգարի, պիտի վերջացնեմ, — ասաց Գուք:

— Ես էլ պիտի վերջացնեմ, — ասացիր դու:

— Սկսիր, — Գուք շրջուեց դէպի քեզ ու սովորական օտար արհամար-  
հանքով սպասեց:

— Ես Սեւան չեմ գալ, մենակ գնացէք, — ասացիր, — ինձ մենակ  
մնալ է պէտք:

— Լաւ, — ասաց Գուք ու շարունակեց զծել:

Այլեւս չխօսեցիր: Նրա ա՛յրքան հեշտ զըջումից շրճած, ելար տեղիցը  
ու գնացիր քնելու: Յաջորդ օրը կարծես ոչինչ չէր եղել, ամէն ինչ հարթ ու  
խաղաղ էր. ճաշեցիք, Այժմեմիկի հետ դրամեցիք, երեխան քնեց, դու հե-  
ռուստացոյց էիր նայում, Գուք դժում էր: Սուրճ տուեցիր նրան: Նա խմեց:  
Անեկզոտ պատմեց զօրքանչի մասին, ծիծաղեցիք: Յետոյ դու պատմեցիր:  
Ծիծաղեցիք: Յետոյ, իրար հերթ շտալով, պատմում էիք ու ծիծաղում:

Գնացիր քնելու, նա աշխատում էր: Լուսադէմին զգացիր՝ պառկած է  
կողքիդ, բայց քնած չէ:

— Ինչո՞ւ չես քնում, Գու, — գործեցիր քնատ ձայնիդ հոգածութեան  
երանդ տալ:

— Առաւօտ շուտ դժում եմ, երեխային էլ եմ տանում, — ասաց նա: —  
Ինձ էլ, թերեւս, մենակ մնալ է պէտք: Բայց ինչ լինելու է, չի լինելու, ե-  
ղածը մի աղտոտի: — Չէր խնդրում ու չէր սպասում:

— Լաւ, — ասացիր:

Մահակայիդ նստած, ձեր վերջին խօսակցութիւնն էիր յիշում ու Գու-  
ո՞ր քիչ առաջուայ ձայնը:

Լիակն ու շար, հարբածութիւնից խուստ այդ ձայնը անծանօթ էր ու սարսափելի:

— Դէ, լաւ, — ընկերուհիդ է, — շատ էլ շտաբսափեցիր, ոչ էլ անծանօթ է: Օրը հազար էգպիսի ձայնն էս լսում: Ե՛կնքի երկրորդ յարկի մարդու ձայնը անծանօթ է: Կնոջ հետ նոյն ձեւով չի՞ խօսում: Մեծում էլ է: Ճիշդ է, լաւ էլ պահում է սովու մէջ, բայց նրա կեանքն էլ կեանք չէ: Քե՞զ ինչ է կղել, խեղճ մարդը մի անգամ փորձեց իսկական աղամարդու պէս հետդ խօսել, պատմութիւն սարքեցիր: Իսկ ի՞նչ անի, պիտի նստեցնի՞: Ձի՞ նստեցրել: Երեխան առել, մենակ գնացել է, քեզ էլ, քմահաճոյքիդ մեռնեմ, թողել է սուք-փառք կոտորատուէս:


— Ո՞ւր առաջ եմ կոտորատում, — վիրաւորուեցիր:

— Ինքդ քո առաջ, աւելի վատ: — Ընկերուհիդ չքուեց: Ձգացիր ոնց մնացիր մենակ: Նորից մենակ մնացիր: Լողարանում առշաի տակ ջուրը սառել էր, թափեցիր, դէմքիցդ մաքրեցիր շպարը, երկար, մեքենայական շարժումներով սանրեցիր մազերդ, մտքումդ հաշուելով մինչեւ հարիւր՝ ամէնօրեայ սովորութեամբ:

Ձարմանալի արագութեամբ քնեցիր մինչեւ առաւօտ: Առաւօտեան էլ երեխայի պէս արթնացար: Ձկար տանջալի անյուսութիւնը, որ սովորաբար կողորդելից է բռնում, երբ բացում ես աչքերդ: Կարծես չէիր էլ փակել, պարզապէս սարսափելի մի արդելք յազթահարած՝ յաջորդ արդելքին էիր հասել:

ԱԼՎԱՐԴ ԳԵՏՐՈՍԵԱՆ

(Հատուած)



Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

### ԵՍ ՄԻ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ

Յանձին Ալվարդ Պետրոսեանի, հետազոտողի կը կատարուի Հայաստանի ամենահետազոտողական երիտասարդ արձակադերձերէն մէկը. կարճ պատմութեանը եւ վիպականերով ներկայացող դրամատիկի մը, որ իր խորացող լուսնով կրնայ, Չապէլ Ծառեանէն ետք, կնկայ ներաշխարհը բացող ամենատիրական դէմքը դառնալ:

Գրողներու եւ կին դրողներու միջեւ զատորշում պիտի չկատարէինք, եթէ Ալվարդ Պետրոսեան իր լուսարձակը չկեղորոնայնէր կնկայ կամ հայ կնկայ ներքին ապրումներուն եւ հոգեվիճակներուն վրայ:

Յարդ մեզի ծանօթ էին իր երկու գրքոյկները՝ «Երկրի պայերը»(1) եւ «Թռչնականը»(2), որոնց մէջ ուշադրաւ էին Ալվարդ Պետրոսեանի որոշ պահերու վրայ կեղորոնացումը, առանձին տիպար-

ներ ստեղծելու միտմը եւ բեկակերպիչութեան փնտրութիւնը ու թարմութիւնը: Մական իրենց խորացող, ժամանակաշրջան մը տալու կարողութեամբ եւ հոգեվիճակներ պեղելու յատկութեամբ, անմիջական մեր ուշադրութիւնը դրանցին իր «Եմքերգերի ժամանակը»(3) եւ «Ես մի ծառ եմ ծիրանի»(4) վիպակաները: Մանաւանդ այս վերջինը՝ իր զարմանալի գոյնելով, հոգեբանական անցումներով եւ թիւղղականութեամբ, իսկական տեսակնկալի մը դիմաց կը դնէր ընթերցողը:

Ալվարդ Պետրոսեանի փնտրութիւններն ու արամաչրութիւնները մասնաւոր քանի մը յատկանշական գիծեր զատորշելի են արդէն «Երկրի պայերը» խորացրով պատմութեանը հատորին մէջ: Որոշ կապ մը անցնալին հետ (որ հատորի խորագրէն իսկ կու գայ), յետ-պատերազմ-

(1) «Երկրի պայերը», Սովետական գրող իրատ., Երևան, 1977, 102 էջ, որում համար Ալվարդ Պետրոսեան արժանացած է ՀԼԿԵՄ կնիւկունի «Տարապալ յաւաքոյն գիտք» մրցանակին:  
(2) «Թռչնականը», Սովետական գրող երատարակութիւն, Երևան, 1981, 128 էջ:

(3) «Եմքերգերի ժամանակը», «Սովետական գրականութիւն» ամսագիր, 1983, թիւ 12, էջ 6-57:  
(4) «Ես մի ծառ եմ ծիրանի», «Գարուն» ամսագիր, 1983, թիւ 4, էջ 28-45:

ևան ժամանակաշրջանին առընչուած փորձառութիւններ, եւ ասպ՝ ինքնուրոյն անհատականութեամբ կիներ, որոնք շատ յաճախ դատան իրականութեան մը ընդմէջէն կը պատկերացունին, եւ երբեմն ալ աշխարհութեան, չհրեաթի ձեւով կը դրսևորուին:

Միջին տարիքի մէջ գտնուող բժիշկ մըն է Դաւիթ, որ ուշեւա բարձր կացութեան մէջ կը գտնուի, սակայն մանկութեան դժուարութիւնները, յետ-պատերազմեան դատան տարիները, չօրը վերադարձը (հասանարաբ աբորէն), եւ չօրն ու իր յարաբերութիւնները յաճախանքի նման մտքին մէջ կը մնան դամուած: Դաւիթ երկու ժամանակներու մէջ կ'ապրի: Յտտակօրէն տարրեր են երկու ժամանակները, եւ այս մէկը ամէնէն աւելի ցարտուէ կը դառնայ մէկ կողմէ Դաւիթի եւ անոր ծնողներուն առընչուած յուշերուն եւ, միւս կողմէ՝ Դաւիթի ու զաւկին (Վարդանի) յարաբերութիւններուն ընդմէջէն: Նոյն հարցերով ու նոյն արժեքներով շնն խանդավառութիւններու հայր ու տղայ, որովհետեւ տարբեր կացութիւններու մէջ մեծցած են: Ատենին Դաւիթը խանդավառած շարժապատկերը ոչինչ կ'ընէ ողուն: Պատերազմը, նոյնիսկ հետադարձութիւնը անորոշ պատկերացումներ են տղուն համար («Ապրելու զքո ժամանակը»):

«Մանկութեան տխուր ամանորը» կրկին այդ յետ-պատերազմեան մթնոլորտին կ'առընչուի, ինչ որ կու գայ շեշտելու, թէ հեղինակին համար պարագայական կացութիւն մը չէ պատկերացումը: Թորհրդապաշտական, սեմպրիֆ եզր մը կը ստանայ «Ինչպէս մնալ պապս» կարծ պատմութեան եզրայանդումը: Պատմութիւնը ներկայացնող պատանիին հայրը, որ աշխատասէր մարդ է, սքանչելի տուն մը կը կառուցանէ, ազոռոր պարտէջ մը, եւ զանոնք կը շրջափակէ բարձր պատով մը: Տղաքը, հակառակ վտանգին, կ'անտեսեն մեծ դուռը եւ «պարիսպէն կը ցատկեն» դուրս գալու համար: Իսկ մեծ հայրը, որ միշտ անորոշութեան մէջ ապրած, վտանգի վարժուած է, կը տազնապի, թէ ե՞րբ իրենց

կեանքին մէջ ամէն ինչ այդքան լաւ դասաւորուած է:

«— Ինչո՞ւ է այսքան ամուր դուռը, տղայ, — ատում էր նա, — ի՞նչ եմք պաշտպանելու, ո՞նց շնք քնելու, եթէ այդքան պինդ է դուռը, ինչպէ՞ս չփակեմ աչքերս, երբ փակ է դուռը: Ե՞րբ եմ ես այդքան քնել: Այս ի՞նչ համազասութիւն է, գրողը տամի, ե՞րբ եմք մեծ համազասութիւն ու մեծի: Այս ի՞նչ սարսափելի խաղաղութիւն է: Ես վախեցում եմ» (էջ 53-54):

Անշուշտ, պատանիին հայրը չի կըրնար քանդել պարիսպը, որովհետեւ նման արարք մը շրջապատին համար անհասկընալի պիտի թուի, իսկ մեծ չօր տաղանապը կարելի չէ մեղմացնել: Լուծումը կ'առաջարկէ պատանին, այսինքն՝ իր եւ ընկերներուն պէս պատէն ցատկել: Թոռնիկը կը բարձրանայ պատը եւ կը նետուի գողոց, նոյնպէս եւ պապը: Թոռնիկը կ'ելլէ ոտքի, պապը կը մնայ երկարած... Իսկ զբացիները կ'ըսեն, թէ իննթացած էր մեծ հայրը, եւ թէ՛ այդ հիւանդութիւնը ժառանգական է իրենց զերգատանին մէջ:

Միւս պատմութեան ընթացումը մէջ կը բացէր կ'ըն տիպարներու ներաշխարհը:

Այլապէս Պետրոսեանի կ'ըն տիպարները այդ սեռին գեղեցիկ կամ զարդանկարային ներկայացուցիչները չեն: Ընդհանրապէս՝ անոնք ուժեղ անհատականութիւններ են, իրենց ինքնայատուկ հարցերով կամ առանձնութեան տառապող արարածներ: Օրինակ, «Այլ, իմ ետքի...» պատմութեան սկզբնաւորութեան հետեւեալ ծանօթագրութիւնը կը կարգանք.

«Աշխարհում ամենամիայնակ ծառը գտնուում է Սահարա անապատի Տերեր օտգիտում: Նրան ամենամօտիկ ծառը գտնուում է 1000 կմ. հեռավորութեան վերայ» (էջ 16):

Երիտասարդ զոյգ մը կը մտնէ սըրճարան: Կը հարկադրուի նստիլ տգեղ աղջկայ մը սեղանը: Այդ քիչ մը արտասոց արտաքինով ու հագուածքով արարածը աստիճանաբար կը խառնուի խօսակցութեան եւ կը խանդարէ իրենց հանգիտող, կեանքի սովորական պատկերացումը:

Յատկանշական են պատմութեան անարտիկները արտասանած խօսքերը:

«Լի սեքեւէք, — սասց կիմը, — երիտասարդ էք, ամենայնդեպս, քուսմ էք: Իսկ այդպէս անուշ ու տաք, դուք կարող էիք հենց սկիզբից ժպտալ: Խնչուէ, եթէ երբեւէ ուզեցնաք նկարուիլ, ինձ մտնեկէք՝ Սահարա անապատ, Տերեր օտաքո: Այնուող միայնակ մի ծառ կայ: Այդ ես եմ: Ինչու՞ էք քաշիլ: Երբեմն պիտի է համզուստնալ միայնութիւնից եւ ես այստեղ եմ գալիս ու ձեզ բերում եմ անապատի իմ տեսիլքներն ու պարտագները, քայք դուք փոխարէնը ինձ ոչինչ չէք տալիս: Յոստաթիւն, ո՞վ գիտէ, գո՞ւցէ գաջ երբեւէ...» (էջ 20):

Մական, սովորաբար, Ալվարո Պետրոսեանի Հերոսներուն մեծ մասին առաջնապէս կը բխի սովորական կեանքի եւ սովորական առօրեայ ստեղծած միապատգամութենէն, ճանճրոյթէն, առանձնութենէն եւ մարդու դանդաղ մարտէն: Երբեմն իր կեանքի վերջուրջին կը նեղուի, որ շուքի պէս անցած է իր կեանքը, թէ՛ իւրաքանչիւր կեանք մէկ ուրիշի կը նմանի, եւ թէ՛ ո՛չ մէկ վայր առանձնաշատուկ ընոյթ ունի («Հեքիաթ մեծնող քաղաքի մասին»): Իսկ ընդհանրապէս՝ մարդիկ «Անվերացիք» պատմութեան Հերոսին նման են. առօրեան աշխարհի խեղճացուցած է զիրենք, որ այլեւս նոյնիսկ չեն կրնար համապատասխան կերպով հակադէպ իրենց կրնորական հասարակութեան: Այս պատճառով ալ կիմը իր ամուսինին պիտի ըսէ.

«Ձեռ սպանի, հագիս, — սասց նա, — գրա համար էլ է անհրաժեշտ մթնոլորտ պիտի: Նեռնալիզմի ժամանակներն անցան ու սպանութիւնների եւ նըման գոլիտի դեպքերի համար քաւիչ ու կերպաս է պիտի, սեմնիլի գիշերաւացներ, որ ամէն ինչ գեղեցիկ ու կատարելի լինի: Դրամատիկ լինի, անհրաժեշտ անապատնալ, քէ չէ...» (էջ 39):

Կարծէք այդ դորաւոր էրիվարդը ընկալ աշխարհ, մարդը՝ որ պատրանք պիտի ազդէ արդի կնկան, զօրաւոր կերքերու եւ հակադրեցութիւններու պիտի առաջնորդէ: Իսկ Ալվարո Պետրոսեանի կրնոր

առհասարակ «խելօք» արարածներ չեն. որոշ կենսափորձով, նոյնիսկ որոշ շատ բութեամբ առանձնացող տիպարներ են:

Այս հարցերը աւելի եւս կը շեշտուին «Թոնական» հատորին մէջ, որ իր ընդամենը հեթեթեմով եւ հարցերով կ'ամբողջացնէ «Երկրի պատերը»:

Հատորին երկու բաժիններէն առաջինը կը կրէ «Կանայք» խորագիրը: Հասարակարար պէտք է կոչուէր առանձին կանայք եւ, երբեմն, շրջիլով Հեմինգուէյի հանրածանօթ խորագիրը («Մենք առանց կանանց աշխարհական»...)

Տուեալ շարքին առաջին պատմութեան մէջ, քսան տարուան կին Ալուսին, որուն ամուսինը շատանց մահացած է, պատերազմի 150րդ օրը, կը որդին եւս զրկուած է ճակատ, երազ մը կը տեսնէ եւ կ'անդրադառնայ, որ ի զուր կ'անցնէ իր կեանքը: Ամուսինը չկայ, տղան մեկնած է եւ կրնայ չվերադառնալ... Այս մուսնոյն լուսանկարին կը նայի եւ կը խորհրդածէ.

«Ձառցիք՝ հերիէ է, գու էլ ես մեռի, մարդ ես: Մնաւիլ ես, որ մի քիչ էլ մեզ համար ապրիս: Հոգի ունեւ, մարմին ունեւ, վերքը մեռնելու ես, գնա» (էջ 4):

Տուեալ Հոգեվիճակին մէջ, Ալուսին կը բախէ զբացիկին՝ զինուորական վահանի դուռը, որ տարիներ սպասած է զինք: Հոն կը պոթկայ եւ կը սկսի հանուկ: Իսկ վահան կ'անցնի կողքի սենեակը: Վերադարձին՝ Ալուսին գտած է ինքզինք, վահանէն ներողութիւն կը խնդրէ ու կը մեկնի...

Ամբողջ պատմութիւնը նուրբ հոգեվիճակ մը կը պատկերացնէ, որ սեղմ բառերով եւ թելադրականութեամբ կը զարգանայ: Վրճիկի սխալ հարուած մը եւ երեւոյթները կրնան գեղեցիկանալ, տարբեր ընթացակարգի դիտուիլ, սակայն նման սուլթանութեանը չենք հանդիպիր:

Ահաւաստիկ ամբողջ կեանք մը քսականչող պատահար մը:

Այս բուրբին մէջ ով է յանցաւորը: Գոցն մամանակը, պատերազմը, առհասարակ՝ կեանքը, եւ կամ յանցաւոր պէտք չէ գինասել: Եւ գոցն արդէն ուշ է ամէն

ինչի կամար: Իսկ զարմանալի չէ, որ պատմուածքը կը կոչուի «Մայրամուտի հրավառութիւն»:

Սակայն ընդհանրապէս առանձին, յաճախ դառնացած կիներ են այս կերպարները, երբեմն անցեալի յուշով մը անանդ, ինչպէս՝ Եուշանը («Ընդմիջում»), կամ բոլորովին առանձին արարածներ, ինչպէս՝ Անահիտը («Աշուն»):

Այր տիպարները եւս ուժեղ անհատականութիւններ չեն ցուցարեբեր, ինչպէս նախորդ հատորին մէջ յիշուած՝ դաւաճանուած ուժուիներ, նոյնպիսի կացութեան մը մէջ զանուազ չափազը, կամ այս վերջինին դրացին՝ Գուրգէնը («Կազմ»): Իսկ կարպիւրը, աւելի քան շատ մը այր մարդոց տիպարները, դրեթէ ամբողջութեամբ արժանապատուութիւնը կորսնցուցած մարդ է, իր կրտսերականութեամբ ու խեղճութեամբ իսկ ժխտական ներկայութեան վերածուած («Իրակուս»):

Այս պատճառով ալ պիտի ընդգի Ալվարդ Պետրոսեանի կին կերպարը եւ մուշկանած պիտի պոթկայ:

«Լիբ, ախր մեր քաղաքում գեղեցկուհիներ չկան, այնպէս էլի, ինչպէս, առեմք հին Երեւանի Փայլում Արուսեակը, որի յայտնուելը, պատմում են, մեծ իրարանցում էր առաջացնում Աստաֆեան փողոցում: Բոլորն հիմա շատ են խնայուած ու սիրուն, բոլորը: Բայց մեծ գեղեցկուհիներ չկան: Թե՛ Գրամէ էլ, համաճարների պէս, ժամանակի անհրաժեշտութիւնից են ծնուած: Ուրեմն, մ'ըն է նրանց ծնունդի ժամանակը: Զարմանալի տեսնում, որ մեծ տղամարդկանց ժամանակ են ծնուած մեծ գեղեցկուհիները» («Մեծ խորհուրդի մոլորութեամբ», էջ 23):

Նման պատկերացումով, ուժեղ այր տիպարի մը կը հանդիպինք մէկ անգամ — անդէմը եւ անանուն մարդ մը, որ անձրեւոտ դիշեր մը կը հանդիպի առանձնութեան եւ յուսահատութեան մէջ տըւայտող Անահիտին, հարկ եղած պարագային հասկացողութիւն կը ցուցարեբէ, «այլուր՝ կամք, եւ զայն կը հասցնէ տուն («Բնութեամբ»):

Կեանքին վերջուած այս տարրեր պատ-

աստիկներուն, պահերուն եւ կացութիւններուն մէջ կը տեսնենք, թէ կարծէք այլեւս կեանքի, մարդու եւ կնկայ կամ ընդհանրապէս սարելու խորհրդաւորութեան, հմայքին շատ քան կորուսած է: Առօրեայ մը՝ որ իր դրանին սակ հարթած, հաւատարեցուցած է ամէն ինչ, պարզապէս զոյստեւելու կացութեան մէջ գետեղելով բոլորը:

Հետեւաբար զարմանալի չէ, որ մահաւանդ Ալվարդ Պետրոսեանի առաջին հատորին մէջ տիպարները անուն չունին, տեղի կամ շրջապատի առնչուած մանրամասնութիւններու չինք հանդիպիր: Կարծէք արձակադուրսին ըսել կ'ուզէ, թէ ստիկա բոլորիս կացութիւնն է, բոլորիս հարցերը, եւ այս փորձառութիւնը մեզմէ սեւէ մէկուն կրնայ բաժին իյնալ:

Եթէ Ալվարդ Պետրոսեանի յիշեալ երկու ժողովածուները, անկախ իրենց բովանդակային առանձնայատկութենէն, կարճ պատմուածքի սեւին մէկ թարմ զարգացումը կը բերէին, «Ես մի քան եմ ծիրանի» եւ «Ես սիրեցիքի ժամանակը» վիպակները նուազուածի նոր որակ կ'արձանագրեն:

Առաւել՝ տուեալ պատմուածքներու մէջ, եթէ հեքիաթը կամ այլաբանականը կը գատուի, կը զատորուշի իրականէն, վիպակներուն մէջ, այս երկու գիծերը յաճախ կը խաչաձեւին: Իրապաշտ մանրամասնութիւններով տրուած ճշմարտութիւնը, երբեմն այնպիսի դոյն եւ թանձրութիւն կը ստանայ, որ այլաբանական կամ խորհրդապատկան (շատ ընդհանուր առումով) եզրեր կը բերէ: Կարծէք Միլթոնի պատատներուն նման, շատ իրապաշտ ձեւով նկարուած իրերու եւ կերպարներու մանրամասնութիւններէն, հարուստ թելադրականութեամբ ուրջ վերացականութիւն մը կը բարձրանայ...

«Ես սիրեցիքի ժամանակը» շահեկան է իր շունչով եւ հոգեբանական խորացումով: Վիպակին առաջին իսկ բառերը՝ «Փլում եմ, վարվառա», ուղղակի մուտք մը կը կատարեն հերոսուհին հոգեվիճակին մէջ, որ իր ամուսինին ու շրջապատին կապուած առանձին հարցեր ունի,

երկուութիւն մը կ'ապրի, եւ թակարդուած ըլլալով որոշ կացութեան մը մէջ (որմէ դուրս դալու անկարելիութեան մէջ կը զգայ ինքզինք յաճախ), տուեալ պահու մը մէջ, նոյնիսկ անձնասպանութիւն կը փորձէ:

Գործին սկզբնաւորութեան՝ Վարվա-  
նայի երկար ինքնավերլուծումը կամ խոստովանութիւնը, մէկ այլ ձեւի զմու-  
շեղին մենախօսութիւնն է: Ինքնամերկա-  
ցում մը, որուն ընդմէջէն կը հեռանինք  
կնոթ ներքին քայքայումին, եւ ուր կը  
բացուին անոր հոգեմիտնակին բաղկացու-  
ցիչ տարրերը — անցեալը, առօրեան եւ  
ամուսինին՝ Գոռի հետ յարաբերութիւն-  
ները:

Տնտեսօրէն անցեալը կարեւոր դեր  
ունի Վարվաւու Քնկանոսեանի կազմա-  
ւորումին մէջ (զուցէ եւ երկուութեան  
սահմանումին): Դէպի անցեալ անցըր  
նոյնպէս յատկանշական է ՎԱՐԱՐԱՍԻԻ  
հանդուած հեղինակի սէս վրայ տուեց յի-  
շողութեամբ հասմբէն (էջ 17):

Սակայն այս անցեալը, հակառակ իր  
բազմաթիւ դժուարութիւններուն, իր ժա-  
մանակաշրջանով, կենդանի տիպարներով  
ու շրջակայքով, կարեւորական դրան մը  
պէս կը բացուի մեր գիմաց:

Մազգայինէն, Երանսը եւ անոր  
մանասինը (մանասլիսի կողքին՝ ամէն  
մարդ իր երգը պիտի սենեայ), թուրք  
Հապիպան, որուն հայրը քարոզչական մաս-  
նակցած է, ասկայն ինք հաւատափոխ ե-  
ղած եւ ամուսինին հետ Հայաստան փա-  
խուտ տուած է, Վասպուր Մանասար-  
եանը, Էւայն, ասանձին աշխարհ մը կը  
բերեն, ուր արքայութիւն կայ, ասկայն  
զոյսութիւն ունին Արեւմտահայաստանի  
կապուած այլ անցեալ մը, տարբեր նը-  
կարպիւրիտի տէր կերպարներ, ինչպէս  
եւ որոշ քաղաղականութիւն, կարեւորանք:

Անշուշտ, պատկերասփիւռներու մուտ-  
քը նախկին մթնոլորտէն, մանասլիսիներու  
: Բնական շատ քան կը փոխէ: Իսկ այս աշ-  
խարհը աստիճանաբար կ'անհետանայ:  
Կը մեռնի Մազգայինէի ամուսինը՝  
Երանսը:

Հապիպային մահը, անոր տան մէջ  
ՎԱՐԱՐԱՍԻԻ միտքարարութիւնն ու Վանի  
գործ արծաթները՝ Հապիպայի դժոյժ:

Մազգայինէի պատմութիւնը կը հաստա-  
տեն, որ մինչ այդ շատ ալ հաւատարի չէր  
թուեր: Վասպուր Մանասարեանն ու ա-  
նոր կիներ՝ Անոյը, կը զատարաստուին ար-  
տազադթելու (Փարիզ):

Ինքնաշատուկ աշխարհ մըն է այս մէ-  
կը, ուր սպիտակ եւ սեւ դիմերը բացորոշ  
են: Եթէ հոն ազգային ու ժողովրդային ա-  
ռումով մղիչ, ներշնչող ուժը Մազգայի-  
նէն է, ժխտական ներկայութիւն են տիկին  
Անոյըն ու Հապիպան (հակառակ իր կա-  
ւորականութեան): Փաստօրէն, երբ Ե-  
րանսի ու Մազգայինէի տունէն մնացած  
վերջին վկայութիւնը՝ չորցած բարդին  
կը փորձէ փրկել Վարվաւան, երեւան կու  
դայ, որ ծառին արմատը մոծակատուած  
է... Հապիպայի պատրաստած մոծիբուն  
աւելցուք պատճառ դարձած է ծառին  
մահուան:

Վարվաւայի տաշնապին մէջ զոյս-  
թիւն ունի նաեւ յանցանքի զգացում մը:  
Ան, ամուսնութեան ատաղին լըջանին,  
թոյլ տուած է, որ Մազգայինէն ծերանոց  
դրուի: Ինքզինքին հետ խօսելով Վարվա-  
ւան պիտի քէ:

ՎԱՐԱՐԱՍԻԻ ԲՆԴՆԱԲՆՆԱՐԱՎՊ փորձով  
էիք նրան հոտացնիլ ալ լեւնի մի բանի  
ամիսը, բայց ի գուր: Մազգայինէն Քեզ  
նշին յասաց, Վարվաւա, բայց դու ու լու  
գիտես, որ նա Քեզ չենից յապուսմ  
համար, երբեք չենից: Եւ նա, որ մեռնու-  
ղը չէր, վիրաւորամբից ու վշտից մե-  
ռաւ... (էջ 52):

Վարվաւան, խորքին մէջ Մազգայի-  
նէի հոգեզուակն է: Իսկ այդ կարծ ան-  
տեսուած նոյնիսկ մեղանչում է ո՛ր ժրայն  
Մազգայինէի նկատմամբ, այլեւ՝ իր  
անցեալին: Այս իսկ պատճառով, զէպքը  
խոր հեռք կը մղէ անոր ներաշխարհին  
մէջ:

Սեւնի աւրելուած բաժինը տիպար-  
ներու նոր շարք մը կը բերէ, ուր եւս  
դրական ու ժխտական ներկայութիւններ  
կը զատորոշուին:

Գոռն ու իրենց աղջիկը՝ Այծոն, Սե-  
ւան մեկնած են, իսկ Վարվաւան խուսա-  
փած է ընկերակցելէ, որովհետեւ գիտէ,  
թէ Գոռի հղբօր՝ Աղուանի ներկայութեան,  
ամուսինը կը համակերպի այդ միջավայ-  
րին, ինչ որ բախումներու զուտ կը բանայ:

Այնտեղ ժխտական կերպարներ են Աղուանը, անոր կինը՝ Նունիկը եւ Աղուանի աներհայրը՝ ազա Սրապիոնը, որ երկար ատեն շարաշահած է ժողովուրդը (որով նաեւ Գոռի ծնողները...): Պարզ է, որ Վարվառան չի կրնար այս աշխարհին մաս կազմել:

Վարվառային աւելի հարազատ են Սեւան բնակող Վարդոն, Պապին ու լեռներու միւս հովիւները, եւ ինքզինք Վարվառայի հորեղբայրը նկատող Երուանդ Կնկանոսեանը:

Ինչպէս Ալվարդ Պետրոսեանի նախորդ հերոսահերոսներուն պարագային, հոս եւս Գոռի եւ Վարվառայի դժուարութիւններուն մէկ կարեւոր մասը կը բխի Գոռի անհասկանալի կեանքի յարաբերական թուլութիւնէն: Գոռը խորքին մէջ զբաղան ախար է, սակայն «նուաճուած» է կնոջ ներկայութիւնէն եւ յաճախ շրջապատէն: Սեւանի ջուրերուն քաշուիլը, ինչպէս եւ մայր իշխանամուկին մահը այլաբանական եղբեր կ'անեն: Զուր տեղը չէ, որ Վաշագան պապը պիտի ընէ:

«Տէրը կորցրած տան ցլս վիրաւոր է քարը, սղայ (...) պիտի փրոյի (...) քրի տէրը Զաւկն է: Զրի համար դու նրա տիրոջն ուսող ցազմի հոս» (էջ 52):

Արդեօք ոչ այլաբանութիւն մը չէ՞ր հին բարդիին մահը՝ Վարվառայի մանկութեան աշխարհին մէջ: Կարծէք բարին կը նահանջէ ամէնուր, առօրեայ հաւատքէ կը պարպէ բոլորը կամ զբաղան անհասկանալիութիւնները կը համակերպին կացութեան...:

Ինչպէս Վարվառան կը խոստովանի, իրեն համար հիմնականը ապրելու հաստատ է: Իր այս հաւատքը՝ ամուսինէն մեկնած, կեանքէն մեկնած, հետզհետէ կը նուազի: Երբ Գոռի նման յուսալի մարդիկ եւս հոսանքին հետ կը տարուին, արզիւլած իշխանամուկը կ'ուտեն, ապրելու հաւատքը այլեւս անկում կ'արձանագրէ եւ ջուրը կը քաշուի...: Հաւատքի խախտումն է Վարվառայի տագնապին հիմնական գրոշապատահալը, Հաւանաբար, հերոսահերոսին այս բոլորը կը զգար սկիզբէն իսկ...:

Սակայն յոյսը միշտ կը մնայ: Գոռէն անկախ, որ երկար ատեն չի յաջողիր

յատակ կեցուածք ճշդելու, յոյսը կու գայ Աղուանի տղուն ներկայութիւնէն, պատանութիւնէ երիտասարդութիւն թեւակոխող Սերոբի, այսինքն՝ Գոռի մէկ երիտասարդ տարեբակէն, որ, քաշուող ջուրերուն զիմաց, ուշակորոյս Վարվառան շարկած կը հեռանայ:

Անշուշտ, վիպակին մէջ որոշ մանրամասնութիւններ կը մնան անորոշ, — պատահարներ, տիպարներու կարգ մը կեցուածքներն ու շարժառիթները լրիւ չեն բացայայտուիր: Սակայն Վարվառայի խորացող հոգեվիճակին մէջ կ'իմանք նաեւ մենք, հաղորդակից կը դառնանք ներքին վերիվայրումներուն, զատուին...:

Ժամանակաշրջանի առումով քիչ մը աւելի ետ, անցեալին կ'երթայ Ալվարդ Պետրոսեան, երբ կը ներկայացնէ «Սո մի ծառ եմ ձիրաւնի» վիպակը:

Եթէ որոշ ընդհանրականութեան կամ վերացականութեան մէջ կը շարժէին անոր կարճ պատմուածքները, շեմքերգի մտամտելը, մանաւանդ անցեալին բացուող իր բաժիններով, յատակ միջավայր մը կը բերէր: Այս դիմը շատ աւելի կը շեշտուի առեւտր վիպակին պարագային, ուր կը հանդիպինք յատակ ժամանակաշրջանի մը՝ իր միջոցառումով, ընդհանուր տաղանակներով եւ տիպարներով:

Ժամանակաշրջանը՝ 20ական եւ 30ական թուականները կը նշէ, երբ որք կամ զապիթական մարդիկ գոյատեւելու, վերապրելու համար կը պայքարէին:

Ջարդերն ու տեղահանութիւնը խախտած են նախկին ընկերային ու բարոյական արժէքներու համակարգը, պատմական տուեալներ, այսինքն՝ անհատական կամքէ վեր ուժեր, հարուածած են բոլորը եւ կեանքի անհեթեթ բացուած է իւրաքանչիւրին զիմաց:

Այս մատնանշումը չի նշանակէր, թէ արժէքներ չկան: Արժէքներ կան, սակայն անոնք ընկալելի արժէքները չեն: Իրականութեան զիմաց մարդոց մերկ կեցուածքն ու գոյատեւելու բնագլը աւելի բարձր, շարէն ու բարիէն անդին, աւելի խոր ճշմարտութեան կամ շարժառուցիկութեան մը կը հպատակին:

Այս բարդ ժամանակաշրջանը կը տես-



նենք որք աղջկայ մը, երգըումցի Զառէի վարջին ընդմէջէն:

Խաթունը էր սղուծ՝ Աստուծո՛վ նեղացած Վաղինակին համար հարս կը բերէ տակաւին պատանի, որք Զառուկը:

Մուսկիզ Վաղինակը, որ ամբողջ օրը բակը նստած շուի կը նուազէ, նուազագոյն զաղափարն իսկ չուի ամուսնական կամ կենսքի պարտաւորութիւններուն մասին. չի կրնար ունենալ նաեւ, իսկ Խաթունին համար՝ Հիմնականը Սիրուն Գեղամին գերզատանին շարունակութիւնն է:

Զառէի տարածանական փթթումին հետ հարցերը տարբեր ընթացք կը ստանան: Կը փոթորկի ինք եւ իր գեղեցկութեամբ կը փոթորկէ շրջապատը:

Առաջին յարաբերութիւնը զինագործ Յովհաննէսին հետ է:

Յովհաննէս, որ գաղթական է կարսէն, կ'ամուսնանայ Փայտոնջի Սերոբի աղջկան հետ, որովհետեւ այս վերջինը, իր մայրն ու ջոյրերը փրկած է Կարսի շարժերէն: Կինը ոչ մէկ ձեռով յարմար է իրեն եւ, ծնած էրնք աղջիկները. թերի ծնունդներ գուրս կու գան: Աւելի ողբերգականը այն է, որ եւ Յովհաննէսը, եւ անոր կինը գրեական են կացութեան:

Եթայիսնէսը գգում էր, որ կինը գիշերային ռզորումի մէջ է:

Ամէն օր, ամէն գիշեր տեսնում էր էս խնայի ցամ ու ամօքը, տեսնում էր էդ ցաւից ծնում իր հրեմ ցամ ու ամօքը՝ երեմ աղբիկ մէկը-մէկից... Բայց էլ չէր կարող դիմանալ...

Իր սերմը իայտառակ եղաւ էս աշխարհում, մայիստսի ծնունդ տակց: Իր՝ գիմագործ վարպետ Յովհաննէսի աւժը ինզն էգի ուժ էր ու էս քիլակները, էս բռն ու էս ժայռի պէս մէքէք ետէ՛լ, փա՛ւշ են: Ողջ կեանքը ուրիշի գեմէի, ուրիշի վառօդի հետ գործ ունեցաւ: Ուրիշի համար գեմէ կրից, ուրիշի վառօդից հետ քաշեց, իրենը մնաց լուս, անարձագանց, անտառ, անկրակ: Մուսկիզ Վաղինակը իրենից լուս է, կրակի հետ չի խաղում, իր շուրի է փշում: Փշում է թէ՛ նս էս անտրի անարձագ չէի, ինչի՞ անցայ էս անարձագ (էջ 31):

Յովհաննէսի եւ Զառէի զրացնութիւնը

նը լուս կերպով կը սերտացնէ այս երկունքին յարաբերութիւնը: Անշուշտ բարոյական ըմբռնումները երկար ատեն իրարմէ հեռու պիտի պահեն զիրենք, ինչ որ աւելի պիտի սրէ զգացումները: Մակայն վերջ ի վերջոյ պիտի հանդիպին գերծակութեամբ զբաղող Անիշէի տունը, որ, սուրբարար, նման հանդիպումներու կայանն է:

Կը ծնի Աղասին, իսկ Յովհաննէսը, զուկին քաշողականութեան չգիմանալով կը ձգէ ամէն ինչ եւ կը հեռանայ: Վերջին պատուէրը կ'ըլլայ. «Զառէի սղէմ քաղ իր սպաի ու իր հօր արիւստը տպորթ» (էջ 35):

Յովհաննէսին պիտի յաջորդէ Թաշատուրը: Այս յարաբերութեան մէջ զգացականութիւն չկայ: Թաշատուրը վարպետ սովորիչ է Վանէն, կինը՝ Լուսերեալ, կորսնցուցած է մայրն հասարակչութիւնը (հասնարար ջարդերուն պատճառաւ): Զառէն, անայն գործերու մէջ, կը փորձէ օգտակար ըլլալ Լուսերեալին եւ վարպետ Թաշատուրին: Մակայն ինչզինք խմելու տուած, սովորութեան կողքին բանաստեղծութեամբ ալ զբաղող Թաշատուրին ցուր ուրծ է: Ան եւս չ'ուզեր, որ իր արիւնը կորուսի:

Վնն անժառանգ փր քաղ, — առաց, — արիւնս կորչելու արիւն չէ: Ազդելու ի գուր քաղ չանցնի, Զառէ: Թէ ի գուր պիտի անցնէր, լաւ կը լինէր ես էլ չ'փրկուէի: Էս ի՞նչ փրկութիւն է, էս ուրիշի բաժնի օղբ շնչել ու ուրիշի բաժնի հողը գաւթել է, փրկի՛ր» (էջ 39):

Եւ ինչպէ՞ս Թաշատուր կը հաստատէ, այս մէկը կացութիւն մըն է, ուր անհասուններ մեղք չունին, մեղաւորը իրենց ապրած իրականութիւնն է, այրինք՝ անհասունները ատանման ընելիք չունին, անկախ կամք չունին, որոշում չունին, իրենցմէ վեր պատմական իրականութիւններու կամ զատաւորումներու կը հպատակին: Այլ խօսքով՝ զո՞հ են բոլորը:

Եւ կը ծնի Թաշատուրի զուակ Միլերտիւրը: Անոր ծնունդէն ետքը օր հտք կը մեռնին Խաթունն ու Թաշատուրին կինը՝ Լուսերեալը:

Թաշատուրը ինչզինք անկարելի կացութեան մը գիմաց կը գտնէ, որովհետեւ

Չառէն չ'ուզէր զաւակները հետը առնելով փախչիլ, մեկնել: Տունը տարբեր, բաւական խոր իմաստ ունի Չառէին համար. զոյստեւելու վայրն է, կռուանը: Չառէն հոն պահած է Քաթունը, կը պահէ Վաղինա-կը, այնտեղ կը բերէ նաեւ գինք նախապէս որդեգրած եւ այդ տուն կրակին մէջ նետած քաւորակին Շողակաթը, եւ գիտէ, թէ աւելի ուշ պիտի հոգայ նաեւ օրիորդ Անիշէն...:

Հաւանաբար, Չառէն կարդ մը ճըլ-ժարտութիւններ բնագոյնաբար կը գզայ: Ներքին պատգոյնութիւն մը ունի, որ կը մղէ զինք ճիշդ կողմնորոշուելու:

Այսքան իրապաշտ գոյներով պատկերուած աշխարհի մը մէջ, Չառէի տէր-պարային զարգացումին եւ ներքին հոլովոյթին կը հետեւինք անոր եղբորը կապուած երազներուն միջոցաւ: Ջարդերուն ժահացած Բարդիկը, որ, նախապէս, Չառէի երազներուն մէջ թոյրը հարս կը տանի թագաւորի տղուն, ասոն մը ետք, Չառէի երազներուն մէջ թունաւոր նետով սպաննուած է արդէն, այսինքն՝ չի կրնար թոյրը առնել իր ձիուն վրայ ու տանիլ հետաւ:

Չառէ կը կորսնցնէ իր անձնական երազներուն մեծ մասը, սակայն, հաւաքական իմաստով, կը դառնայ աւելի ուժեղ եւ կայուն անհատականութիւն, աւելի կենսական կամ ուժական ներկայութիւն, կը վերածուի անհրաժեշտութեան:

Այս պատճառով ալ, երբ Չառէն այլեւս հայելիին կը նայի, հոն կը տեսնէ ամբողջ աշխարհ մը, որ կապուած է իրեն, կը մեկնի իրմէ:

«Հայելիի ճէջ տեսնում էր սեփական արտացոլացումը՝ սիրուն, զանաւ, սիրա-կարօտ, Խաճապ կուզի պէս իր մէջքին կպած կաթուն մէրիկի տունը՝ քաւոր-կընդոյզով, երանի ծառովից Վաղինակով, աչքի առաջ մուշ-մուշ բնած իր Մկրտիչ որդին, միւս սեմեակով երանի ծառովից Վաղինակի մօտ մտած Աղաթի որդին ու էս քաղաք մայմ տամ մէջ, չորս պատի մէջ: Չորս պատից դուրս, հաշտաւարը, հաշտաւարից դուրս (ար խոր ձորում, որ քարի տակ), Յովհաննէսը, Յովհաննէսից դուրս՝ իր կրտսեր եղբայր Բարբիկը՝

աչքերը փակ, տապալում չիմարի պէս... Յետոյ սուրբ Սարգիսի մուրացկանները, Սիրուն Գեղամի գերպատանը, յետոյ՝ Յովհաննէսի չորս տանները, յետոյ՝ հաշտաւարի մտնջ կուսերեքը, յետոյ՝ քաւորիկն Շողակաթը, յետոյ՝ օրիորդ Անիշէն, յետոյ՝ իր կրտսեր եղբայր Բարբիկը եւ իր արագ ու կրտսեր որդի-ները» (էջ 45-46):

Վիպակին աւարտը որքան անակնկալ՝ նայնքան հետաքրքրական եւ տրամադա-նական կը թուի:

Պատերազմը սկսած է, Երկրորդ Աշխարհամարտը: Գիւղէն առաջին զօրա-կոչուողը կ'ըլլայ գիւղի վարժապետին նրիտասարդ տղան՝ Թորգոմը: Առօրեայ-չին ընտանիքը սուգի մէջ է, որովհետեւ ժողովրդային իմաստութիւնը կ'ըսէ, որ առաջին ճակատ զացողը չի վերադառ-նար: Չառէն Թորգոմը կը ճանչնայ իր հարսնութեան շրջանէն, երբ ուրիշ Ե-ճ տարեկան տղոց հետ բակ կու զար շամիլ ուղիւ: Երեկոյեան՝ երիտասարդը Չառէի ճամբուն կը կանգնի՝ ըսելու:

«Եթո՞ք ժամ մնաց: Եթո՞ք ժամով, ո՞վ կը համաւայնի իմ կիներ դառնալ, Ջառէ: Ո՞ր աղջկայ քայտիմ քար գցեմ: Որ ետ չգամ, իմ խեղճ մէրը ո՞ւմ յայտն սպարի, Ջառէ, փնտէ՛ր: Որ ետ չգամ, իմ խեղճ հէրը ո՞ւմ տայ իր անունը, կորչելու ա-նուն էլ չի...» (էջ 46):

Աւելի ուշ, Չառէն կը մտնէ վարժապետին յարկէն ներս, կը տեսնէ Թորգոմի ծնողներն ու թոյրերը, որոնք հող կը լեց-նեն իրենց գլխուն, եւ անոնց կ'ըսէ, թէ Թորգոմի կիներն է: Վարժապետը կը խո-նարհի անոր դիմաց, կը փոխուին տրա-ժագրութիւնները...: Չառէին կը հազցը-նեն հարսանեկան հաղուտաներ եւ կը ցնծան, որովհետեւ, արագիւրը եկած է ի-րենց կտորին թաւելու...:

Շարաթ մը ետք, Չառէն զօրակոչ-ւող Յաշտաւարին պիտի ըսէ. «Սու թոր-գումի կիներ եմ (...): վարժապետի համար վարդան քոտ պիտի ծննմ» (էջ 46):

Այս բոլորէն ետք հարց կու տանք. ի՞նչ է Չառէն կամ ո՞վ է Չառէն: Այսքան դժուար ժամանակաշրջանի Փոնի մը վրայ, ամբողջ ժողովուրդը մը ժահացուօրէն վի-

բաւորած ցնցումէ մը ետք, երկու պատերազմներու միջեւ կը գծադրուի երկուստասարդ այլկայ մը պատկերը:

Աւելի խոր մակարդակի մը վրայ յեկնարանուած՝ կը տեսնենք, որ առանձին դոյութիւն է Չառէն. մայրութիւնը կամ բնութեան վերապրումը մարմնաւորող կնկայ դեր-կերպար մը, պտղատու գեղեցիկ ծիրանի մը, որ ժողովուրդին առողջ շահիղներուն գոյտեսութիւն ծնուցիչ հողը կը դառնայ: Ան՝ կարծէք արթնցող բնութեան նման, ժողովուրդի վերապրումին եւ կեանքի կենսագործումին կենաց ծառը կը խորհրդանշէ: Կը վերածուի իր ժողովուրդը յատկանշող ծիրանիին եւ ծնունդ կու տայ զինադործի զուկին, արուեստագէտի զուկին եւ սուսուցիչի զուկին...

Այս պատմատով ալ անանձնական դոյութիւն է Չառէն: Ծիրանի ծառին նըման կը պատկանի Յովհաննէսին, Պաշտտուէրին կամ Թորգոմին, այսինքն՝ բոլոր անոնց, որոնք պէտք ունին իրեն: Արդ, հասկնալի պէտք է ըլլայ, որ բարոյական ընթացիկ ըմբռնողութեամբ կարելի չէ մտնել իրեն: Պաշտուէրին ակնածանքը (որ կը համբուրէ Չառէին ձեռքը), կամ վարժապետին յարգանքը, կը բխին այս հասկացողութենէն:

Առանց Չառէի, ժողովուրդի նկարագրին ու կենսաւնակութեան համար այդքան անհրաժեշտ այդ կերպարներուն սերունդները դատապարտուած պիտի ըլլային կորուստի: Չառէի յայտնակերպութեն արտաջ անոնք ամլացած եւ յու-

սահատ դոյութիւններ են, դատապարտուած կորուստի: Չառէն թոյլ պիտի չտայ, որ ընդհատուին այդ սերունդները:

Եւ զարմանալի չէ, որ Չառէն չ'ուզեր մեկնիլ, կը մնայ տան մէջ: Եւ զարմանալի չէ, որ Չառէն պիտի պահէ ժողովուրդին այն զաւակները, որոնք հոգատարութեան կամ ինսամբի կարիք ունին: Եւ զարմանալի չէ, որ Չառէն միայն առողջ այրերու ծնունդ պիտի տայ...

Յասկանչականօրէն նկարագրուած ժամանակաշրջանները կը ծաւալին դարաշրջանի մը վրայ — Համախարհային Առաջին պատերազմի օրերէն մինչեւ Երկրորդ պատերազմին յաջորդող տարիները եւ մեր օրերը:

Փաստօրէն, այս չորս գործերու ընթացումէն ետք, կ'ունենանք մէկ ինքնուրոյն պատկերացում մեր հաւաքական առօրեային: Ալվարդ Պետրոսեան կը բերէ 20րդ դարու հայ կնկան ամբողջական կերպարը: Կին մը՝ որ ամօթխած կամ զարգանկարային կերպար չէ, այլ ուղղակիօրէն կը նայի կեանքին:

Ինչպէս տեսանք, Ալվարդ Պետրոսեանի գործերուն մէջ ընդհանրապէս կը հանդիպինք առանձին կիներու, գծուարութիւններու գիծաց պայթարող կիներու, ապրելու հաւատքին համար տագնապող եւ ժողովուրդի վերապրումին խորհրդանշիչը հանդիսացող կիներու:

Եւ այս աշխարհին մէջ կ'արժէ խորանալ:

ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐՊԵՐԵԱՆ

Բ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

**ԱՆՑՆՈՂ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻ  
ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԿԵՒՈՐ ՃԵՂԵԼՈՒ ՓՈՐՁ ՄԸ**



Այս գործերէն մաս մը, մասնաւորաբար վերջին տարիներուն լոյս ըն-  
ծալուածներէն ոմանք, ունին ժամանակակից հասարակութեան խօսելու կա-  
րելիութիւնը եւ եթէ բեմ բարձրացուին տնհրաժելոտ աշխատանքով ու բծա-  
խընդրութեամբ, կրնան ընդունելութիւն գտնել եւ բեմականօրէն գերակա-  
տար ըլլալ մեր կեանքէն ներս: Այդ ճամբով է, որ հեղինակները կրնան աս-  
տիճանաբար կատարելագործել ինքզինքնին եւ թատերական արուեստի պա-  
հանջներուն դոհացում տուող գործեր արտադրել:

Այդ գործերուն մէջ կը գծուարանանք մատնանշել թատերական ար-  
ւեստի չափանիւներով քիչ թէ շատ մնայուն արժէքով գործեր. կանուխ է  
հաւանաբար, թատերադրութիւնը դեռ իր թափը առած չէ Սփիւռքի մէջ:

Գարելի է ըսել, թէ աւելի բախտաւոր լեզան Հայաստանի թատերա-  
գիրները:

Անոնք կը գտնուին այսպէս գծուարին պայմաններու տակ, ուստի՝  
ի վիճակի չեն իրական արժէքներու բարձրութեանց հասնելու: Երբ կը հար-  
ցնէինք Հայաստանէն եկած գրադէտի մը, թէ ինչո՞վ կը բացատրէր իր  
հրդալին Հայաստանի թատերագրութեան բաժնին համեմատաբար ետ մը-  
նացած ըլլալը, մինչ բանաստեղծութեան մէջ ունէինք արժէքաւոր հեղինակ-  
ներ, գնահատելի անկեղծութեամբ ու պարզութեամբ կը պատասխանէր:

«Պարզ է, դրա պատճառը անկոփիլիտայնութեան տեսութիւնն է»:

Հայաստանի մէջ տիրող վարչաձեւը գրագէտները կը համարէ ընկե-  
րութեան, եւ ընկերութեան կեանքի ղեկավարութիւնը ի ձեռին ունեցող պե-  
տութեան գրչի պաշտօնեանը, որոնք պարտին ստեղծագործել ըստ պետու-  
թեան կողմէ տրուած աւղղութեան: Եւ որովհետեւ վարչաձեւը կը յաւակնի  
լուծած ըլլալ ընկերային, դասակարգային հարցերը, ապա ուրեմն՝ այդ ըն-  
կերութեան մէջ «կոնփիլիտ»ներ գոյութիւն չեն կրնար ունենալ. եւ որով-  
հետեւ բոլորն ալ կը գործեն ըստ պետական ծրագրումներուն եւ ընկերային  
լուծարաններ կը հետապնդեն, բախումներ չեն կրնար գոյութիւն ունենալ  
ընկերութեան ներս. կրնան գոյութիւն ունենալ լաւ մարդիկ՝ մեծ թիւով. եւ  
վատ մարդիկ, պատահաբար, փոքրաթիւ. վերջին յաղթանակը անպայման

լաւերունն է եւ վատերը անպայման դիմակազերծ կ'ըլլան ու կը առտեն կամ կը պատժուին: Այսպիսի սահմանափակումներով, բնական է, որ թատերադրութիւնը ինքզինք ազատ շրջայ եւ չկարենայ արուեստի արժէքներու փրկատուութեամբ դործել ու քարզանալ:

Կրկիննք. վերջին ատենակէի թատերական գրականութեան զարգացումի ընթացքին մօտէն ծանօթ չենք, ինչպէս մասնանշած էինք արդէն: Հայ ժողովուրդի կեանքի պայմանները այնպիսին են, ուրեմն, որ թատերական գրականութեան մէջ որոշ կշիռ ու արժէք անհնոց թատերական գործերը կը գտնուին առաւելաբար 19րդ դարու վերջաւորութեան եւ ջստեարորդ դարու առաջին ջստեարեղամեակին մէջ՝ Գ. Սունդուկեանի, Ա. Ելբր վանդադէի, Լեւոն Եանթի թատերակները:

ՀԱՅ ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՓԷՔԱՒՈՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ

Գարրիէլ Սուճուկեան. — Սունդուկեան ծնած է 1825ին, Թիֆլիս. մեռած է 1912ին: Հետեւած է Փեթրոկբատի — այժմ Լենինկրաւ — համալսարանի պատմաբանասիրական դասընթացներուն եւ, միաժամանակ, ժամանակակից դրսեկանութեան եւ թատրոնին:

1863ին, երեսուներեք տարեկանին, Սունդուկեան կը գրէ իր առաջին թատերակը՝ «Գիշերուամ սապար խեր է», որ անմիջապէս կը բեմադրուի: Յետոք ութ տարիներու ընթացքին Սունդուկեան կ'արտադրէ իր թատերական գործերուն մեծ մասը, շատ գոյները՝

«Եւսապայալա»՝ 1865ին, «Օսկան Պետրովիլն Էմ կեանքում»՝ 1866, «Եւսայն», կամ «Նար Գիտգիտես»՝ 1869, «Էլի մէկ գոն»՝ 1869, «Պեպո»՝ 1870, «Գոմեղուած օնախ»՝ 1871, «Ամուսնեմեր»՝ 1889:

Ապա, որոշ դադարէ մը ետք, 1907ին կը գրէ «Բաղնիս պողչան եւ 1909ին «Սէր եւ ազատութիւն» թատերակները:

Սունդուկեանցի բոլոր գործերն ալ սուղադրուած են իր կենդանութեան, ոմանք բազմիցս՝ «Պեպո»ն 5 անգամ: Իր գործերէն ոմանք թարգմանուած են վրացերէնի եւ ռուսերէնի:

Արդի ժամանակներու Հայ թատերագրութեան առաջին թատերագիրը կարելի է համարել Սունդուկեանը: Յամենայնդէպ, վստահաբար արժէքատուր տնային թատերագիրը: Ոմանք զինք կը համարեն Հայ թատերագիրներուն մեծագոյնը:

Արժէքատուր թատերագիր է Գ. Սունդուկեան, անկասկած. ո՛չ միայն իբրեւ առաջին թատերագիր, այլեւ՝ թատերագրութեան արուեստի չափանիշներով եւս:

Սունդուկեան, իր շրջագատի կեանքէն սուներով իր նիւթերը, ժողովուրդին մատչելի ձևով ու բարբառով բեմ բարձրացուցած է մարդկային, բնկերային արամներ: Իր գրեթէ բոլոր թատերակներն ալ գրուած են Թիֆլիսի բարբառով եւ բեմ կը հանեն հարուստ, անխղճ, շահագործող, շահամոլ առեւտրականներ ու աշխատատուր, համեստ դասակարգի պտտկոտող եւ մարդկային սքանչելի աղբուսներով մարդիկ աւ ընտանիքներ, որոնք իրենց քրտինքը թափելով՝ կ'աշխատին անվթար պահել իրենց մարդու կանգամանքը եւ, բնականաբար, յաճախ զո՛հ կ'երթան շահագործող ցեղերու խարդաւաններին, խաղերուն ու խաբերասյութեանց:

Ճրանսական թատրոնի շքիւրթօցները տեղ գտած են Սունդուկեանի գործերուն մէջ, սակայն իր մեծ առաւելութիւնը իր բացարձակ անկեղծու-

Քրիսն է, իր իրապաշտութիւնն ու բնականութիւնը: Սունդուկեան կրցած է խուսափել թուղթի վրայ գրչի խաղերով տողեր, նկարագրութիւններ գրելէն եւ իր ուղեքերը ամբողջն խորսխած է իրեն ժամանակակից ներկային մէջ, բեմ բարձրացուցած է անձնաւորութիւններ, կերպարներ, որոնք խառնաբառակէ չեն, ժարդ են, ապրող ժարդիկ են եւ այդ պատճառով ալ հաղորդական են:

Սունդուկեանի անձնաւորութիւնները իր լեզուով չեն խօսիր, Սունդուկեանի ապրումները չեն, որ կը փոխանցեն ձեզի. անոնք կը խօսին այնպէս՝ ինչպէս պիտի խօսէին թիֆլիսեցի կեկեքները, Պեպոնները, Արուսիները, Շուշանները, Կակուլիները, Գիգոնները:

Ստորեւ կը ներկայացնենք հասուած մը «Պեպո» թատերակէն, դադափար մը տալու համար վերը մատնանշուածին մասին:

ՇՈՒՇԱՆ. — So, այնք, զեր մէ թիքա հաց կ'ուտիր:  
ՊԵՊՕ. — Հաց չէ, գաւրումար ուտիմ...: Ի՞նչ կ'ոնիր հաց. գամա հացի՞ արժանի իմ...: (Գոտիկը կտրելով): Հացը վուր ստիղծած է, գամա ի՞նչ համա է ստիղծած. հացը վուր ինս ուտիմ, ադա Արուսիներ ի՞նչ ուտէ: Նա էլ հաց ուտէ, ին՞ս էլ հաց ուտիմ...: (Դառը ծիծաղով):  
Հա, հա, հա՛:

ՇՈՒՇԱՆ. — Սիվցել էր իմ օրը, անըս...

(Աչքերը որբելով դուրս է դնում ձախ դռնից)

ՊԵՊՕ. — (Մենակ, արխալուղի կոճակները վեր պցելով):  
Գճա՛, Պեպօ, գետի՛ն լզէ, խալի Վուսները պա՛շ արա, նրանց վուտի ցի՛լքը լկէ... Ռ՛վ իս դուս, ի՞նչ իս դուս, ի՞նչ մարդանետապումն իս դուս, ի՞նչ անում ունիս դուս...: Ինքար կ'ուզիմ, վուտի տակը կու պցիմ քիզ, վրեա մամ կու գամ, գետնի հետ կու հաւաքրիմ... ի՞նչ հաքաք, ջիմանվիլի վրայ ինչա՞վ իս աւել: Դուս յօ մարդ չիս, մարկերանց համա կերակուր է ստեղծի քիզ Աստու՛ւ...: Գիշիք չաքչըրվի, ցերեկ չարչըրվի, իերկիմէի տակ յաւացրու, անճըրվի ու քամու հիս կոխու տու, մ՛նաը ցրտեմէն կոնկ սոմա, ամառը արեգակի շուքով էրուի ու խորվվի... գճա՛ էննց մի թիքա հա՛ց մարէ ու էն թիքա հացով տեսիք ու քիլրիք պահէ... էս ինչ, ի՞նչ մարդութիւն... էսնց շունն էլ է մարում մի թիքա, վուր տունը պահում է...: Մ՛թամ դում էլ շուն իս... քանի աշխրէիս էրէսիմ մամ իս գալիս, դում էլ շամ պէս կերակրվի... էս ի՞նչ մարդութիւն է...: (Դադար), Մարդ էիր ուզում դառնա. կ'իտիր մարդիկ կու թալմէիր, գողութիւն կ'ոնէիր, իմ նման յեզնետում կու գրնէիր. քաննիմց հագար տեղ արիւն արուսու՛ւ կու թափիլ տէիր, էն արուսու՛ւմիրը փուզ կու շիմէիր ու էն փուզով օսկէ տնիր... մէջը փառաւուր մամ կու գէիր... դրոշկա, կայասկա, զիմիր կու սարէիր, քաննիմց ինձպէսիմ գլխիդ դարսվաշ կու կանգնեցնէիր... Այ, էն չախը կ'ուտիմ քիզ՝ մարդ իս Պեպօ, ինչ մարդուն պիտի... ինչ քիքի կ'ուզէր, էն սեպիմ կու մարէիր... էն չախը դիմաւէր քիզ գլուխ կու տէիմ, կու մեծրէիմ, պատիւ կու տէիմ ու մէկս մէկու գլուխ կու կուտրէիմ, վուր քու անկը նրանց վրայ քաղցր ըլի:

(Դուրս է գնում):

Եթէ քիչ ժը դժուարութեամբ, բայց համբերութեամբ կարգացիք հասաւածը, չէք կրնար հարազատօրէն ձեզի մօտ չզգալ Պեպոն: Հարազատութեան այս զգայնութիւնը չի զար բարբառային լեզուի զորածոութենէն, կարելի է որեւէ բարբառով թատերակ մը գրիլ, սակայն անբնական թուիլ, հարազատ չլլալ թատերական երականութեան: Սունդուկեանի պարագային բարբառը չէ, որ իրականանման կը գարծնէ իր անձնաւորութիւնները: Սունդուկեան չէ գրած ճիշտով, այլ՝ խոր սպրումով: Հարազատ են իրեն իր ներկայացուցած տիպարները, եւ անոնց կրցած է տալ այնպիսի՝ էութիւն ու նկարագիր, այնպիսի՝ արտայայտութիւններ, որ իսկոյն կը զգաս, թէ անձնաւորութիւնը իրական մարդ է եւ իր միջավայրին հարազատ մարդ է:

Արեւմտահայութեան համար մեծ դժուարութիւն է անշուշտ Սունդուկեանի զորածած բարբառային հայերէնը, ինչ որ դրեթէ անհասկնալի կը գարծնէ զինք: Այդպէս չէ, սակայն, արեւելահայութեան համար: Սունդուկեան այսօր եւս կը ներկայացուի. եւ Երեւանի կամ Քիֆլիսի մէջ, ժողովուրդը դժուարութիւն չունենար ըմբռնելու անոր տիպարներուն արտայայտութիւնները, Սունդուկեանի նուրբ սրածոութիւնները: Բարբառային բազմաթիւ բառեր, որոնք մեզի համար անհասկնալի են, հասկնալի են արեւելահայութեան համար, ուստի՝ ըմբռնելի:

Սունդուկեանի գլուխ-գործոցը «Պեպօսն է անշուշտ. թիֆլիսցի ձկնորսի ընտանեկան կեանքէն տոնտած պատմութիւնը, համեստ աշխատուորի շահագործումը՝ Ձիմզիմովներու կողմէ, անոր կրած զրկանքները, հանդիպած անարդարութիւնները. միւս կողմէ, իր ընտանիքին ու բարեկամներու շրջանակին մէջ իր գտած մարդկային հողիներու մարդօրէն բարեխումբը, սէրը, իրարու նուիրումը, որոնք թէ՛ կը թեթեւցեն եւ թէ՛ կը շեշտաւորեն կեանքին բերու տառապանքը: Թատերակը արդէն հարիւր տարուան կեանք ունի. սակայն կը շարունակէ բնական իր յայդուութիւնը, Հայաստանի մէջ գէթ, որովհետեւ կեանքի մարդիկ են Սունդուկեանի անձնաւորութիւնները:

Արուեստի բոլոր ճիւղերուն մէջ ալ կայ անբացատրելի, անսահմանելի տարբ մը, որ արուեստագէտին էութենէն կը բխի: Յաճախ կը գործածուի «չունչնք քառը, բացատրելու համար այդ անբացատրելին. արուեստագէտի «չունչնք է, որ մեզ կը վարակէ, շերտութիւն կը փոխանցէ մեզի, մեր մէջ կ'արթնցնէ իրեն հետ մասնակից ըլլալու զգայնութիւնը: Այդ «չունչնքը քառը իրականին մէջ արուեստագէտին անկեղծութիւնն է. ի՞ր, միայն իրը եղող սպրումներուն հարազատ մատով՝ արտայայտուելու, ինքն իր մէջ փնտռելու, ինքն իր էութեան խորքը իջնելու, հետախուզելու կարողութիւնն ու մղումն է. առանց ուրիշները կայակելու, առանց փրազիլովի դիմելու, առանց ամշնալու սեփական սպրումներէն, առանց չափազանցելու այդ սեփական սպրումները: Այս բոլորը կարելի է զգալ, երբ Սունդուկեան կը կարդաք: Կեանքը սիրած է, իր կեանքին մաս կազմող մարդիկը. անոնց կը Մարդը սիրած է եւ փնտրած, եւ կրցած է մանրամասնօրէն, հարազատութեամբ տալ այդ անձնաւորութիւններուն կերպարները: Իր ժամանակակիցներէն թամար Կաճկաճեան(1) կը գրէ, թէ Սունդուկեան իրեն պատած է հետեւեալը.

«Որք Պեպօն գրուած էր, մմացիլ էր յիռչիլ լաւի՞ տարեկան պէտք է լինի, ի՞նչ զգեստով, եւ ի՞նչ գլխարկով գմագրութիւն ունեւայ: Այդ մտքով գրուած, մի օր յուրս նկայ փոզոց: Թանկարծ տեսայ, որ զիմացից գալիս է բարձրաստակ, գեղեցկադէմ, զուտ կիմուռի հագուստով հագնուած մի Երիտասարդ: Մտաւն սասցի՞ «Անա Պեպօնի տիպը». կանգնցրի ու հարցրի՞

«Քէ ախօգըր ես, առա քանի՞ տարեկան ես եւ ինչո՞վ ես ապրում»։ Որիտա-  
 սարդը պարտախանց. «Ազա զամ, 30 տարեկան եմ, մրգավանառ կիմսօ եմ»։  
 Խօսակիցս մի փոքր լռելուց յետոյ հարցրեց, թէ ինչո՞ւ եմ հարցնում։ Առա-  
 ցի, թէ կիմտոնների կեանքից պէ՛տք եմ գրում։ Շատ հետաքրքրուեց. եւ ես,  
 կամենալով նրա հետաքրքրութեան բաւարարութիւն տալ՝ տուն հրաւիրեցի  
 նրան եւ մօտը մի քանի կտոր կարգացի «Պետք»ից։ Նա, լարուած ուշադրու-  
 քեամբ լսում էր եւ ոգեւորում։ Սրբ հասոյ երբորդ գործողութեան տյն  
 տեղին, որ ազա Արուքինի զանգատի հիման վրայ Պետքին բանտ եմ տանում,  
 այլեւս չկարողացաւ իրեն զսպել, տեղից վեր թաւ եւ գայրացած բազ-  
 ւեց՝ «Վեր տուր նրան, վեր տուր»։ Հենց այդ խօսքերը ես դրի կապույի բն-  
 րանը։ Այնուհետեւ այդ կիմտոն դարձաւ մեր տան բարեկամը եւ զուակնե-  
 րիցս մէկի կնքահայրը»։

*Այդպէս ահա. կեանքին մէջ, կեանքին հետ, կեանքին վերցնելով ո՛չ  
 միայն իր նիւթերը, այլեւ՝ անձնատրութիւնները. եւ ճիշ թափելով, որ հա-  
 րազատ մեայ անոնց։*

*Այդպէս կարելի է վարուիլ նաեւ վիպագրութեան ընթացքին. առ-  
 կայն երկար-բարակ նկարագրութիւններով ու բացատրութիւններով համեմ-  
 ւած, մինչ թատերագրութեան ընթացքին խառնութիւնը հիմնական պայման է։  
 Եւ իրապէս, ինչպէս իր ատենին հաստատած է Արշակ Զօլյանեան՝ այն  
 մէկ աւելորդարտութիւն կայ եռն։ Այդքան հակիրճ, սեղմ, խիտ հեղինակ  
 էիչ կարելի է գտնել։ Տիպարները գծուած են լայն գիծերով։ Խօսակցութիւն-  
 ները արագ են, կարուկ, կենդանի. տեսարանները աշխոյժ, ամփոփ։ Հեղի-  
 նակը, իրրեւ ճշմարիտ արուեստագէտ՝ ըմբռնած է, թէ կհամբը ճիշդ նկար-  
 րագրելու համար պէտք է ոչինչ աւելցնել. բայց պէտք է գիտնալ կրճատել  
 աւելորդ մանրամասնութիւնները եւ ցոյց առլ միայն էակները»(2)։*

*Գ. Սունդուկեանի արժէքաւոր գործերը թիֆլիսի բարբառով գրուած  
 գործերն են միայն։ Եւ միայն ա՛յդ բարբառով է, որ անոնց ունենդրութիւնը  
 հանելի է եւ իրական կեանքը կը վերակենդանանայ բեմին վրայ։ Գրական  
 լեզուի վերածուելու պարագային, եր գործերը կը կորսնցնեն իրենց արժէքը։  
 Իսկ թէ ինչո՞ւ Սունդուկեան թիֆլիսի բարբառով գրած է, բացատրու-  
 թիւնը կու տայ իրեն ժամանակակից թիֆլիսի հայ կեանքին, արուեստներու  
 բաժնին մեծ շափելով օժանդակած իշխանուէի Մարիամ Թումանեան(3)։*

«Տարօրինակ կը թուայ եքէ անեմ, որ Սունդուկեանի տանը խօսում  
 էին մեծ մասով ռուսերէն, երբեմն վրացերէն եւ շատ էիչ հայերէն, այն էլ

(1) Թումար կանկանեան արուեստագէտ, Սունդուկեանի մահուան առաջին տարելի-  
 քին առիքով գրած է «Եւ ինչպիսիքիւն Սունդուկեանի ժամանակ», որ լոյս տեսած է «Մշակ»  
 թերթի 1913ի 58րդ համարին մէջ։ Այդ գրութիւնը մէջեքրուած է «Հայաստան» հրատարակ-  
 յակովի կողմէ 1976ին լոյս ընծայուած «Ժամանակակիցները Գ. Սունդուկեանի ժամանակ» գիր-  
 քին մէջ. էջ 74։

(2) Նոյն ազգիւրը, էջ 220։

(3) Բշխմանուի Մարիամ Թումանեան (1870-1945) Հայկական Ռաբգործական լնկե-  
 րայքեան գործոն անդամներէն եղած է. եղած է նաեւ Հայոց Դրամատիկական լնկերայքեան  
 նախագահը։ Իր «Միջուկութիւններ Գ. Սունդուկեանի ժամանակ» գրութիւնը լոյս տեսած է «Մու-  
 վանական գրականութիւն եւ արուեստ» ամսագրի 1945ի 6-7 միացեալ քիւնի մէջ եւ տեղ  
 զտած է «Ժամանակակիցները Գ. Սունդուկեանի ժամանակ» գրքին մէջ, էջ 95։



Թիֆլիսի բարբառով: Նա գիտէր գրաբարը, իսկ գրական լեզուն լու չգիտէր: Եթէ միան Կրաւէր էր լինում գրական լեզուն բան գրել, նա դիմում էր իր քարեկամ բժիշկ Նաւասարդեանին(3): Լրագրական յօդուածներ գրելիս էլ դիմում էր Նաւասարդեանին»:

Թիֆլիսի բարբառն էր, որ լուսածածոթ էր Սուեդուկեանին, եւ ահա, այդ լեզունով ալ ան արտադրած է իր գլուխ-գործոցը, «Պեպօսն»:

Իր մեծ արժէքը հայ բեմերէն արտաբերելն էր մինչ այդ գոյութիւն ունեցող խաւարատէ մարդիկը: «Մինչև նրա ասպարէզ գալը, — կը գրէ իր մասին Ա. Շիրվանզադէ(4) — հայ բեմի վրայ շրջում էին անշունչ, անարիւն մամեկեմներ, որոնք գրամափոնի նման արտասնում էին հեղինակների մտքներն ու գազափարմերը: Սուեդուկեանը առաջինը կգաւ, որ բեմ դուրս բերեց մարդուն, իւր ներքին աշխարհով, իւր լուսն ու վտտ կողմերով: Նա վերնուստեց հայ բեմից մեռելներին եւ նրանց տեղը դրեց կենդանի էակներ»:

Գ. Սուեդուկեանն է իրաւ հայ թատերագրութեան հիմնադիրը:

ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ (ՇԻՐՎԱՆԶԱԳԷ, 1858-1935)

Շիրվանզադէ շամախցի է, Ազրբէյճանի գիւղերէն մէկը, որ Հայաստանէ էր նահաւ: 1872ին երկրաշարժը կ'աւերէ Շամախը: Շիրվանզադէ, դեռ պատանի, հօրը մահէն ետք, կը ստիպուի անցնել Բաքու, կենսքը վասակելու Համար: Ինքնագրագրութեամբ է, որ ան Հաստէ է գրականութեան աշխարհը: Երկար ժամանակ ապրած է Եւրոպա, Փարիզ, Նախ փեղ տարի՝ 1906ին 1911. ապա նահաւ՝ 1919ին 1926, մաս կ'աճը տարի: 1911էն 1919 կողմաւ էր, Թիֆլիս: 1926ին վերադարձաւ Խորհրդային Հայաստան ու 1935ին ախտեղ ալ փակեց իր աչքերը:

Շիրվանզադէ ամէն բանէ առաջ արձակագիր է, պատմութեան գրող առաւելագէտ: «Նամուս», «Արամբի», «Զուր յայտեր», «Արսէն Գիւնաֆան», «Փաստ», «Վարդան Արուստան վէպեր են: Իսկ պատմութեան գրող առաւելի մեծ թիւով են, որոնցմէ «Յաւագար» ինքն իսկ վերածած է թատերակի, «Զար ոգի» անուան տակ:

Շիրվանզադէի թատերական գործերն են «Եղիմեակի» (1881), «Նագինէ» (1901ին), «Ունե՛ր իրաւունք» (1903ին), «Պատուի կամար» (1904ին), «Աւերակների վրայ» (1912ին), «Շարլապանը» (1912ին), «Կործանումը» (1914ին), «Զար ոգին» (1912ին), «Արմենուի» (1916ին), «Արիստիքի օրերին» (1917ին), «Նամուսը», որ Համանուն վէպէն առնուելով՝ իր իսկ մեծամբ թատերակի վերածուած է եւ տպագրուած 1920ին, «Մորգանի խնամին» (1930ին):

Իր թատերական գործերէն մաս մը թարգմանուած է ուրոսներէն, անգլերէնի, ազրբէյճաներէնի, վրացերէնի, չեխերէնի, լատիներէնի ու ֆրանսերէնի:

(4) Սուեդուկեանի մտնում արքա Շիրվանզադէի իստած հառք յայտ տեսած է «Տարագ» բերքի 1912ի շարքոգ բիւիթ մէջ, նախ՝ «Ժամանակակիցները Գ. Սուեդուկեանի մասին» գիրքին մէջ, էջ 126:

ՇԻՐՎԱՆՁԱԴԷԻ ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԵՂԵ ՈՒ ԱՐԺԷՔԸ

«Եւզիմէ» — Գրուած 1901ին, ընտանեկան տրամ մըն է: Կը դժուարանաճ Հաստատու, որ 19րդ դարուն, կնոջ մը, նախքան իր ամուսնութիւնը ուրիշ մը սիրած ըլլալու իրողութիւնը ա՛յնքան մեծ մեղք համարուէր, որ առաջնորդէր ընտանեկան ողբերգութեան մը: Թատերակը գրուած է մելոտորամաթիք չեղտերով, եւ շատ տեղ չի բռներ Թատերադրութեան մէջ՝ ըլլա՛յ իր թեքեմբով, ըլլա՛յ անձնատրութեանց պատկերացումով:

«Ունե՛ր իրաւունք» — Գրուած է 1903ին. Իբուէնի «Պուպրիկմերու բնուկարան»ին ազդեցութիւնը բացայայտ է հոս. հայ Նորա մը բեմական կեանքին բերելու ճիւղը կայ, բաւական անընական կատոյցով, ուր կարծես աւելի ճառ կը խօսի, քան թէ կեանքի պատասիկ մը կը ներկայացուի:

«Աւերակների վրայ» — Գրուած է 1912ին. Շիրվանզադէ 1911ին Փարիզէն վերադարձած է Կոնկաս ու գրած է այս Թատերակը: Ուժեղ կերպով ժորժ Օնէ կը յիշեցնէ եւ կը կրէ Փրանսական դրականութեան ազդեցութիւնները: Ո՛չ թէ Փրանսական Թատերակի դրականութիւնը միայն, այլ՝ ամբողջ դրական շրջան մը: Դրամատէրներու, աշխատատեղերու աշխարհ մը, ուր երէկուան անտաշ աշխատուորը կը հարստանայ, հարուստը կ'աղքատանայ: Աղքատը, որ նոր հարստացած է, շատ աւելի ազնիւ է, քան նախկին հարուստը. եւ նման այլ էյիշէ պատկերացումներ, որոնք դժբախտաբար չեն յաջողիր փոխանցել կեանքէն բարձրացող իրականութեան մը շերտութիւնը: Թատերակի աւարտին գետեղուած է կարկտան վերջաւորութիւն մը, որ անարժէք կը դարձնէ այլապէս բաւականին մշակուած այս գործը:

«Կործանուածը» — Գրուած է 1907ին: 1905ի ուսական յեղափոխութեան ազդեցութեան տակ գրուած այս գործը ունի թէ՛ գաղափարական եւ թէ՛ զեղարուեստական լուրջ թերիներ:

«Պատուի համար» — Գրուած է 1904ին. Շիրվանզադէի Թատերական լաւագոյն գործը, հակառակ որոշ թերիներու: Չորս արարուածով ընտանեկան տրամ մըն է: Քաղքենի դասին պատկանող, առաւելագար դրամին պաշտամունքը ունեցող, առեւտուրի մէջ որեւէ սրբութիւն չընդունող ու ամէն ինչ սուքի տակ տալով տեւաբար հարստանալու մարմալը ունեցողներու ընտանեկան կեանքին նկարագրութիւնն է: Բռնուն՝ իր նաւթհորերով, արագ եւ առատ դրամ շահելու կարեւորութիւններով, բնական է, որ մէկէ աւելի ընչաբաղցներ, շարժիներ պիտի գրաւէր եւ ոչպի իրեն քաշէր: «Պատուի համար»ը դրամապաշտ մարդու մը, գրած շահելու համար գործադրած խարդաւանանքին, իր ընտանիքի անդամներն անգամ անտեսելուն ու ճգմելուն նկարագրութիւնն է:

1904ին գրուած այս Թատերակը նոյն տարին իսկ, Դեկտեմբերին, կը բեմադրուի Բաքուի մէջ եւ ձեռք կը բերէ մեծ յաջողութիւն: Յաջողութիւնը կը տարածուի շուտով Քիֆլիս, Պոլիս, ուր Աբէլիան-Արմէնեան խումբը կը ներկայացնէ գայն, 1908ին: 1904էն 1911, «Պատուի համար»ը բեմադրուած է 300 անգամ. բան մը, որ այդ օրերու Թատերադրութեան ու բեմերու համար չտեսնուած, աներեւակայելի թիւ է եւ մեծ յաջողութիւն: Անկէ ետք եւս «Պատուի համար»ը յաճախ բեմ բարձրացած է՝ ըլլա՛յ Սփիւռքի, ըլլա՛յ Խորհրդային Հայաստանի բեմերուն վրայ:

«Պատուի համար» Թատերակը ունի բաւական լաւ կառուցում եւ բնական յաջողականութիւն ու յարակցում: Շիրվանզադէ կրցած է մինչեւ անգամ այնպէս մը ընել, որ հանդիսատեսը շատ ալ կարեւորութիւն չտայ Օ-

Քարեանի ժառանգական իրաւունքներուն վերաբերող փաստաթուղթերուն այդքան ուշ երեւան ելլելուն եւ կարգ մը այլ անընականութեանց : Եւ կրցած է այդպէս ընել, շնորհիւ Քատերակին մաս կազմող անձնաւորութիւններէն իրաքանչիւրին իւրայատուկ կերպարի կիրառումին : Ո՛ր միայն այլազան են անձնաւորութիւնները, այլեւ հարազատ կը մնան իրենց կերպարին եւ իրենց գործածած արտայայտութիւնները կը յաջողին սպրող տիպարներու նառա-գայթում մը առաջացնել :

Ճիշդ է, որ Քատերակի վերջաւորութեան Մարգարիտի միտորամաթիք անձնապանութիւնը բաւարար չափով հիմնաւորուած չէ, սակայն մինչ այդ տեղի ունեցող գործողութիւնները, էլիզաւարովի, Բագրատի, Օթարեանի, Սաղաթէչի եւ Մարգարիտի ձօր կերպարներուն ընթացքը, վերաբերումներն ու առած քայլերը այնպիսի՝ ձեւով կ'ընթանան, որ ինքնաբերաբար կ'առա-ջանայ որոշ միջնորդութեամբ, որ կրնայ մտածել տալ, թէ Մարգարիտ ուրիշ կէք չունէր :

Յամենայնդէպս, կառուցումի որոշ թերիները կը կորսուին զանազան անձնաւորութեանց միջեւ առաջացող բախումներուն քնակաւ զարգացումին մէջ, եւ Քատերակի ամբողջութիւնը կը պահէ այսօր եւս ներկայացուելու կարելիութեան արժէքը :

Մինչ Թիֆլիսի բարբառին դիմելով Սունդուկեան ակամայ կը սահմա-նափակէր իր Քատերագրութեան տարողութիւնը, Երբվանդազէ, գրական լեզ-ւի գործածութեամբ՝ բեծ կը բարձրացնէ կենցաղային հարցեր :

«Պատուի համարձով եւ մէկ-երկու այլ Քատերակներով, Երբվանդազէ հայ Քատերագրութեան մէջ կը գրաւէ որոշ արժէքով տեղ մը : Այդ արժէքին մաս կը կազմէ ա՛յն իրողութիւնը, որ ինք նշած է, Սունդուկեանի իրաւ Քա-տերագրի արժէքը մասնանշելու տեսն, թէ՛ «հայ բիւլէն վախեց մեռելնե-րը, եւ տեղը գրաւ կենդանի էակներ» : Երբվանդազէի Քատերակներուն մէջ եւս, կազապարուած խօսքեր, հեղինակի մտածումներ չեն, որ տեղ կը գրա-ւեն, այլ՝ մտքով : Ճիշդ է, որ տեղ-տեղ իր անձնաւորութիւնները կը սահին դէպի միտորամաթիք կեցուածքներ, սակայն, ընդհանուր առումով՝ իր կեր-պարները իրենց անձնական կեանքով ներկայ են բեմին վրայ :

Դժբախտաբար, Երբվանդազէ բաւարարուած է իր նկարագրած քաղ-քենի, գրամագալտ միջավայրին արտաքինը ներկայացնելով միայն : Իր կեր-տած անձնաւորութիւնները չեն խորացուած բաւարար չափով, մնացած են մակերեսային կերպարներ : Իրենք իրենց հետ հարազատ ու անկեղծ, սակայն արտաքին խաւով միայն տեսանելի : Ներքին աշխարհի հալոյթներն ու ցը-ցումները կը բացակային, արմատները խոր չեն :

Դէպքերն է, որ կը պատահին իր Քատերակներուն մէջ, եւ իր անձնա-ւորութիւնները դէպքերու հետ դէմ յանդիման կը դառնան, եւ ոչ թէ ներ-քին գործողութեանց հետ : Այդ պատճառով ալ, Քատերական արուեստի տե-սակէտէն՝ շատ բան կը կորսուի արժէքէն :

Յամենայնդէպս, Երբվանդազէն է, որ լայնցուցած է դէպի հայ Քատ-րոն եւ հայ Քատերագրութիւն առաջնորդող ուղին, հայ հասարակութեան լայն խաւեր կապելով Քատրոնին, ինչ որ հետագայ Քատերագրիներուն հա-մար պատրաստած է պարարտ հող եւ մեծ կարելիութիւններ :

ԼԵՒՈՆ ՍԵՂՐՈՍԵԱՆ (ԼԵՒՈՆ ՇԱՆԹ, 1869-1961)

Լ. Շանթ ծնած է Պոլիս, 1869ին: Սկիւտարի նախակրթարանէն ետք անցած է Էլմիածին, «Փէրզեան» ճեմարան: Անճարանէն ետք՝ Միւնիխ, Լայպցիգ, Իէնա, գերմանական Համալսարաններու մէջ եւ գերմանական գրականութեան ու մշակութի ազդեցութեան տակ՝ Հմտացման եւ խոր ծանօթութեանց շրջանն է Շանթի Համար: Գրականութիւն, մանկավարժութիւն, փիլիսոփայութիւն, դիւտութիւն եւ պատմութիւն իր միտքը հետաքրքրող նիւթերն են: Բացի այդ, ժառնչ շփման մէջ եղած է գերմանական եւ սկանտինաւեան թատերական գրականութեան ու բեմերուն հետ: Նիցչէ, Տիւլթ, Կէօթէ, Քրիշթեփալտ, Իրսէն՝ իր փիլիսոփայական եւ թատերական մտածողութիւնը կազմաւորողներն են: Անոնց բոլորին ազդեցութեան հետքերը կարելի է գտնել Շանթի գրականութեան մէջ. սակայն ո՛չ մէկ պարագայի անոնց ընդգործակցումներն են անոնք: Շանթ իւրաքանչեւ է իր անձնաւարութեամբ եւ այդ իւրաքանչեւ նկարագիրը կը արձայնէ իր գրականութեան:

Չանց կ'առնենք իր կեանքին մանրամասնութիւնները եւ գրական այլ ստեղծագործութիւնները, կանգ առնելու Համար միայն իր թատերական գրականութեան վրայ:

Լ. Շանթ գրած է «Եսիմ մարդը» (1901ին), «Ուրիշիմ համար» (1903ին), «Ճամբուն վրայ» (1904ին), «Հիմ ատուածներ» (1909ին), «Կայսրը» (1916ին), «Շղթայածածկ» (1918ին), «Ինկած յերդի իշխանուհին» (1921ին), «Օշին Պայլը» (1928ին):

Թատերգիւններու գրչին տակ յուզուող Հարցերը միշտ ալ իրենց ժամանակները յուզող Հարցեր են: Այդ Հարցերը կրնան ըլլալ անհատական, ընկերային, մարդկային, դասակարգային, արդարութեան, անարդարութեան, կեանքի, սիրոյ ու մահուան, եւ դեռ՝ թագմաթիւ այլ Հարցեր: Արժէքաւոր թատերակներ կրնան ծնիլ թատերագիրը յուզող որեւէ Հարցէ. սակայն իրենց ժամանակին միայն կրնան վերապրել ա՛յն թատերակները, որոնք կը բովանդակեն մարդկային այնպիսի՝ տաղանայնեք կամ պայքարներ, որոնք իրենց ժամանակակից ընկերային Հարցի լուծումի մը յանդէլէն ետքն ալ դեռ կը մնան իբրեւ Հիմնական նշանակութիւն ունեցող ընդհանրական Հարց: Այլապէս, եթէ ընկերային Հարց մը շօշափող տրաման, ցնցելէ ետք ժամանակակիցներուն մտքերն ու Հոգիները, հասնի այնպիսի՝ ժամանակակաշրջանի մը, ուր իր արծարծած ընկերային Հարցերը լուծում գտած են արդէն, կը կորսործուին յուզելու իր կարեւորութիւնը եւ կը դադրի հետաքրքրական ըլլալէ. ուստի՝ կը կորսնցնէ իր թատերական արժէքը, որ ժամանակաւոր էր եւ, կասեց-կամաց, ամբողջութեամբ մոռացութեան կը տրուի:

«Թատերագրութեան մեծ վարպետները, — կը գրէ ձորճ Պերնար Շօ, — միշտ ալ շփման մէջ եղած են աշխարհի հետ. մեծ այսորժակով պատառած են ամէն ինչ՝ երեսակայականը, գիտութիւնը, բանաստեմբը, բազմաբանութիւնը, քեֆնիքի գարգացումը, սփորը, ամէն ինչ: Անոնք կ'ըլլած են բաւոր վիճարկութիւնները, ընկերային բոլոր հարցերը, բոլոր սովորութիւնները, խոսակցութեան նիւթերը, խանդավառութիւնները, առօրեայի բոլոր նարթիւնները: Իրենց քեման, օսկայն, ընկերային այս կամ այն հարցը չէ, այս կամ այն բարեկարգումը չէ, այլ մարդկութիւնն է՝ իբրեւ ամբողջութիւն մը: Մինչեւ օրս, մեծ թատերագիրը երբեք ընկերվարական մը չէ, ոչ ալ անհատապաշտ մը կամ գրապաշտ մը. ոչ ալ նիւթապաշտ մը կամ արեւէ տեսակի «պաշտ» մը: Թեւեւ ան կ'ըմբռնէ բոլոր «իզմ»երը եւ յանախ կը յիշատակուի:

կը մէջընդմիջ թափար տեսակի խմբաւորումներուն կողմէ, իրրել իրենց կողմնակիցը» :

«Ընկերային հարցերը չափէն աւելի հատուածական են եւ ժամանակաւոր, կարեւոր յուզելու համար մարդ մը ու մղելու համար եկայական այն թիզին, որ էական է մեծ քանաստեղծութիւնը տեղծագործելու համար: Քանի որ կրնայ Ձարլո Ռիտ մը մղել ազգու մեղադրամ մը գրելու, սակայն երբեք չի կրնար Համիլէթ մը, Ֆաուսթ մը, Փիլի կինթ մը արտադրել» :

Լ. Շանթի թատերական ստեղծագործութեան կարեւոր մէկ մասը կ'անցնի անմիջականօրէն ժամանակից հարցերու սահմանը, կրթալու համար ընդհանրական հարցերու ոլորտներուն, ուր մնայուն արժէքներու աղբիւր մարտը կը ներկայանայ իր այս կամ այն երեսով, որուն ձգտումները կրնան ձգտումները ըլլալ համամարդկային ընտանիքին պատկանող ուէջ անձնաւորութեան. որուն պարտութիւնները պարտութիւններն են բոլորին, որուն յաղթանակները յաղթանակներն են մարդուն:

Շանթի սկզբնական գործերէն երեքը տկար ստեղծագործութիւններ են: Անոնցմէ երբորդին՝ «Ճամբուն վրայ» թատերակին մէջ կը յայտնուին Շանթի միտքն ու հոգին շարժուած հիմնական հարցերը, որոնք դարգացուած են հետազոյն «Հին աստուածներ»-ուն, «Կայսր»-ին եւ մասամբ ալ «Նոթալայտ»-նին մէջ: «Ճամբուն վրայ» թատերակի հերոսներուն համար կենսալը անհրապարտ ու անհրաժեշտ է, երբ շարժում, գործ ու խոյանք չկայ: Կիրքը, ձգտումը եւ խեղճութիւնը հասնելու համար մղուող պայքարը միայն իմաստ մը կու տան կենսալին: «Մանկերը ծաւաղները գետնէն դազողներն են. վերէն խոյացողը քանձի չի գար. այս, ամէն մարդ իր ճամբան ունի երթալու», կը գրէ Շանթ աս սկզբնականօրէն կը կանգնի անսանձ թուելու տեսակէտին վրայ:

1909ին, հիւանդութեան քերտումով ասանձնացման օրերուն, հրատապ կիրքով ու մէկ շունչով կը գրէ «Հին աստուածներ»ը, որ շտեմանաւ յաջողութեան բռնեցաւ, կարելի է ըսել անմիջապէս: Գիրքը լայս տեսաւ 1912ին: 1913 Յունուարին, Թիֆլիսի մէջ առաջին անգամ ըլլալով վարակողը կը բարձրէր «Հին աստուածներ»-ուն ներկայացումին համար: Նոյն տարին իսկ վեց անգամ կը ներկայացուէր Թիֆլիսի մէջ, հինգ անգամ՝ Բաքուի մէջ, ապա՝ այլուր: Գրական դասեր կողմակերպուեցան Թիֆլիսի, Բաքուի, Պոլսոյ մէջ: Թիֆլիսի թատրոնները, հակառակ երբեմն բարձր գիններուն, միշտ եղան բերունէ բերան լեցուն, երբ «Հին աստուածներ»ը կը ներկայացուէին: Հանդիսատեսներուն մէջ եղան վրացիներ, թուրքեր, ռուսներ: Աթանիստական կը մը-տազէր «Հին աստուածներ»ը ռուսերէնով խաղալ ռուսական բեմերուն վրայ:

Իր արտակարգ յաջողութեամբ՝ «Հին աստուածներ»ը դարձաւ հասարակական յառաջդիմութեան տարր, իմաստ եւ ազդակ միաժամանակ:

«Արուեստի, իմաստասիրութեան հարցեր, հոգեբանական եւ բարոյական խնդիրներ, որ հանրային ուշադրութեան առարկայ չէին դարձած մեզմեզմ, — կը գրէ Ն. Աղբալեան, — քննաթեան եւ հետախուզութեան ենթարկուեցին մի շտեմանաւ ծնունդով: Հայ հասարակական միտքը, որ սնուած էր սուսուսալայէն քաղաքական խնդիրներով եւ վերջերս կարծես թմրած էր լիովին՝ «Հին աստուածներ»-ի զրդման տակ արթնացաւ եւ սկսեց նոր ուղղութեամբ աշխատել: Շանթի արամայից հետաքրքրութիւնը անցաւ գէղի հայ բնական արւեստը եւ հայ գրականութիւնը ընդհանրապէս»:

Ահա իրողութիւն մը, որ ինքնին կ'ընդգծէ Լ. Շանթի թատերական գրականութեան մեծ արժէքը:

Լ. Շանթ առաջինն է, որ գուրս կու գայ մինչ այդ օգտագործուած

Թատերական նիւթերու նեղ սահմանէն, կենցաղային տրամաներու շրջանակէն, որոնց մէջ միտնուած էին Փրանսական գրականութեան ու թատերագրութեան ազդեցութիւնը կրող թատերագիրները: Լ. Ծանթ, երևակայութեան անկաշկանդ թռիչքով ստեղծած է խորհրդանշական տրամա մը, որ գրգիռներ, գրգռումներ կը փոխանցէ հանդիսատեսի մաքին եւ կը մղէ զայն մտածելու եւ աշխատելու մեծ խնդիրներու վրայ:

Ծանթը գրողիցնող հիմնական հարցերն են՝ կը մեռնի՞ն արդեօք մարդուն մէջ սիրոյ ու կոտորի տենջը, ամէնօրեայ կեանքի պահանջը, բնագոյններն ու կիրքերը...: Կարելի՞ է արդեօք հոգեկան աշխարհ մը կառուցել ու զսպել այն ամէնը, որ կենդանականն է մարդուն մէջ. կը մեռնի՞ն արդեօք այն հիւն, շատ հին աստուածները, որոնց մարդկութիւնը երկրպագած է հազարամեակներ շարունակ:

Ծանթ, գլխաւոր երեք անձնաւորութեանց միջոցով, Վանահայր, Արեղայ եւ Իշխանուհի, կը զարգացնէ այս նիւթը, օգտագործելով թատերական նոր թեքնիք (նոր՝ իրեն ժամանակակից հայ գրականութեան մէջ), ներանհետ լով ներկային մէջ տեղի ունեցող իրական գործողութեանց կողքին՝ իր հերոսներուն հոգեմտային աշխարհին մէջ տեղի ունեցող մասհալածանքներն ու երազանքները՝ իբրեւ բեմի վրայ անդի ունեցող տեսարաններ: Իր տիպարները չեն կենդանանար այնպէս՝ ինչպէս պիտի կենդանանային ընթացիկ թատերակի մը մէջ, տարբեր ձևի գրող թատերագիրի մը գրչին տակ: Անոնք տիպարներու տիպարներ են, սակայն ամբողջ, գեղեցկօրէն ուրուազնուած անձնաւորութիւններ են. իրենց պաշտօնը մտածումը մարմնաւորել, խորհրդանշելն է, զայն բեմի ճամբով հանդիսատեսներուն փոխանցելը: Բեմի ճամբով, սակայն, ո՛ր իբրեւ ճառ, ո՛ր իբրեւ դասախօսութիւն, այլ՝ իբր անձնաւորութեանց հոգեմտային աշխարհի ներքին գործողութիւնը. այն՝ որ թատերական արուեստի փոխանցման միակ իրական եւ ազդու միջոցն է:

Ծանթ իր մտածումներն ու տեսակէտները կը զարգացնէ հակադրութեանց միջոցով, որ ցցուն կը զարմնէ իր ընդգծել ուզածը: Սեւաւոր ու շերտակաւոր, Վանահայր ու աշխարհական Իշխան, Արեղայ ու Ճգնաւոր, վանական խցիկ ու ծով, վանականի վերարկու եւ Սեղայի թաց զգեստը կը զուգակցին, կը հակադրուին եւ հանդիսատեսին կը բերեն ապրող ընդդիմութիւններ, պայքարներ, հակադրութիւններ, յաղթանակներ ու պարտութիւններ:

Վերջ աստուածներու գլխաւոր երեք անձնաւորութիւններն ալ կեանքին մէջ չեն դտած իրենց փնտածը, երջանկութիւնը կամ խաղաղութիւնը հողիին ու մտքին. ու թաշուած են կեանքէն: Երեքն ալ կը ժխտեն կեանքը՝ իր տօրեայ իրականութեամբ: Երեքն ալ կը փնտռեն ներքին գոհունակութիւնը. վանահայրը՝ անապատի կատարեալ մեկուտացումին մէջ. արեղան՝ ծովուն ու երազներու աշխարհին մէջ. իշխանուհին՝ իր սիրած մարդուն հետ իր ունեցած աննիւթական, վերացական կապին մէջ: Մէկուն համար լաւագոյն կեանքը խոհերու կեանքն է, մեկուսի մտքի ձգտումը ու թռիչքի վայելքը. մեկւսին համար՝ մեկուսի երազներու յանձնուիլը. երրորդին համար՝ հողիներու լուսկայն մտերմութիւնը, անկիրք, սակայն ստեղծագործ սիրոյ վայելքը:

Այս բոլորը ներկայացուած են իւրապատուկ լեզուով ու ոճով, տեսարաններու շատ գեղեցիկ կառուցումով ու, մանաւանդ՝ խորհրդանշաններու եւ իրականութեանց սքանչելի զուգորդումով: Երբ լաւ կը խաղցուի Լ. Ծանթի այս գործը, կարելի չէ չազդուիլ, չվարակուիլ, չտարուիլ իր արծարծած մաքերով, քանիբորդ անգամն ալ որ ըլլայ ներկայացումը:

«Կայսրը» շարունակութիւնն է «Հին աստուածներ»ուն, նիւթի իմաստով: Հարցը, սակայն, տնայատէն ու կղզիէն փոխադրուած է կեանքի թոհու-թոհին մէջ, կոուի ու պատերազմներու, պալատական սազրանքներու, կանոսցի հրատարակներու աշխարհին մէջ, ուր տիրապետող ընթացիկ մասնուածը՝ կտրէ, տիրէ, դրաւէ տիրածիդ դաւը, կիներ, ստացուածքը ու վայելէ: — ամբողջութիւն հակապատկերն է կղզիի եւ անապատի համար իբրեւ հիմնական մթնոլորտ ներկայացուածին:

Այս փոթորկալի եւ հեշտալի կեանքի վերիվայրումներուն մէջ նետուած է Օհան Գուրգէն իշխանը, որ կայսերական դահլին կը նստեցնէ ուրիշը, իր հրամանատարը, Նիկիֆոր, երբ լաւ գիտէ, թէ ինք կրնար բարձրանալ դահլին, եթէ ցանկար: Օհան Գուրգէն կը մերժէ դահլին ալ, դահլին հետ իրեն շնորհուած գեղանի թէոֆանոյի ձեռքն ալ, պահելու համար իր արատութիւնը, եւ կարենալ մասնակցելու համար կեանքի «խաղին»՝ իբրեւ խաղ, զոր երբեք չուրջի կարելի չէ առնել:

Ժիշդ է, հետագային, կեանքի պարտադրանքով, կարենալ փրկելու համար իր իսկ վտանգուած կեանքը, կարենալ շարունակելու համար խաղը, ինք ալ կը բռնէ պալատական դաւերով, սպանութիւններով կայսրի վար առնելու, դահլին ու կայսրուհիին տիրանալու ճամբան. սակայն ոչ իբրեւ ներքին հտոթեան մղում կամ պահանջ. դահլին բարձունքը զոհուածակութիւն չի պատճառեր տեւական մտալցումի պահանջէն պատկող իր հոգեկան աշխարհին: Կեանքը կը պահանջէ կանգ շառնել, տեսարար բարձրանալ, նայել աւելի վերը գտնուող բարձունքներուն:

Սհա անգամ մը եւս Շանթի մտածողութեան հիմնական ժառը, այս անգամ կեանքի ծռուղեւին մէջ տեղաւորուած՝ ձգտել, միշտ ձգտել, աւելի բարձրին, աւելի գեղեցիկին. ձգտումը դադարած պահուն իսկ կեանքը կը դադարի մարդկային ըլլալէ, եկեղեցին կուսուուն կը դառնայ:

Սքանչիլի կառուցուած թատերակ մըն է «Կայսրը». շատ ուժեղ կերպարներով եւ սպրոզ անձնաւորութիւններով, որոնք լատ աւելի իրական են, պատ աւելի կեանքով լի, քան «Հին աստուածներ»ու անձնաւորութիւնները: Գլուխ-գործոց մըն է նաեւ «Կայսրը», եթէ անթերի խաղցուի եւ լաւագէտ արտայայտուի Շանթի էութիւնը:

«Շոքայումը».— Քիչ մը աւելի մթին. շատ աւելի զժուար բեմադրելի. սակայն, եթէ կարելի ըլլայ բնական համապատասխան թեքնիք յարմարութիւնները ունենալ ու զայն բեմադրել լիւ: «Շոքայումը» կարելիութեամբ կ'ընծայէ եւրոպական ատումով մեծ պատաստի ներկայացումի մը, ուր իրարու կը մխախտունին քանազան ալլաբանութիւններ ու Լ. Շանթի հիմնական մտածումը կը զգենու նոր գոյներ, կը դրուի կեանքի պայքարի այլ շրջանակի մը, ընկերային պայքարներու ծիրին մէջ:

Անիի բերդն ու ժողովուրդը ձեռքէ ձեռք կ'անցնին, մէկ տիրապետութեան միւս տիրապետութեան առկ կ'իյնան, իշխանական կառավարութեանէն ժողովրդական կառավարութեան ենթակայ կը դառնան, սակայն չի դադարի ժողովուրդին վրայ ճշտող բռնակալութիւնը:

Արասքին յետաշրջումներով ստալաւած բռնակալութիւնը արտաքին բռնակալութիւնն է միայն. եւ օգուտ չունի, որքան ատեն որ մարդը չէ հասած ներքին ազատութեան, չէ խորտակած իր ներքին շղթաները, չէ սպաննած իր հոգիին մէջի բռնակալը, պիտի դայ նոր բռնակալ մը, ձեւ պիտի փոխեն բռնութիւնները, սակայն պիտի չդադրին բռնութիւն ըլլալէ: Պէտք է ձգտել բարձրանալ դէպի ներքին ազատագրումը, մարդոց հոգիներուն մէջ

ծուարած պզտիկ բռնակալներուն վերացումը, որպէսզի նուաճուին Ազատութեան բարձունքները:

«Ինձիս քերդի իշխանուհին» — Եեղում մըն է Լ. Շանթի ներքին ճշգրտումներէն, թէեւ լրիւ կը համապատասխանէ անոր կամքի հիմնական կարեւորութեան բնութագրերուն: «Ինձիս քերդի իշխանուհին» նուազ արժէքաւոր է՝ համաժողովային մշտմանը ու մտածումներու տեսանկիւնէն զատելով. սակայն աւելի տպաւորիչ է, իր բերդերը, իր զուակները օտարին արշաւանքներուն ու սարքած կոտորածներուն հետեւանքով կորսնցուցած ու սպաննուած հայ ժողովուրդի աչքերով դիտելով պարագային: Թատերակի երկրորդական կերպարները ունին բաւարար չափով անձնական կեանք ու դիմադրի: Այլ տարբեր բաւարար չափով ներկայ չեն զլիսաւոր հերոսներուն, Աննա Իշխանուհիին ու Գոզ Վասիլի պարագային, որոնք վերածուած են մըտածումի մը հետապնդումին ծառայող մարմնաւորումներու, որոնք կարծես չեն ապրիր ժարդկային տիրութիւններու եւ վճռականութեանց իրերայաջորդ տաղանակները. վերածուած են միայն ու միայն երկու կամքերու մարմնաւորումներու, որոնց կերպարները մեղ լրիւ չեն համոզեր:

«Օշին Պայլ» — Առանց Հեմինկուէյ կարգացած ըլլալու, «Օշին Պայլ»-ի մէջ Լ. Շանթ հասած է կեանքի հարցերուն վերաբերմամբ հեմինկուէյիան ժողովուրդի մը: Եստ աւելի ժարդկային են իր կերպարները «Օշին Պայլ»-ի մէջ. անոնք կեանքին չեն պարտադրիր այլեւս իրենց կանոնները ու մտապատկերացումները: Չեն ճկիր այն աստիճան, որ վերածուին կեանքէն զըլուած խամահիներու, սակայն չեն պատկաներ այլեւս կեանքին դէմ:

«Օշին Պայլ»-ի մէջ տիրապետող մտածումը այն է, թէ մարդիկ պէտք է յանձն առնեն կեանքին կողմէ իրենց վիճակուած բաժինը եւ պէտք է ընդունին այդ բաժինը լրիւ խաղալու պարտաւորութիւնը. նաեւ պէտք է խաղը խաղան խաղին կանոններով. այդ է միակ ձեւը՝ լեցնելու համար կեանքին պարտաւոր, ապստեղծ ժողովուրդ տալու համար նոյնիսկ:

«Կարծեցի, — կ'ըսէ Օշին Պայլ, — ետեւ ինձի նման մտածող քարեկամներ կան... Մարդիկ նախ հոգիւմ մէջ կը յաղթուին. հոգիւմ մէջ չյաղթը անպարտելի է... անգամ մը քարձրացուցեր եմ այս դրօշակը... պէտք է խաղամ իմ դերս, մինչեւ վերջը... այս տեսակի սխալները չեն սրբագործիր, այլ կը վնասուին»:

Օշին իշխան, որ հայոց անլստիական թագաւորին խնամակալ նշանակելով բարձրացած է Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան իշխանութեան, կը ցանկայ առաջացնել Հայկական ամբակուտ պետութիւն մը: Արտաքին ճշմունքներուն դէմ պայքարելէն չի վախնար ան, չի վարանիր. յաղթական է, կրնայ յաղթական ըլլալ, եթէ ջիշ մը եւս դիմադրէ: Սակայն երբ ներքին դաւերու ու զուարթութեանց ազդեցութեան տակ սեփական թագաւորը իրեն դէմ կ'հլլէ, Օշին Պայլ կը մերժէ թագաւորին դէմ դէնք վերցնել: Այդ պիտի ըլլար այս պարագային՝ յանուն իշխանութեան, եւ ատով իսկ պիտի կացիֆաւար ըլլար ազգային ա՛յն ուժեղ պետութիւնը, որուն կերտումին նուիրած է ու զոհարեցած Օշին Պայլ ո՛չ միայն իր ժամանակը, հանդիսաւ ու հարբտութիւնը, այլեւ, պետական շահերու պարտադրանքով՝ իր սիրած կիներ: Ո՛չ, Օշին Պայլ իրեն վիճակուած զստնութեան բաժակը պէտք է ըմպէ մինչեւ յատակը: Պէտք է խաղայ կեանքի իրեն բաժին խաղը, միշտ հուսատարիմ ինքն իրեն, իր իսկ ձեռքով կերտուած սկզբունքներուն, որոնք իմաստ մը կը բերեն այս կեանքի անհեթեթութեանց. ու զիտակցարար մահուան կ'երթայ:

«Օշին Պայլ» թէեւ իր բնութիւնով Շանթի թատերակներէն ամէնէն աւելի



ազգային դիմադրող թատերակն է, սակայն, իր նկարագրած միջավայրով եւ անձնաւորութիւններով, անիկա ամենայն բնականութեամբ տեղ կրնայ գտնել հերոսական բեմերուն վրայ, եւ վստահաբար հետաքրքրութիւն պիտի առաջացնէ նաեւ այնտեղ, եթէ կարելի ըլլայ լաւ թարգմանել գայն։

Շանթի թատերական գրականութեան գլխաւոր դործերը զինք կը տեղաւորեն միջազգային արժէքով թատերագիրներու կարգին։

Իր մտածումներով ու խոհումներով՝ Շանթ վեր է ժամանակակից անորեանէն։ Խորթափանջ եւ խորամիտ թատերագիր հեղինակ է։ Սէյն տարբը, — կը գրէ Ն. Աշրալեան, — որ գտնափարական չէր, մեծնական բարիքին էր հետամուտ՝ բնաւ ձեռք չարտա նրա գործերը. ոչ իսկ իմացաւ նրա գոյութեան մասին։ Լ. Շանթ մտաւարակեաների դասի հեղինակ է. իր գործով անձերը մտաւարական դասից են. իր յարուցած խնդիրները վերացական են, մարդկային ու մնայուն. այս հանգամանքը եթէ մի կողմից կայանն ու մնայուն դիրք է տալիս նրա գործին, միւս կողմից սահմանափակում է ընթերցողներին թիւը։ Բայց պետք է նրա միջից անցնել աւելի վեր գնալու համար։

Այս բոլորէն ետք պարզ է անշուշտ, թէ թատերական գրականութեան արդէն իսկ շատ դժուարին սեռին մէջ, ուր միջազգային արժէքով թատերագիրները մտաներու վրայ կը համրուին, նման արժէքով մէկ հատիկ իսկ թատերագիր պիտի բաւէր, որպէսզի հայ թատերական գրականութեան կշիռը բաւական ծանր կշռէր հայ գրականութեան մէջ։ Լ. Շանթի թատերական գործերով՝ հայ գրականութիւնը կրնայ ժրջել նաեւ միջազգային արժէքի թատերագիրներու հետ։

Բուզումթի վէպեր, պատմուածքներ անգամ, եւ լաւ գրուած դործեր, չեն կրնար երեւան բերել որակի ա՛յն ծանրութիւնը, գրական արուեստի ա՛յն արժէքը, որ երեւան կը բերեն Սունդուկեանի թատերակները, եւ համ' Լ. Շանթի արժէքաւոր թատերակներէն որեւէ մէկը։ Եւ սակաւ քոքը արժէք պէտք չէ համարել։ Շէյքսպիրի ժամանակակից որեւէ վիպական գործ չկայ։ որ այսօր եւս կարելի ըլլայ կարդալ եւ ըմբռնել իբրեւ արուեստի մեծարժէք գործ։ Մինչ, կարելի չէ չտապանապիլ Մաքսիթի հետ, Համլէթի հետ, Օթելլոյի հետ նաեւ այսօր։

Թատերական ձեւը գրական միակ ձեւն է, որուն միջոցով վախն ու դուրսը, ընդվզումն ու դժգոհանքը, համակրանքն ու հակակրանքը կարելի է գրողնէլ այնպիսի ուժգնութեամբ, որուն չեն կրնար հասնել գրական մնացեալ սեռերը։

Յուզումէ յուզում ամենակարճ տարածութիւնը բեմէն որան տարածութիւնն է։ Ո՛րքան խոտանայ մարմին մը, ա՛յնքան ծանրութիւն կը ստանայ։ Թատերագրական արուեստին համար կարելի է ըսել, թէ հեանքի խոսքման արուեստն է։ Ուստի՝ երբ յաջողած գործ մըն է, թատերական գործ մը մէջտաւելի ծանր կրնայ կշռել, քան տարբեր սեռերու յաջողած գործերը։

Սունդուկեանցով ու, մասնաւոր՝ Լ. Շանթով, թատերական գրականութեան կշիռը բարձր է հայ գրականութեան մէջ։

Լ. Շանթով հայ թատերական գրականութեան կշիռը բարձր է նաեւ միջազգային թատերական գրականութեան մէջ։

ԲԱՅՊԻՆ ՓԱՓԱՋԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

Ն. Գ Ի Մ Ա Ք Ս Ե Ա Ն

Ժ Ա Ռ Ա Ն Գ Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ո Ս Ք Ը ...

Համազգայինի «Վահէ Սէթեան» ար-  
պարանէն 1984ին լոյս տեսած Մուշեղ Իշ-  
խանի «Իմ ուսուցիչներս» գործը տն-  
ակթեւեթ իր լեզուով եւ ծայրագոյն իր  
պարզութեամբ, ընթերցանութեան հաճե-  
լի պահեր կրնայ ընծայել բոլորին՝ հա-  
ւասարապէս :

Բազատրականի մը առջնութիւն, այս  
հատորին բովանդակութիւնը կազմուած  
է կենդանագրութեամբը Մ. Իշխանի կարգ  
մը իսկական ուսուցիչներուն, ինչպէս եւ  
անոնց, որ, առանց իր ուսուցիչները ըլ-  
լալու, ուսուցիչի դեր կատարած են Իշ-  
խանի կեանքին մէջ, առնուազն մէկ պա-  
րագայի՝ առանց նոյնիսկ արժանի ըլլա-  
լու այս կոչումին :

Հաստիքին սկիզբէն, իրենց ամէնէն  
հարազատ գոյներով մեր աչքերուն առ-  
ջեւ կը տողանցեն Յակոբ Օշական, փրոֆ.  
Նիկողայոս Ազոնց, Նիկոլ Աղբալեան,  
Էւոն Ծանթ, Սիմոն Վրացեան, Կոստան  
Զարեան եւ Վահան Թէքէեան : Աղբալեան  
եւ Ծանթ արժանացած են յաւելեալ ու-  
սումնասիրութեան, ուր առանձնացուած  
են անոնց իւրայատկութիւնները, ա-  
ռաջինի պարագային՝ իբրեւ մտաւորա-  
կան, քննադատ եւ մեծ հայ, իսկ երկ-  
րորդի պարագային՝ իբրեւ մարդ, ման-  
կավարժ, սկզբունքի մարդ, աշխատանքի

հերոս, իբրեւ ուղղամիտ եւ վեհանձն,  
զբապաշտ ու անհաւատ, բարոյական ու  
գաղափարական տիպար :

Ինչպէս պարկեշտ եւ մէջբերումե-  
րով ու վկայութիւններով հարուստ պատ-  
մութեան դատաստանին դիմացող սրեւէ  
գործի պարագային, այս գործը եւս եր-  
կու երես ունի : Առաջին՝ կենդանի բնու-  
թագրումը, կենդանագրութիւնն է յիշեալ  
ուսուցիչներուն, ապա՝ տողընդմէջ կեն-  
դանագրումը նոյնինքն Մ. Իշխանի, ա-  
նոր կարած ճամբուն, տրուած ըլլալով,  
որ տիպարները ներկայացուած են կեն-  
դանի շփումի պատմողական ու թարմ ու-  
ճով, ուր կ'ուրուազմունին անոնց առնու-  
չութեամբ Մ. Իշխանի անդրադարձներն  
ու խոկումները, ընդօգնումներն ու համա-  
կերպումները՝ տարածուած երբեմն ամ-  
բողջ տասնամեակներու վրայ :

Ըստ էութեան, գործին միաց բանին  
յիշեալ կերպարներէն փոխանցուած ժա-  
ռանդութեան մը, պատգամի մը կամ  
պատգամներու աւանդումն է յետնորդ  
սերունդներու. ժառանգութիւն եւ պատ-  
գամ, որոնց հանդէպ Իշխանի հաւատքը  
երկմտութիւն չի ճանչնար երբեք, հակա-  
ռակ իրապաշտ կարգ մը զնահատումնե-  
րու եւ մարդկային կարգ մը արատներու

ստի՞թով նոյնինքն Իշխանի ունեցած վե-  
րաբերումին: Իսկ այդ պատգամները կը  
վերաբերին անհետացած սերունդի մը  
նկարագիրին, բարոյականին, աշխարհա-  
հայեցքին, դպրութեան, զբաղմուն-  
քեան, ինչպէս եւ՝ զբարձրագոյնութեան  
ժամին անոնց արտայայտած եւ անտա-  
մանցելի ճշմարտութիւններուն: Այս տե-  
սակէտէն՝ Մ. Իշխանի զործը կը կրէ  
նաեւ դաստիարակչական հանգամանք:

Արիկա, սուկան, զործին կնդեւը կը  
կազմէ: Բարոյադրասկան թէ զբաղմուն-  
դիտական հազարաւոր հասարակութեւ  
մէջ կրնանք հասանարար հանդիպիլ Յ. Օշա-  
կանի մը կամ Աղաթախի տեսակէտնե-  
րուն կրկնութիւններուն: Կարելոյրը այս  
է՛ն:

Կարելոյրը՝ մեծ ուղիւղութեան մը  
չուքին սակ (Մեծ Եղեան եւ Հայաստանի  
Հանրապետութեան անկախութեան կո-  
րուստ), նախքան մեծ արժանապատու-  
թեան եւ անկուս կամ չի կոր ներգոր-  
ծութեան սակ զործող ստանձին շնոր-  
հու շատ աստատանքն է, իրենց ուսերուն  
նկատած անճարին պատասխանատու-  
թեան մը անարատի ընդունումը, ար-  
ժանաբարութեան զգացումի մը ընկերակ-  
ցութեամբ, որ երբեք իրենց անձին չի վի-  
տարէր, այլ՝ հասարական ժառանգու-  
թեան մը, որ պէտք է բացարձեւ, ասանց  
հրճուելի, ասանց կացութեան ուղիւ-  
ղութեամբ, անուշ բանի մը պէս, ան-  
զորտարէն փոխաբերի սուկի երկատ-  
արդ ուսերու վրայ եւ ասանց յարա-  
կամ ընդունին զայն, նախ երկիւղած լը-  
րութեամբ, նախ անարատի վեհապա-  
նութեամբ:

Յւ. Կուսարի, նախ այս նախնա-  
խնդիրքեան ուղիւղութեամբ կարելի է  
ըստիկ խոսութեան ու խոսապետանիւ-  
թեան ուր կարողիմը, որուն գագաթնա-  
կէտն երէ՛ Շանթ կեցած է, ասոյ շատ  
մէջ սարքաւթեամբ անոյ կը կեանքն  
Յուզան, Աղանց եւ Վրացեան կը թուի  
սխալու. որ անոնց ներառելին ու բարո-  
յական հարցադիմերը կարգուած են մ'ը  
թէ կեանքի յայտարար սպիտակութիւն-

րուն տակ, այլ՝ վեհալուց այս ժառան-  
գութեան ծանրութեան տակ:

Դժուար է այսպէս բացատրել, թէ  
ինչո՞ւ Շանթ դաստիարակի եւ զորդի իր  
պարտաւորութեանց հանդէպ անխորի  
ու անզիջող է: Դժուար է այսպէս բացատ-  
րութիւն տալ այն արժեւորութեամբ նաեւ,  
թէ Ալանց ինչո՞ւ այդքան կ'ընդգիշի, երբ  
տարբեր հայերու ծօռ ասարներու նկատ-  
մամբ ստորակայութեան բարդոյթ կը  
նշմարէ: Դժուար է բացատրել, թէ մե-  
ծարանի քննանիքն եւ պրակտիկ իր զոր-  
ծունէութեան նկատմամբ Վրացեան ին-  
չո՞ւ այդքան նախանձանդիք է: Դժուար  
է հասկնալ, թէ Օշական, հայ գրականու-  
թեան վեհալուց ժառանգութեան նկատ-  
մամբ անհազի վերաբերում ցուցարկող  
սերունդներու ի սեն անխան կատարու-  
թեան պահեր ինչո՞ւ կ'ունենայ:

Այս նախնախնդիրք: թիւն ու խոսա-  
պետանքը քիմը ամենէն ասոյլ ուղղուած  
են իրենց սեփական անձերուն դէմ ու ար-  
պա միայն՝ ուրիշներու: Անոր համար է  
ստատեւարար, որ Շանթ կորագրիի գա-  
ղաթնակէտին կը կանգնի: Ինչ իրեն կան-  
դէպ ամենէն սուկի խոսապետանքն է:  
Ուրիշներու անկուս խոսապետանքն  
նրեւելով անդիմ, իրենց անձերուն կան-  
դէպ համեմատարար նուազ խոսապետ-  
անիւթիւն կը ցուցարկին Ալանց (որ  
նրապահի արտայն), Վրացեան (ընկե-  
րային լրբանակներ սերիու երեւոյթ),  
Օշական (որ հակառակ ստեղծագործա-  
կան քննուն գործունէութեան, իր ան-  
կարգապետութեան գրտակից է): Կը ան-  
սուկի Աղաթախ եւ Քիչեան: Բայց ինչ  
իւր անձին նկատմամբ նախնախնդիրքու-  
թեան ու խոսապետանիւթեան կրտաչե-  
նի ստորադի, ընդհանուր կամակերպու-  
մի եւ ասանց պայտաղի յանձնարար դիմ-  
քն վրայ աստեղծարար կը կանգնի նու-  
սան Զործան:

Փոքրուց ժամանակներու եւ ար-  
տարանքի կանգնին նախ քան պրակտի-  
կանութեան կը նկատուի, որ նախնի  
ամենէն խոսապետանքի Շանթ անպար-  
տաւորութեան է երբեք քիմը եւ նոյն

կայսրութեանց ու պահանջներուն յարմարելու: Բայց ատուելարար ինք է դարձեալ, որ յամառորէն կը պայքարի, նախքան զիջում մը կատարելը: Համակերպումի ուղիք երեւոյթներու կը հանդիսանայ Ադրնոսի մօտ (Բ. Աշխարհամարտի նախօրեակ), թէ՛ քէնանի մօտ (մահուան յանձնարար), Օշականի մօտ (մեկնմանի որոնում, Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ աշխատանք ձեռք բերելու ճիգեր): Համակերպում, թէ՛ ներլքուածութիւն: Շարունակելով հանդերձ մտաւորական իր գործունէութիւնը, Աղբալեան փաստորէն գաղթած է զբիլէ եւ ստեղծագործելիք վատնելով գերակշիռ իր հմտութիւնը զանգան մարդերու մէջ: Բայց Ջարեան գերագոյն համակերպումին կը միացնէ նաեւ աներեւակայելի այնպիսի պատենապաշտութիւն մը, որ անտարակոյս կ'ոտնակոխէ հայ զրոյի վարկն ու կոչումը:

Ժառանգուած աւանդի ծանրութեան դիտակցութիւնն է ապա եւ գործեալ, որ, ինչպէս Օշականի պարագային յիշուեցաւ, իրենց անձերուն եւ ուրիշներու նըկատմամբ խոտապահանջութեան եւ համակերպումի դէմ պայքարի առնիթիւր, Իշխանի կերպարները յաւելեալ կամ նըկազ կարգապահութեամբ կ'առաջնորդէ: Ջարեանը պահ մը գուրս ձգելով՝ կը նըկատենք, որ կարգապահութեան տեսակէտէն Շանթ զբաւան ծայրայեղութիւնն է, իսկ Աղբալեան՝ բացասական: Շանթ խոտակոծութեան մակարդակ բարձրացուցած է իր կարգապահութիւնը: Վրացեան, Օշական, Ադրնոս եւ թէ՛ քէնան նըկազ կարգապահ են, թէ՛ եւ զերժանագութեան պակասէ չեն տարապիւր:

Այս իսկ պատճառով, բացի Ջարեանէն, բարոյականութիւնը շեշտուած դիժ էր բոլորին մօտ ալ, մեկնելով իրենց ուսուերուն ծանրացող գերագոյն պատասխանագրութեան ներշնչած պարկեշտութեան: Այս գիծը կ'երևի նոյնիսկ նուազ քշխատունակ Աղբալեանի մօտ:

Բայց կը թուի, թէ՛ ծայրայեղ այս կարգապահութիւնը, յաւելեալ մեզէ մը կը բանայ Իշխանի կերպարներու սիրտին

եւ միտքին միջեւ: Առանց կարգապահ ըլլալու, Ջարեան այդ ճեղքը ունի արդէն: Բայց նոյն երեւոյթը կը կրկնուի նաեւ, այս անգամ Վանահաղորդին եւ հետեւաբար՝ տարկայական Աղբալեանի տեղնոցով, Շանթի մօտ:

Ինչպէ՞ս իացատրել այս երեւոյթը: Ակամայ, գործեալ հայ ժողովուրդի եւ Հայ Գառնի լուծման առջեւ զցուած պատուարներու, անհամար դժուարութիւններու պարտադրանքներուն, ասարկայական մտածումի անհրաժեշտութեան ծնունդ պէտք է համարել Շանթի թերեւս ակամայ սայթաքումը զէպի բանակումնութիւն, որմէ անպայմանօրէն կը տուժէր թէ՛ անոր գրականութիւնը եւ թէ՛ անոր մարդկային զերմութիւնը: Միւսմեջուն մէջ սիրտի եւ միտքի համալսարանութիւն մը նշմարելի է ու Ջարեան գուրս կը մնայ համալսարանին այս ծիրէն, որովհետեւ, այս անգամ Օշականի վկայութեամբ, պատահապաշտ միտք մըն է անոր նոյնիսկ ամէնէն զգացական լարեալը յուզողը:

Տարբեր եւ բոլորովին առանձնայատուկ պարագայ է այս առումով՝ Աղբալեան: Հայկական ժառանգութեան հանդէպ անոր երկիւղած խոտապահանջութիւնը, ամէն բանէ առաջ ինք իրմէ, կ'անդամալուծէ զինք, անգործութեան դատապարտելու աստիճան: Կ'արժէ կարգալ Աղբալեանի գրաքննադատական տեսութիւններուն նուիրումը Իշխանի էջերը, համոզուելու համար, թէ՛ անոր անգամալուծումը ի՞նչ երկիւղածութենէ կը բխի:

Բոլոր այս տուեալներու լոյսին տակ՝ բնական է, որ աշխարհայեացքային յոտակ տարբերութիւններ երևին Իշխանի կերպարներուն միջեւ: «Սուրը չքան զինք, որ երգիչ դառնամ, երգը չքան զքաղցր, այ մարտիկ դառնամ» կը խոստովանի Աղբալեան: Հակապատկեր՝ Շանթ սուրբ եւ երգը կամօք ուժով իր ձեռքը պահած է ու կէօթէի ու Շանթի միջեւ գուրսահա մը քուրելով եւ Շանթի ակնարկելով՝ Իշխան կը կրկնէ Կլոթէի խօսքերը. «Ես մարդ մը եղայ, այսինքն՝ պայքարող մը»:

Իշխանի բառերով, Շանթի եւ Կէօթէի պարագային, «Երկուսի ներաշխարհին տիրական յատկանիշը պայծառափայլ անդարտութիւնը կը մնայ: Երկուքի իմացականութիւնն ալ կ'իշխէր երեսակայութեան խնձր ստումներուն, իբրն զբացիչ հակակշիռ: Երկուքի կամքն ալ գահակալ վեհապետ մըն էր՝ կիրքերու եւ բնագոյնի տմբոյսային յագմութեան վերեւ»:

Այս անդորրութեան եւ իմացական հակակշիռին պահանջը կը զգար Օշական: Թօքը իր աշակերտներուն ուղղելով՝ կ'ըսէր. «Սլալ է փախուտ տալ մաթեմատիքէն, իմ անձն անգի օրինակ, իմ միտքս մշակուած ու տխրեցիկն է եղած կ'ըլլար, եթէ քարտապոյն ուսում տալս ցած ըլլայի»:

Բայց նոյն հետան, միտքի եւ սիրտի յաշտեան պահանջն ձեռքադառնելու իր անկարողութիւնը արտայայտելով՝ կը խօսի ուսողութեան լափ չոր հըրապարակագրութեան վտանգներուն մասին. «Ղազէթաճի մի՛ ըլլաք. հրապարակագրութիւնն էր, որ մեռցուց Ռ. Զարգարեանի, Գ. Բարսեղեանի եւ ուրիշ տաղանդաւոր տղոց գրականութիւնը»:

Իսկ կատարելապէս կարգապահ մարդ՝ Աղոնց, որ ուսողութեան կամ բարձրագոյն ուսման պէտք չունէր, որպէսզի տիտիվիմէ ըլլար, կը զարմանաբար հայ տղոց հայրենագիտութեան մէջ երեւցած թերիներուն վրայ. «Զարմանալի, անգ ի՞նչ եմ օտարեցրել հայ դպրոցներին մէջ, եթէ Հայաստանի աշխարհագրութիւնն իսկ չգիտէք: Երկու խնդիր պակաս յոսովիք, երկու գիրք պակաս կարդայիք, խայտ չայաստանք լաւ սերտիւք»:

Շանթ ալ կ'ուզէր ճիշդ այս կրթութիւնը տալ իր ուսանողներուն եւ ոչ թէ զանոնք պետական ծրագրերով ծանրաբեռնել: Իշխան անոր մանկավարժութիւնը կը խոստանէ Հետեւեալ արտայայտութեան մէջ. «Մարդկային կարողութիւններու ընկերային մշակումն է, որ կը կոչուի գաստիարակութիւն, առանկա-

բար հոգեկան ու քարոյական կրթութեան աստիճակ»: Ուրիշ խօսքով՝ ՄԱՐԻ ԸՄԱՆ, ՄԱՐԻԾՂԻՆԱՆԱԼԼ:

Օշական կը ձայնակցի: Դասի պահուն թուարանութեան խնդիր մը չունենալով զբաղած աշակերտի մը վրայ կը պարպէ իր ցասումը, ըսելով. «Ասիկա հայ գրականութիւնն է, հայ հոգի, հայ շունչ. եւ յօսողը Օշականն է, դուք ոչտք է ապակե կտրիք»:

Երանելի օրեր: Տաղանալը կարգապահութեան եւ առարկայական մտածողութեան տաղանալ էր, առանց սակայն ստանկոնսելու հայութեան զերազոյն աւանդները: Գետական ծրագրերն էր զործադրելու տեղ, հայ մարդը մարդացնելու եւ մարդացնելու համար մէջ ինքնարեւարար հայ հոգի եւ հայ շունչ վերջելու մղումը առօրեայ տաղանալ էր: Անըստ ոգեւորութեան մը գրամագլուխը կար եւ անպատ կարծուած կարելուութիւններ:

Այս լատտեսութիւնը կ'արտայայտէր Օշականի կողմէ, Գէլրութի մէջ տեղի ունեցած գրական իր յորելիանին առիթով. «Բացառիկ պահ է ասիկա թէ՛ ինձի եւ թէ՛ հայ գրականութեան համար: Մեծ սպանդէն վերապրող երեք սերունդներ կ'այսօր սրահին մէջ. — Երեց սերունդի ներկայացուցիչ Շանթ, իմ սերունդս եւ նորերը: Հայ հոգին կը շնչէ, հայ գրիչը ծաղկուն կը մնայ»:

Ըսինք յօդուածին սկզբնաւորութեան, որ այս գործը, յիշեալ կերպարներու բարբառն կենդանագրութիւնը ըլլալու արեւթեր, ինքնակենդանագրութիւնն է նաեւ Մուշեղ Իշխանի:

Չական թուականներու պատանիքն եւ վաթսունական թուականներու չափահաս մարդուն կարած համբան է ասիկա՝ իբրեւ բանաստեղծ, իբրեւ մարդ եւ իբրեւ հայ:

Առաջին ակնարկով իսկ ցցուն կը դառնայ անոր մօտ ինքնազնորութիւն վարձագիծ մը, որ իր մտայուն յատկանիշներէն մէկը պիտի մնայ մինչեւ վերջ: Ինք-

նախնումի վարքագիծ, թելադրուած խոր երկիրաճութենէ ո՛չ միայն իր ուսուցիչներուն նկատմամբ, այլև՝ ուսման նըկատմամբ: Ուրիչ եւ խորագոյն իր հաստատուած հայ դպրութեան ու անոր սպասարկուններուն հանդէպ, անոնց ցուցմունքներու խոր տպաւորութիւնը պատանի թէ չափահաս Իշխանի հոգիին մէջ: Իրենց անջինջ դրոշմով, այս տպաւորութիւնները քանդակուած կը մնան Իշխանի յիշողութեան մէջ եւ, տարիներու փորձէ ետք, կը հաստատուին կամ կը հերքուին, երկու պարագային ալ ոչինչ պակասցնելով Իշխանի յարգանքի զգացումէն՝ այս սպասարկուններուն նկատմամբ:

Ինքնաջնջումի այս վարքագիծին վերայ, գիրքին մէջ կու գայ աւելնալու տխրութեամբ շնչու մը, զոր, ճիշտ այդ վարքագիծին պատճառով, դժուար է դատարարել: Այսպէս, Իր 20 հաստորներու զագաթնակէտին կանգնած յաղթական ու հպարտ Իշխան մը չէ մեզի ներկայացուցը: Իր քան ալ փորձենք յուստես ըլլալ, բանաստեղծութիւն, գեղարուեստական արձակ, թատերգութիւն եւ յօդուածագրութիւն մշակած Իշխանի նաեւ յուշագրական-կենդանագրական այս էջերը որոշ տխրութեամբ մը կը համակեն մեզ:

Պետական ծրագիրները եւ մասնագիտացումը իւրած են իրենց գոհերը: Նման նուիրեալներու անսպասու կարծրութիւնը դրամադուրը շունինք այլեւս: Անոնց կարօտախան ու վերադարձի մարմանն են թերեւս Իշխանը յուշագրութիւն-կենդանագրութիւն այս դործի երկնումին մղող պատճառները:

Թերեւս կ'սպրի յաճախանքը հայկական տարերքին մէջ իր կերպարներուն տեղն ու դիրքը ճշդելու, որովհետեւ, վերջին հաշուով, կենդանի վերջին եւ ատակ վկան է անոնց ժառանգութիւնը փոխանցելու տեսակէտէն:

Միտմամանակ, Իշխան հաւանաբար կ'անդրադառնայ, որ դատարարակցական արժէք մըն ալ ունին այս բողոքը, ուսուցիչ-աշակերտ յարաբերութեան որոշ եղանակի մը, մեծարանքի եւ երկիրաճութեան մթնոլորտի մը բերումով, որ ա-

ւելին սորվելու տնայաք ծարուէ մը կը բխի եւ համեստութիւնը, ուսումն ու ճանաչողութիւնը մեծարելու բնույթ կը ստանայ:

Տրուած ըլլալով մա'նուանդ, որ ուսուցիչներու հանդէպ ակնածանքն ու ուսման նկատմամբ անյադ ծարաւը զրեթէ անհետացած են: Հակադարձաբար եւ միտմամանակ, ուսուցիչները այլեւս չեն այն անձերը, որոնց մասին կը խօսի Մ. Իշխան:

Բացատրական իր ներածականին մէջ, Մ. Իշխան համեստօրէն կը գրէ. «Անոնցմէ հիմաք, — Յ. Օշական, Լ. Շանք, Ն. Ազրայիան, Ն. Աղանց եւ մասամբ Կ. Զարեան, — եղած են ուսուցիչներ: Ուղղակի իրենց կը պարտիմ մտաւոր եւ հագեկամ դատարարակութիւնս:

«Միւս երկուքը քէեւ դաս չեն տան՝ դած ինձի, քայց անոնցմէ մէկը՝ Ս. Վրացեան գաղափարակամ գլխուար դատարարակներէն մէկն է մեր սերունդին, իսկ Վահան Թէֆէեան՝ բանաստեղծական արուեստի թերջնաղբը»:

Ուսանողական իր մէկ գրութեան մասին Օշականի քննադատութիւնները թուելէ ետք, ակնածանքով եւ երկիրաճութեամբ՝ Մ. Իշխան կը գրէ. «Այնոր ալ տխրի չկարեմալի, կը խորիմ, Օշականի ուզածը տալ իր ուզած ձեւով»:

Համեստութիւն, ակնածանք, երկիրաճութեան եւ անսպասու յարգանք յիս այն իրողութեան, որ Մ. Իշխան գրողի անտարկելի վարկ մը նուաճած է արդէն եւ հայ գրողի կենանքի տաքն ու պաղը ինք ալ ճաշակած է:

Յետագարձ քնշութեամբ մը, ինչպէս որ իրմէ տուալ ըրած էին Մահարի («Այրուաղ այգեստաններ»), Զարեանց («Ներկիր Նայիրի»), Շահնուր («Յարալէզներու դաւանանքներ») եւ ուրիշներ, Մ. Իշխան հակած է իր մանկութեան վրայ եւ գրած իր «Հացի եւ լոյսի համար» գործը:

Ինչպէս որ Մահարի աքորէն վերադարձէն ետք, ինչպէս որ Որբունի 50ական թուականներու ծանր իր հիւանդութենէն ետք, ինչպէս որ Շահնուր հիւան-

զանոցի ճարակ դառնալէ ետք, կորսւ-  
լած կամ կորսուելիք ինչ որ բանի մը գի-  
տակցութենէն մեկնելով բեղուն գրիչնե-  
րու վերածուած էին, Մ. Իշխան եւս  
վաթառնական թուականներու իր հիւան-  
դութենէն ետք եւ հաւանաբար նոյն նը-  
կատառումներով բեղուն գրիչի մը վե-  
րածուեցաւ:

Իայց շատ քիչ է թիւը անոնց, որ  
կեանքէն ստացուած շնորհներու եւ ու-  
սուցիչներէ ստացուած ճանաչողութեան,  
Հոգիի, շունչի եւ այլ բաներու հանդէպ  
այսքան երախտագիտութիւն կը ցուցա-  
բերեն:

Ասոր զլիաւոր պատճառը, ինչպէս  
որ արդէն յիշուեցաւ, Իշխանի աներկմիտ  
հաւատքն է իրեն փոխանցուած պատգա-  
մին ճշմարտացիութեան ու ժառանգու-  
թեան քաղցր բեռին հանդէպ:

Ապրումով, պարկեշտութեամբ ու  
հաղորդականութեամբ գրուած այս գոր-  
ծը իր ներքին շերտութիւնը կը ստանայ  
Մ. Իշխանի ճիշդ այս հաւատքէն: Հա-  
ւատք՝ նախկին իր ուսուցիչներուն նը-  
կատմամբ, հաւատք՝ կեանքի անոնց  
պատգամի անկորնչելիութեան նկատ-  
մամբ եւ հաւատք՝ իր իսկ գրիչին ու գրա-  
կանութեան նկատմամբ:

Դժբախտաբար, սակայն, կարելի չէ  
նոյն բանը ըսել յոյսի մասին:

Երբ իր ծանր հիւանդութենէն դուրս

եկաւ, սառնարանէն ելած մարդու Հոգե-  
բանութեամբ, Մ. Իշխան հաւանաբար  
կորսուած ու վատնուած ժամանակի մը  
ու արժէքներու գիտակցութիւնը ապրե-  
ցաւ ուժգնօրէն:

Եւ որովհետեւ առաջելութեան լըծ-  
ւած ամէն մարդու կեանքը գրօշարչաւ  
մըն է եւ կը ձգտի պատգամ-գրօշը, իր  
նախորդներէն առնելով, յաջորդ սե-  
րունդներուն փոխանցելու, Մ. Իշխան  
գրօշարչաւի մը ձեռնարկեց:

Իր այս հատորով, ան կը ձգէ այն  
տպաւորութիւնը, որ իր հանդերձանի ա-  
ւարտին՝ գրօշը իր ձեռքը մնացած է,  
գրօշարչաւ-մրցումը շատոնց վերջ գտած  
է եւ գրօշը ստանձնողներ չկան:

Ասիկա միտքի եւ սիրտի միջեւ ճեղք  
մը չէ այլեւս, այլ՝ հաւատքի եւ յոյսի  
միջեւ քիրքեկարտեան մղձաւանջ մը, զո-  
յութիւնական տառապանք - տուայտանք  
մը, որուն զգացումով կը բաժնուինք հա-  
տորէն դժբախտաբար:

Եւ հոս կ'երեւի նոյնպէս Թէքէեանի  
մահուան նախազգացումը:

Կրկնակ ողբերգութիւնը Մ. Իշխան  
մարդուն, Մ. Իշխան մտաւորականին,  
բայց յատկապէս հաւաքական ոգորում-  
ներու եւ անկորնչելի ժառանգութեան  
խօսանակ՝ Մ. Իշխան հայուն, ինչպէս եւ  
մտահոգութիւններուն ձայնակցող ու  
գործնական միջոցառումներ ձեռք առնող  
բոլոր հայերուն:

Ն. ԴԻՄԱԲՍԵԱՆ



Հ. Բ. Ը. Մ. Ի «ԱԼԵԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ»  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
1983Ի ՅԱՏԿԱՅՈՒՄՆԵՐԸ

Հ. Բ. Ը. Մ. Ի-ի ստեղծած «Ալեկ Մանուկեան Մշակութային Հիմնադրամի յանձնարարները, 2 հոկտեմբեր 1983 թուականի հարգազրույթները մեզ կը յայտնէ, թէ 1983 տարեշրջանի իր նիւթական յատկացումները հասած են 928,580.41 տուրքի, հետեւեալ կատարվելուն համար:— Հրատարակութիւնները և գրքերու գնում՝ 108,285.89 տուրք, մշակութային և կրթական յատկացումներ՝ 56,400.00, նպաստ վաստակաւոր ուսուցիչներու և մտաւորականներու՝ 56,632.00, յատկացումներ կրթութեան հարցով ծախսերու՝ 58,500.00, ուսումնասիրութեան և շարունակելու՝ 27,144.00, պատկերասրահի և մաքրամաքիտի յարստագրերու՝ 24,608.61, քահանայութեան՝ 8,486.81, գումար՝ 935,087.41 տուրք:

Նմանապէս, զարգանալու և մշակութային կնքողներու շինութեան համար կատարուած են զանազան յատկացումներ, որոնց զուտը հասած է 593,513.00 տուրքի: Այսպէսով, 1983 տարեշրջանին հիմնադրամին կատարուած յատկացումներուն ընդհանուր զուտը եղած է 928,580.41 տուրք:

Յանձնարարներն որոն հարգազրույթները կը նշէ, քրէ Հ. Բ. Ը. Մ. Ի-ի շնորհիւ «Ալեկ Մանուկեան» Մշակութային Հիմնադրամին յատկացումները անցաւ են բարեբարին անձնական նախաձեռնութիւններէն և իր կողմէ հաստատուած «Ալեկ և Մարի Մանուկեան Հիմնարկութեան» տարեկան յատկացումներէն, որոնց ընդհանուր գումարը 1983ին կը հասնէր 1,897,447.68 տուրքի:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԺԱՊԱՏԿԵՐԻՆ  
ՆՈՒՐՈՒՄ ՓԱՌԱՏՈՆ

Յրանստի մշակութային նախարարութեան հովանաւորութեամբ, Փարիզի «Օլիմպիկ» շաբաթականի խմբի մէջ, Հայ Հատեհողական Արտեստի Միութեանը կազմակերպած է Հայ շաբաթականի նորոնուած փառաստ մը, որ տե-

ւած է մտ երկու շաբաթ՝ 6ին մինչև 19 Յունիս: Յոյսադրուած են հարբերի և սփիւռքային անուանի բնագործներուն լաւագոյն գործերը, որոնց կարգին՝ Մարգիտ Փարաշանեանի «Հրեզնէն» և «Նուան գոյնը» տնուն ժայռակները, Հերիկ Մալեանի «Հայրը», Համո Բեկ-Նազարեանի «Պեպոս», «Նամուսը», Արտասաղ Փիլիպեանի կարճատեղի ժայռակները, ժայռ Գերաշանի «Հայաստան 1900» գործը, Արթր Յովհաննիսեանի «Ազրիլը» և ուրիշ ժայռակները:

Փարիզի արտեստի լրեւնակները, զննադատելիքն ու Ֆրանսական մամուլը մեծ խանդավառութեամբ զիմարած են այս փառաստը: Օրինակ, «Լը Մարեմ» և «Ֆիլար» օրաթերթերը, «Հայր» այս փառաստին նուիրած իրենց յոգևածներուն մէջ, գրած են, թէ մինչև այս փառաստը Փարաշանեանի «Հրեզնէն»-ով և «Նամուս»-ով ճանչցուած Հայկական շաբաթականները իսկապէս ուրոյն և հարուստ արտեստ մըն է՝ իր աւելի քան կէս դարուան աւանդուածով:

Յրանստի օրաթերթերը մեծ հիացումով արտայայտուած են Ա. Փիլիպեանի «Մեմօր», «Տարուայ կղանկները» և «Միւր դարը» ժայռակներուն մասին, արձնէ կը յատկանշուին իրենց ներքին ուժով, ֆնարակաւորութեամբ և զնայելուական կիսամշակ յորհուածով:

«Ֆիլար»-ն նոյնպէս խանդավառութեամբ արտայայտուած է նաև Հ. Մալեանի «Հայր» ժայռակին մասին, որուն զիմարտը հերոսը համարուած է նախապատերազմեան ժամանակաշրջանի Ֆրանսացի Նշանաւոր դերասան Ռեմիտի հետ: Այս առիթով, յիշեալ օրաթերթը գրած է. «Այս շատ ժողովրդական ժայռակին արժէքը կը կայանայ մեզուանց իր մանրամասնութիւններուն մէջ, որոնք զուարճալի են, ծիծաղալար, խռովիչ և յուզող: Այս յարթը տրուած են այնքան կնքանի և նուազ ռեալ մը, որ այս ժայռակը դիտել ետք, ես այս փառաստին միւս ժայռակներն ալ դիտելու ցանկութիւնը ունեցայ»:

Հայաստանի մէջ նկարահանուած ժայռակներու կողքին, Ֆրանսական մամուլը նաև մեծ դիմացումով արտայայտուած է Ֆրանսական բնագործի ժայռակներին «Նամուս» հերոսը վերադարձի և «Հայաստան 1900» ժայռակներուն և պարսկական տաղանդաւոր բնագործի Արթր Յովհաննիսեանի «Ալիսուանց»-ին դիմելի Մ. Քայիլի վանքը և «Ազրիլը» գործերուն մասին:





ԿԻՆԹԵՐ ԿՐԱՍԱՒ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԳԵԱԸ

Աւելի քան տասնեակ ճշ լեզուներու թարգմանուած, միջազգային գրական կենտրոն մէջ Կանթոնտեօթ անուն է գերմանացի վիպասան Կինթեր Կրասաւ։  
25 տարի առաջ լոյս կը տեսնէր Կրասաւի «Քիլի-րիդեայ քմրուկը», որ անմիջական կամբաւ կը պարզուէր իրեն եւ կը նկատուէր նացիականութիւնն ու նազի Գերմանիան պատկերացնող յաղազարտի գործերէն մէկը։  
Եօթը վեպերու, վեց թատերախաղերու եւ քաղցածի բանաստեղծական ու յօդուածագրային

նախորդներու ներկեակ Կինթեր Կրասաւ Գերմանիոյ մէջ ծանօթ է նաեւ իրրու գծանկարիչ եւ քանդակագործ։  
Ան վերջերս առեան է քուչականցէ մը, որ իրմէ ներկայացուած են 80 քերականները (etchings), 48 վիճակագիր, 98 մտայնականներ եւ 27 քանդակներ։  
Կրասաւի գծանկարներն ու քանդակները յուշեմ կը բերեն այնպիսի մարիմներ (հիշակա ճաւղ կամ իրուելը), որոնց ծանօթ ենք իր գրականութենէն։

ՀԱՅՐԵՆԻ ԹԱՏԵՐԱՅԱՂԵՐ՝ ՀՈՒՆԳԱՐԵՐԵՆՈՎ

«Հայրենիքի ճայն» շաբաթաթերթի 26 Սեպտեմբերի թիւէն կ'իմանանք, որ երկու տարի առաջ, Պուտսդալտի «Եւրոպայ» հրատարակչատանը լոյս ընծայած է Հայրենի թատերադրանքներու ընտրու գործերէն կազմուած Հաւաքածոյ մը՝ Հայ ժամանակակից թատերագրութիւնը հունգար ըմբերպաներուն ծանօթացնելու նպատակով։  
Հաւաքածան կ'ընդգրկէ Սալաթէլ Յարու-

թիւնեանի շխտաւարը», Գերն Չէյթուցեանի «Անեմատիսար մարզը» եւ Փորո Յարութիւնեանի «Եւրոպայ» թատերախաղերը։  
Ս. Յարութիւնեանի յիշեալ գործը նաեւ առնուած է պատկերասփիւռային թատերի կամար պատրաստուած թատերագրութիւններու ցանկին մէջ եւ արժանացան՝ Կանդիտաստեղծու լիբրմ գունկիւթեան։

ՃԱՆ ԳԱՌՁՈՒԻ ՅՈՒՅԱՎԱՆԴԵՍԸ՝

«ՓԱՐԻՋ ՌԻՎԻՈՒՅԻ»

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՁ

ՀԱՐՅԱԶՐՈՅՏՆԵՐԸ



Գաղզուի «Կնոջ դիմանկարը»

Ֆրանսուայ անուանի գեղանկարիչ ժան Գաուզու (Գաուդի Զուլուեան) Մոսկուայի մէջ վերջերս տուած է ցուցանահէս մը, ուր ներկայացուցած է 100է աւելի աշխատանքներ:

Գաղզուի այս ստեղծագործութիւնները կենդանացած են երկինք ուղղուած մահաբեր հրթիռներու, ամառի թաղաքներու ու այրող տնտուներու մահաբեր տաղանդներուն վրայ:

«Աշխատանքներու մէջ, — կ'ըսէ Գաուզու, — իմ մտարւմներս կը կեդրոնանամ մտպկաւթեան փոխադրիքի շուրջ: Անձնապէս այս դասում հասակակիցս եմ եւ անոր հետ ապրած՝ անոր բոլոր սոցցիալներն աւ ուրախութիւնները: Յիշողութեան չեմ զնգուած ծրկրորդ Աշխարհամարտի արհաւիրքները: Այսօր, կորիզային պատերազմի սպիտակ կը սպանայ ամբողջ աշխարհին: Սակայն ես լաւատեմ եւ, կը հաւատամ տիեզերքին ներդաշնակութեան ու մարդուն ստեղծագործական ուժին: Կը յուսամ, որ պատերազմի սկզբանէրը այլեւս չի կրկնուիր»:

Ցուցանահէջին մաս կազմած են նաեւ ժան Գաուզուի Խորհրդային Հայաստան կուսարան ուղևորութեան տպագրութիւնները, ինչպէս նաեւ՝ Փարիզը, Փրովանսը, Վերսալը ներկայացնող քանդակներէ սեպանկարներ:

Իր Հիմնադրութեան Քուականէն սկսեալ (1953) «Փարիզ Ռիվուայ» ամէնէն աւելի վնասուած գրական հանգչաներէն մէկն է, մասնաւորաբար իր հարցադրոյցներուն համար:

Տուեալ հարցադրոյցները, որոնք կը յառկան նշուին իրենց լաւ պատրաստութեամբ եւ յաջող խմբագրութեամբ, միշտ ալ, աւելի ուշ, լոյս կը տեսնեն առանձին հատորներով: Վերջերս հրատարակուեցաւ այս շարքին վեցերորդը՝ «Գրողները աշխատանքի պահանջ — «Փարիզ Ռիվուայ»ի հարցադրոյցները» (խմբ. Նորմ Փիլմֆօն, «Վալյա» թիւիչ հրատարակատուն, 414 էջ):

Այս հարցադրոյցներուն զնգմէջէն ընթերցողը ո՛ր միայն կը ծանօթանայ տուեալ հեղինակներու անձին, զորոնքուն եւ մտածութեան, այլեւ՝ տեղեկ աշխատանքի եղանակին եւ առարկայ կամ գրական մտահոգութիւններուն:

Օրինակ, այս շարքին մէջ, ապա մը նուզեալ հան մրցանակակիր Գաուզուի կարգիս Մարքէզ կը գօղտի, որ իր վայելած միջազգային համբաւը զնաւած է գրական արտագրութեան, պատճառ դառնալով, որ ստեղծագործական ընթացքը դանդաղէ: «Կարծէ միլիոնաւոր այլեր կը նային քեզի, — կ'ըսէ Մարքէզ, — եւ չես գիտեր, թէ ինչ կը մտածեն»: Այլուր, բանաստեղծ Սթեֆան Սփենսըր, յետագարձ ակնարկով մը, հետեւեալ յայտարարութիւնը կը կատարէ. «Ընդ քանստեղծութիւններու մէջ կարեւոր մտք վերաւոր էր այն պատճառով, որ չէի գիտեր ի՞նչ ձեռքս բանաստեղծութիւն գրել»:

Հարցադրոյցներու վեցերորդ հատորին մէջ կը հանդիպինք վերջերս մահացած գրողներու, ինչպէս՝ Էլիզապէթ Գիլփի, Բեպեգա Ուենթի կամ ձեռն Գարտնըրը, ինչպէս եւ Յրրորդ Աշխարհի գրական ներկայացուցիչներուն, որոնց կարծիքներն ու լուսարանութիւնները որոշ լոյս կը սրբանեն վերջին տասնամեակին տակաւ աշխուժացող Հարաւային Ամերիկայի եւ Արեւելեան Նորագայի վրայասաններուն ստեղծագործական ուժակաւորութեան վրայ:

«ԱՅԱՆՊԱՍ ՊԻՐԻ ՄԸ»

LA MEMOIRE RETROUVEE

Քանի մը ամէն տառլ, Փարիզի Mercure de France հրատարակատունէն լոյս տեսաւ վերանիւայ խորագրերը կրող շունկան դիրք մը, որ ստարկաշաղան տուեալներէ աւաթորուած՝ լուսարժուակի տակ կ'առնէ Հալիպան Հարցի ներկայ շրջանին հետ աղբիւրուղ զանազան արարքներ: Այս դիրքին հեղինակները երկու Փրանսոցի

լրագրողներ են՝ Արևո Համբլին և ժան Միլէլ Պրէտ, որոնք Յեղատպանութեան ստեղծմանը մեկնելով՝ կը հասնին ժինչև սփեռքունայ ետ սերունդին պահանջները, ըլլան անոնք Յեղատպանութեան հետաշումը, ժողովրդային արժեքներու պահպանումը քէ Արևմտաւայտաւոր վերատիրացման պահանջը:

286 էջեր կազմուած «La Memoire Retrouvee» (վերստանումս յուրք) անուն այս հատորին առաջին 80 էջերը յատկացուած են 1915-1916ի Յիւնիին, Նեյկոյայուած են Հայտնականութեան զբաղաւորանքները և հայկական ու համառատանալը կողմին տեսակէտները: Ապա, Կեղծանկները փորձած են Քափանցել հայկական անբնկութեանը ներքին նայելուն, բայց զայն լուազայն կարենալ վերլուծելու համար, առաջին ներքին յուսած են անարեկելութեան զրդպատեանունը պրպակելու աշխատանքին:

Այս իսկ պատճառով, անոնք պատուած են միջազգային բազմաթիւ հրատարակութիւններէ, Հանդիպումներ ունեցած՝ Լիբանանի, Պարսկաստանի, Յունաստանի, Ճրանասիի և Քուրդիստանի զործող զանազան հաստատութեանց պատասխանատուներու և ազգային ղեկներու հետ:

Ճրանասիի այս լրագրողները փորձած են լուսարանել հիմնական երկու հարցերը...

Ա.) Օսմանեան կառավարութիւնը կայաց մը կատարմը ցեղատղամարտիմ կիրարկած է, քէ ոչ:

Բ.) Հայ անարեկելները իրազէտ անգրախմ սնիքի մը տրդարազաւ մարտիկնիմն կն, քէ ըմբռնողային անարեկելաւ կազմակերպութիւններու բազմաթիւ ինչպիսիք արտաքին միտմիտ գործակալները:

Mercure de France հրատարակչաւան հետ կապ հաստատելով՝ ըկայրեմիք օրաթերթը մեռք ձգած է յիշեալ հատորը անգլիերէնի Քարգմանելու և զայն միջազգային արտադրութեամբ արտաբերելու իրաւունքը: Քարգմանութեան աշխատանքը արդէն սկսած է:

### ՀԱՅ ԶՈՌԹԱԿԱՀԱՐՈՒՎԻ ՄԸ ՅԱԶՈՂՈՒԹԻՆՆԵՐԸ

Սփեռքունայ լուսակահարուելի Սանիկ Զարքրիան, որ արժանացած է բազմաթիւ մրցանակներու, վերջերս, Հոռմի համալսարանի ամբիթրատրոնին մէջ մեկնարանած է Պարիի և Փականիինի անգլիալի կտորներ, որոնք լուսակի համար յարեմուտ արժեքունական զրակնութեան մէջ կը յատկանշուին իրենց բարձր և բազմաձայն հարատուութեամբ:

Արտայայտչական լարուած արթնութիւն և զննողայուն եռնակիմանկ պահանջող այս գործերը 23 տարեկան լուսակահարուելի մեկնարանած է ամբողջական յալոյութեամբ:

### ՌՈՒՊՈՒՆ ԽԱՉԱՏԵՐԱՆԻ ՅԱԶՈՂՈՒԹԻՆՆԵՐԸ



Ռ. Խաչատրեանի մէկ ինքնանկարը

Յորհրդ. Հայաստանի ժողովրդական նկարչի կողմին արժանացած զեղանկարիչ Ռուզուի Յաչատրեան, որ խորհրդանայ զեղանկարչութեան տիրական զգեցերէն մէկն է, մեծ համբաւ նուաճած է այս ասորի, երբ անգլի ունեցած են անոր անհատական ցուցանանքները՝ Երևանի և Մոսկուայի մէջ: Այս զոյք ցուցանանքներուն, Հայրենի արուեստագէտը ներկայացուցած է ըստարտաբուղիի վրայ նկարած իր գործերը (զիմանկարներ և այլ նկարաշարեր), որոնք Հանդիսանեաներուն ուշադրութիւնը զրուած են իրենց զուտական յիզուածութեամբ և կատարելագործուած խորութեամբ:

Ճամեայ Ռուզուի Յաչատրեան կը նկատուի ստեղծագործական անուրջ ճակատագրի ահլ արւեստագէտ մը, որ նկարել սկսած է մանուկ հասակէն և մասնագիտական ոչ մէկ կրթութիւն ըտուցած է:

28 տարի առաջ, Աստրիոյ մէջ տեղի ունեցած Երեսուցիական Համալսարանային Փառատունին, պատանի Յաչատրեան կ'արժանանար առաջին մրցանակին: Այդ օրէն ի վեր ան կանանուր կերպով կը մասնակցի խորհրդային և միջազգային ցուցանանքներուն: Մեծ մրցանակներու արժանացած այս Հայրենի արուեստագէտին դործերուն ամբողջական ալգորմը լայն տեսած է վերջերս, Վնովնական նկարիչ կերտնակոն հրատարակչատուէն:

**ՍՓԻՌՈՒՔԱՆՑ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ՝  
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ**

Խորհրդային Հայաստանի պետական համալսարանի հրատարակչությանը ընթերցասեր հասարակության համար ներկայացնում է Վիկտորիա Կրիստինի Կրիստինի «Սփիրոուքս»-ը՝ հրեական համայնքի և Սեպուխրի գրողների մատենադարան լրջ առում առ զորքին առաջին հատորը խմբագրած է բանասիրական գիտությունների դոկտ. արժանագիր Գեորգի Սեպուխրի Գրքերի յառաջաբանն ու ներկայացուցած հեղինակներուն կենսագրականները զորած է բանասիրական գիտություններու դոկտ. Վառլու Վառլու Գրքերի յառաջաբանն:

Հատորը կ'ընդգրկէ օգիտագրական գրականության հիմնարկներն ու Երկրորդ Աշխարհամարտին հաջ հասակ նետած սերունդներու ներկայացուցիչները:

Գ. Սեպուխրի ստեղծագործությունները ընթացած է այն սկզբունքով, որ հարաբերական սահմաններու մէջ, անոր ընթերցողին պատկերացման տուեալ գրականության միտումները և առանձնատեսակները, մասնաւորապէս 1920-1930 թուականներու օգիտագրական հրատարակչական ուղղությունները՝ կարծիք և նախաընթացքները: Գիտագրական համառոտ տեղեկություններու կողքին՝ հատորը օժտուած է նաև յատուկ բառարանով:

Փողովածուին մէջ տեղ գտած են Յուդիթ Մընձուրի, Վառլու Երանյանի, Համասեղի, Վառլու Հայկի, Սեպուխրի, Արամ Հայկապի, Անդրանիկ Անդրեանի, Սիմոն Սիմոնի և ուրիշ արժանագիրներու գրականությունը ներկայացնող ընտրու պատմականները:

**ԹՈՐՈՆԹՈՅԻ «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի  
ԼՍԱՐԱՆԸ ԿՈՒ ՏԱՅ ԻՐ ԱՌԱՋԻՆ  
ՀՈՒՆՁՔԸ**

«Համազգային» Թորոնթոյի մասնաճիւղին վարչությունը երեք տարի առաջ հաստատած էր յատուկ լսարան մը, Հայագիտական ուսումնական մասցած Հայ մարդուց իրականացու համար Հայ մշակութային և Հայոց պատմության նուիրած դասարաններին համար լսարանը:

Լսարանը արդէն ունի երեք դասարաններ, ու

րոնք աճին Ուրբաթ Երկուր կը հաւաքուին Հ. Օ. Մ-ի մէջնորեայ վարժարանը և կը հետեւին ծրագրով նախատեսուած դասարաններին: Լսարանի մնայուն գաստիոսներն են ընկ. Մարգար Շարապիանեան և ընկ. Սեպուխրի Վահանեան, Յուդիթ Սիմոն, Հայ Կեդրոնի հանդիսարանին մէջ, տեղի ունեցած է լսարանի առաջին հունձարին վկայականներու բաշխման հանդիսարանը: Լսարանի գաստիոսներն ընթաց արտաւած են 18 հոգի: Հանգիստութեան հետեւած է պատշաճ հիւրասիրություն:

Այս առիթով խոսք անկելով, լրջանի տարրեր միտմանը ներկայացուցիչները զրուստած են Համազգայինի լսարանին գործունէութիւնը, ընդդէմով այն կէտը, որ արուած դասարանութիւնները մը միայն Հայ մշակութային և Հայոց պատմության կը օտարացնեն իրենց սեփականները, այլև՝ ազգային մեր արժեքներուն հանդէպ քննադատական հետաքրքրություն մը կ'առաջացնեն զազուստին մէջ:

**ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԱՎԱՆՆԵՐՈՒ  
ՆՈՐ ԳՈՐԾԵՐԸ**

Երգական խմբի Արիստակէսեան յորինակ է ստեղծութիւնը համար զրուստ Հայկական առաջին մենանուագը (սոնատ): Անոր այս երգ ստեղծագործութիւնը Հայաստանի երգչականներու ասան զարգացնին մէջ ներկայացուցած է տեղիովկարեան մրցոյթի զափնեկէր Վահէ Թեղեան:

Նոյն այս երկուրի ընթացքին, հասն սիրելի երգչականներ ներկայացուցած են իրենց երգ զործերը: Լեւոն Զատուկեանի դաշնամուրային մենանուագը ներկայացուցած է միջազգային մրցոյթի զափնեկէր Անահիտ Ներսիսեան: Գեղամ Չիճեանի թուրքական մենանուագը ներկայացուցած է Հայաստանի պետական մրցանակի և միջազգային մրցոյթներու զափնեկէր Մեդիտ Աբրահամեան:

Երկու թաղութաններու համար Արամ Խոչոյեանի վերաբարգրուած կտորը ներկայացուցած են Մեդիտ Աբրահամեան և Ֆելիքս Սիմոնեան: Իսկ Ջեմֆրիս Բարսեղեանի ընկերակցութեամբ, տեղիովկարեան մրցոյթի զափնեկէր Սուսաննա Մարտիրոսեան ներկայացուցած է երկուրը Սուրբիանի վոկալ-ստեղծագրական շարքը:

ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

**ԱՐԱ ՊԱԼԵՈՋԵԱՆԻ  
ՀԵՏԵՒԵԱԼ ԳՈՐԾԵՐԸ**

- Armenia Observed: An Anthology* ( New York, 1980 )  
*Portrait of a Genius and Other Essays* ( Los Angeles, 1981 )  
*The Armenians: Their History and Culture - Revised and Expanded*  
( New York, 1981 )  
*In the New World* ( New York, 1982 )  
*The Horrible Silence: An Autobiographical Novella* ( Los Angeles, 1982 )  
*The Call of the Crane/The Ambitions of a Pig* ( New York, 1983 )  
*Views / Reviews / Interviews* ( Los Angeles, 1982 )

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

- The Traveller and His Road* by Gostan Zarian ( New York, 1981)  
*Bancoop and the Bones of the Mammoth* by Gostan Zarian (New York, 1982)  
*The Gardens of Silihdar and Other Writings* by Zabel Yessayan  
( New York, 1982 )

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

**Ա Ր Ա Գ Ի Լ**

(Ալպոմ)

- Պեյրուք, 1984, Համազգայինի «Վ. Սեփեան» տպ., 80 էջ:

Խմբագիր՝ Պ. ՄնԱԳԵԱՆ

ԼԻՐԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.  
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.


ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամբիկեան տղար

بَاكِين  
 مجلة شهرية ادبية وثقافية علمية  
 المدير المسؤول  
 السيد ارين كارنيك قراغچيان  
**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN  
 Բ Ա Գ Ի Ն  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ  
 Խմբագիր  
 ԳՕՂՈՍ ՄԱՂԵԱՆ  
 Խմբագրության անդամներ  
 ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԻՐԵԱՆ  
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ  
 Վարչական պատասխանատու  
 ՎԱՉԷ ԲՐՈՒՏԵԱՆ  
 B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN  
 Tel. 296898



تشرين اول ١٩٨٤